

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР



МХИТАР ГОШ

# П Р И Т Ч И

Текст с комментариями  
и введение Э.М. ПИВАЗЯНА



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН • 1951



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՓԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ



Ա

ՄԵԻԹԱՐ ԳՈՇ



# ԱՌԱԿՆԵՐ

Տեխնոլոգիայի համեմատությամբ  
և ներածությունը էՄ. ՊիվազՅԱՆԻ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ՁԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՆԿԱՆ 1951



## Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մխիթար Գոշը միջնադարյան ամենանշանավոր հեղինակներից և Վերածնություն շրջանի գործիչներից մեկն է: Նա եղել է բեղմնավոր հեղինակ, միաժամանակ և հասարակական նշանավոր գործիչ, որ ապրել է իր ժամանակի հասարակական-քաղաքական շահագրգռություններով և արձագանքել դրանց՝ գրելով ու անձնական գործունեություններ: Նրա գրչին են պատկանում մատենագրության տարբեր ճյուղերին վերաբերող մի տասնյակի չափ աշխատություններ, որոնց մեջ ամենից ավելի մեծ արժեք են ներկայացնում Դատաստանագիրքն ու Առակները:

Մխիթար Գոշն է, որ հայ իրականության մեջ հիմք է դրել աշխարհիկ իրավաբանական գրականությունը: Նրա Դատաստանագիրքը, սրբյես այդպիսին, լայն տարածում ու գործածություն է ունեցել դարեր շարունակ:

Պակաս մեծ չէ Մխիթար Գոշի գերը հայ գեղարվեստական գրականության պատմության մեջ: Մինչև Մխիթար Գոշը մենք չենք ունեցել գեղարվեստական արձակ, իր բացարձակ մտքով փերցրած, գեղարվեստական արձակը՝ համադրված է եղել պատմագրության հետ և պատմագրության մեջ: Մեր պատմիչների մոտ պետք է փնտրել գեղարվեստական արձակ, բայց նրանց «Պատմութիւն»-ներն էլ հիմնականում պատմություն, պատմագրություն են և ոչ գրական երկեր: Պատմիչների նպատակը չի եղել ստեղծել գրական-գեղարվեստական երկեր: Նրանք նպատակ են դրել գրել որոշ ժամանակաշրջանի պատմություն, որը և կերտելիս, նայած հեղինակի ստեղծագործական կարողություններին, այս կամ այն չափով իրենց երկերը օժտել են գեղարվեստական ստեղծագործությանը հատուկ տարրերով, և կամ օգտագործել են ժողովրդական բանահյուսությունը, որ գեղարվեստական երանգ է տվել նրանց երկերին:

Առաջին արձակ երկը հայ գրականության մեջ, որ պատ-

կանում է զուտ գեղարվեստական գրականության տեսակին, Մխիթար Գոշի առակների ժողովածուն է։

Առակների հեղինակը իր ժողովածուն կազմել է նպատակ դնելով ստեղծել հենց գեղարվեստական երկ — «կերպարանել գճշմարտութիւն», որ նույնն է, թե արտացոլել իրականությունը գեղարվեստորեն, կամ, ինչպես հեղինակն է հասկանում, «բարոյապէս և առասպելորէն», այսինքն այլաբանորեն. իսկ դա իրականության գեղարվեստական արտացոլման եղանակներից մեկն է։

Պարզ է, որ Մխիթար Գոշը նշանակալից դեր է կատարել հայ դպրության պատմության մեջ և հատկապես հայ գրականության պատմության մեջ։ Չնայած դրան, նա դեռևս մնում է որպես մեր դեռ քիչ ուսումնասիրված հեղինակներից մեկը։ Գոշի մասին եղած ուսումնասիրությունները վերաբերում են նրա Դատաստանագրքին, իսկ Առակները հատուկ ուսումնասիրության նյութ չեն դարձել։ Չեն լուսաբանված Առակների հետ կապված շատ հարցեր, որոնց մեջ կարևորներից մեկը նրանց հեղինակի հարցն է, մի հարց, որ սերտորեն կապված է ժողովածուն կազմելու ժամանակի, ինչպես և հայ Վերածնության հարցի հետ։

(Բայց Առակների հեղինակի (ուրեմի և ժամանակի) հարցի ուսումնասիրության կարիքը գուցե և չգզացվեր, քանի որ այդ Առակները մեզ են հասել՝ ձեռագրերում կրելով Մխիթար Գոշի անունը, եթե բանասիրության մեջ որոշ փաստերի հիման վրա Գոշի՝ դրանց հեղինակը լինելու նկատմամբ կասկած հարուցված չլիներ։ Դրա համար հիմնականում հիմք է ծառայել այն փաստը, որ Կիրակոս Գանձակեցին, — Մխիթարի աշակերտի՝ Վանական Վարդապետի աշակերտը, — շատ մանրամասն պատմելով Մխիթարը կենսագրությունը, նրա աշխատությունները թվիլիս, չի հիշում Առակները։ Այդ հիմք ունենալով, մի քանի բանասերներ (Գ. Զարպհանալյան, Վ. Վ. Տեր-Մինասյան, Վ. Վ. Բաստամյանց) տարակույս են հայտնել Առակների Գոշին պատկանելու վերաբերյալ։ Բայց միաժամանակ այդ կասկածը փարատել են նրանով, որ Առակների ձեռագրերի վերնագրերում իրբև հեղինակ հիշվում է Մխիթարի անունը։

Այս հարցի վրա մեր բանասիրության մեջ մանրամասն կանգ է առել Ն. Յա. Մառը «Сборники притч Вардана» աշխատության մեջ. Մառը իր հետազոտության II գլխում ուսումնասիրելով այդ հարցը, այն եզրակացության է հանգում,

որ Գոշի անունով մեզ հասած և նրա անունով հայտնի Առակ-  
ների հեղինակը Գոշը չէ, ընդ որում Մառը նպատակ չի դնում  
լուծել առակների այդ ժողովածուի հեղինակի հարցը և Մխիթա-  
րին միայն պայմանականորեն թողնում է որպես ժողովածուի  
հեղինակ:

Ձեռագրերի մանրակրկիտ քննութիւնը հերքում է Մառի  
այն կարծիքը, թե գոյութիւն է ունեցել Առակների այլ խմբա-  
գրութիւն, ասրբեր այն խմբագրութիւնից, որ ծանոթ է Վե-  
նետիկյան տպագրութիւնների միջոցով: Հայկական ՍՍՌ  
Մինիստրների Սովետին կից Ձեռագրատան (Մատենադարանի)  
№ 4066 ձեռագրում, որ գրված է 1283 թվին, առակները՝ Վենե-  
տիկյան հրատարակութիւնների հետ համեմատած՝ ունեն միայն  
լեզվական-սճական տարբերութիւններ:

Առակների ժողովածուն ձեռագրերում, բացի Մխիթար Գոշից,  
կապված է նաև Գոշիկ անվան հետ, իսկ ժողովածուի մի բաժի-  
նը—Առակը ստեղծականքը՝ Հովհաննես Երզնկացու անվան հետ:\*  
Ուսումնասիրութիւնը պարզում է, որ Առակների Գոշիկ Վահա-  
կանի և Ծործորեցու անունների հետ կապվելը սոսկ թշուրիմա-  
ցութիւն արդյունք է, ձեռագրական սովորական շփոթութիւն  
հետևանք:

Առակների ժողովածուն իր մոտ 800 տարվա գոյութիւն ըն-  
թացքում հիմնականում փոփոխել է անփոփոխ: Այս փաստը, ա-  
ռակների տարբերակների բացակայութիւնը, ժողովածուի կուռ  
կառուցվածքը վկայում են, որ այդ ժողովածուն մի, անհատ  
հեղինակի ստեղծագործութիւն է: Առակների ձեռագրերի մեծա-  
մասնութիւն վերնագրերում որպես հեղինակ Մխիթար Գոշի  
անվան հիշատակութիւն զորավոր փաստը, Մխիթարի մյուս  
աշխատութիւնների և Առակների մեջ արտահայտված նման  
հայացքների առկայութիւնը, նրանց մեջ եղած նման (հաճախ  
բառացի նույնը) արտահայտութիւնները հերքում են Մառի  
կարծիքը և հաստատում, որ Առակների հեղինակը Մխիթար  
Գոշն է:

\* \* \*

Բազրատունիների ժամանակ Հայաստանը պարում է հա-  
մեմատարբար խաղաղ ու հանգիստ կյանք, խաղաղ զարգացման  
մի ժամանակաշրջան: Դա հայ ժողովրդի տնտեսական յլերելքի

\* Տես սույն գրքի էջ 33:

մի շրջան էր: Հայաստանի աշխարհագրական դիրքը՝ միջազգային առևտրական մեծ ճանապարհների վրա ընկած լինելը, նւրպաստում էր տարանցիկ առևտրի զարգացմանը, որ կարևոր գործոն էր քաղաքների զարգացման համար: Ծաղկում են միջազգային նշանակութուն ունեցող այնպիսի քաղաքներ, ինչպիսին՝ Անի, Դվինը, Կարսը, Արծնը և այլն:

Միջազգային տարանցիկ առևտրին մասնակցում է Հայաստանը տեղական արդյունագործութայն արտադրանքներով, Լայնանում է ներքին շուկան՝ միջազգային ու տեղական առևտրի ու արդյունագործութայն զարգացման հիմքի վրա, և զարգանում է փողային տնտեսութունը: Տեղի են ունենում փոփոխութուններ հասարակական կյանքում — ազնվականութայն ու եկեղեցական իշխող դասերի կողքին բարձրանում է մի նոր դաս՝ քաղաքային առևտրականութունը: Առաջ են գալիս հասարակական նոր հարաբերութուններ, սրվում է դասակարգային պայքարը, և սկիզբ է առնում Ֆեոդալիզմի քայքայումը:

Վ Բագրատունյաց շրջանում և ապա՝ սելջուկյան արշավանքներից հետո՝ Ջաքարյանների ժամանակ տնտեսական կյանքի վերելքը պայմանավորում է կուլտուրայի տարրեր ճյուղերի մեծ զարգացում:

Սոցիալ-տնտեսական կյանքի փոփոխութայն հետ համընթաց և կախված նրանից՝ տեղի է ունենում փոփոխութուն նաև աշխարհայացքի և աշխարհըմբռնման մեջ: Ֆեոդալիզմի սկիզբ առած քայքայումը և տնտեսական կյանքի վերելքը առաջ է բերում աշխարհիկ փարթամ կյանք հասարակութայն որոշ խավերի համար և սեր դեպի բնութունն ու կյանքը, որ գրականութայն մեջ արտահայտութուն է ստանում Նարեկացուց սկսած (հատկապես նրա տաղերում):

Սոցիալ-տնտեսական կյանքի այս փոփոխութունը պայմանավորում է մտածողութայն, ուրեմն և իդեոլոգիայի աշխարհականացում:

10-րդ դարից սկսած սկսվում է պայքար նոր՝ հակառակ քրիստոնեական, եկեղեցուց անկախ մտածողութայն համար, որն արտահայտվում է աղանդավորական շարժումների ձևով, որոնք Հայաստանում այդ շրջանում մեծ թափ ու ծավալ են ստանում և դառնում Վերածնութայն խթաններից մեկը:

Իդեոլոգիական ձևերից գրականության մեջ աշխարհականացումն արտահայտվում է գրական նոր տեսակների երևան գալով և գրականության բովանդակության ու թեմատիկայի փոփոխումով: Գրական նոր ձևեր էին, արդեն, Նարեկացու «Մատենան ողբերգութեան»-ն ու տաղերը, Սարկավազի «Բան իմաստութեան...»-ը, ասպ նաև Շնորհալու «Ողբ Եղևսիոյ»-ն՝ հայրենասիրական բովանդակությամբ: Առաջ են գալիս բժշկական գրականություն և աշխարհիկ իրավաբանական գրականություն, որի (վերջինիս) հիմնադիրը Մխիթար Գոշն է, և որը հասարակական կյանքում կատարված իրավական փոփոխությունների օրենսդրական հիմնավորումն էր:

Վերածնության շրջանում գրականության մեջ առաջ են քաշվում նոր հայացքներ բնության ու հասարակական կյանքի նկատմամբ, արտացոլվում են հասարակական կյանքի նոր կողմեր, սոցիալական հարցերը դառնում են հետաքրքրության առարկա և նրանց տրվում է նոր, եկեղեցական մտածողությունից ու պատկերացումներից անկախ, հաճախ նրան հակառակ բացատրություն: Աշխարհականանում է գրականության թեմատիկան ու բովանդակությունը:

Աշխարհականացումը գրականության մեջ իր արտահայտությունն է գտնում նախ և առաջ ժողովրդական ոգու և մտածողության ներմուտքով հենց եկեղեցականի ստեղծած գրականության մեջ, որին դեռևս պատկանում էր գրականության մենաշնորհը, և այդ կատարվում է նախ ժողովրդական գրական տեսակների օգտագործման միջոցով:

Գրականության մեջ տեղ գտած ժողովրդական գրական տեսակներից առաջիններից մեկը առաին է: 11—12-րդ դարերում առաինները լայն տարածում են ստանում և, ինչպես պարզվում է Մագիստրոսի մի վկայությունից\*, դառնում են զպրոցական հատուկ դասընթացի նյութ: Բայց հայ գրականության մեջ իսկական առաինների առաջին ժողովածուն կազմողը Մխիթար Գոշն է: Սակայն նա սոսկ առաիններ հավաքող ու ժողովածու կազմող է: Մխիթարը միաժամանակ հայ առաջին առաինագիրն է: Ավելին, նրա առաինները համեմատաբար քիչ շփման կետեր ունեն ինչպես օտար առաինագիրների, այնպես էլ Գոշից հետո եկող հայ առաինագիրների առաինների հետ, որոնց սյուժեները ըստ մեծի

\* Տես «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 105:

մասին նույնն են՝ պայմանավորված առակների ծագումնաբանական և ժանրային առանձնահատկությամբ: Գոշի առակները, նրանց սյուժեները մեծ մասամբ ինքնագիր ու օրիգինալ են, թեև Կնրա առակներն էլ ունեն իրենց աղբյուրները: Սակայն Մխիթարն Կր աղբյուրները օգտագործելիս ստեղծագործական վերամշակման է ենթարկել դրանք, փոխել աղբյուրների գաղափարական բովանդակությունը, հարմարեցնելով իր գաղափարախոսությունը և փոփոխություն է մտցրել նույնիսկ հենց իր աղբյուրի սյուժեի մեջ, որով և նրա աղբյուր ունեցող առակները դառնում են ինքնուրույն, ինքնաստեղծ:

Մխիթարի համար ամենից ավելի կարևոր աղբյուր են հանդիսացել ժողովրդական առակները: Փաստերը ցույց են տալիս, որ ինչպես Մխիթարից առաջ, այնպես էլ նրա ժամանակ հայ ժողովրդի մեջ պատմվել են առակներ, որոնցից երեք տասնյակից, ավելի օգտագործել է առակագիրը իր ժողովածուն կազմելիս: Բը Մխիթարը իր այդ առակները հորինել է օգտագործելով ժողովրդական առակները, երևում է այն բանից, որ 20-րդ դարում մեր բանաստեղծները գրի են առել առակներ, որոնց տարբերակները կան Գոշի ժողովածուում: Նշանակալից է այն փաստը, որ Մխիթարի այն առակները, որոնց զուգահեռները գրի են առնվել 20-րդ դարում, դրանց տարբերակները կան Վարդանյան ժողովածուներում, որտեղ, ինչպես հայտնի է, մտել են բազմաթիվ ժողովրդական առակներ անմշակ ձևով:

Համեմատություններ անցկացնելով Մխիթարի ժողովածուի 87 («Արջ և աղուէս և քահանայ»), 98 («Աղուէս քահանայ»), 60 («Անփորձ սքեշամամ»), 58 («Ձմերուկ և անմիտ սյր»), 87 («Աղուէս և գայլ կուրացեալ»), 164 («Տամպատեցի կտաւագործ»)\* և այլ առակների ու նրանց ժողովրդական տարբերակների կամ զուգահեռների միջև, այն եզրակացությունն ենք հանգում, որ Մխիթարի առակների զգալի մասը ծագում են ժողովրդական բանաստեղծությունից: Եւ հայ առաջին գրողն է, որ վրականություն մեջ մտցնում է ժողովրդական գրական տեսակ՝ առակը և, որ ավելի կարևոր է, մշակում է ժողովրդական առակներ: Եվ դա Մխիթար Գոշի ամենամեծ ծառայություններից մեկն է հայ գրականության պատմության մեջ:

\* Տես այդ առակների ժողովրդական զուգահեռները Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի Ֆոլկլորի սեկտորում պահպանող անտիպ ժողովրդական առակների մեջ:



Մխիթարի կողմից ժողովրդական առակների մշակման փաստը կարևոր նշանակություն ունի մի այլ տեսակետից ևս: Հայտնի է, որ 13-րդ դարի նշանավոր առակագիր Վարդան Այգեկցու գրչին պատկանող առակներում չի գգացվում ժողովրդական առակների մշակում: Վարդանի անունով տարածում գտած առակների ժողովածուներում ժողովրդական առակները մուտք են գործում միայն հետագայում, սկսած 14-րդ դարից: Ուրեմն, 12-րդ դարի մեր առաջին առակագիրը մշակել է ժողովրդական առակներ, ապա մոտ 2 դար հետո միայն, մենք նորից տեսնում ենք ժողովրդական առակների մուտք գրականության մեջ: Մի փաստ, որ խոսում է հօգուտ Մխիթար Գոշի և էական նշանակություն ունի նրա աշխարհայացքի և գաղափարախոսության բացահայտման, ինչպես նաև միջնադարյան հայ արձակի զարգացման ընթացքի պարզաբանման համար:

Առակների իր ժողովածուն Մխիթար Գոշը կազմել է ընթերցողների լայն շրջանների համար: Այդ պարզ երևում է նրա մի հիշատակարանից. «Թէպէտ անըմբոն ասացեալքդ կարծի, սակայն թանձրամտաց առաւել ակորժելի երևին, որոյ աղազաւ սակաւք յօժարեցաք գրել»: Այստեղ, ուրեմն, Մխիթարը բացահայտում է իր ժողովածուի ստեղծման նպատակը, որ է՝ ընթերցանության գիրք ներկայացնել «թանձրամտաց», աչ գիտունները, ասել է թե՛ ժողովրդի ներքին խավերի, աշխարհտիր ընթերցող լայն շրջանների համար, մի բան, որ իր ժամանակի համար քաղաքական պահանջ էր ներկայացնում:

Սակայն Մխիթար Գոշի իր ժամանակի համար այս համարձակ քայլը, գրականության մեջ ժողովրդական գրական ժանրի օգտագործումը, սոսկ առակների ժողովածու կազմելու մեջ չի պարփակվում: Նա ոչ միայն օգտագործում է ժողովրդական գրական սեսակը, այլև իր ժողովածուի մեջ մտցնում է բուն ժողովրդական առակներ վերամշակմամբ: Ֆոլկլորից քաղած առակների սյուժեների օգտագործումը եկեղեցական կամ հոգևոր կոչումով գրական գործչի կողմից, որքան էլ այս վերջինս խորշի աշխարհիկ բաներից, առակները գրի «քան գաշխարհականացն վարիլ սովորութեամբ», իր հետ պետք է բերեր նաև ժողովրդական, այսինքն աշխարհիկ ոգի ու մտածողություն:

Նվ խկապես, Մխիթարի ֆոլկլորային ծագում ունեցող առակները, որքան էլ ենթարկված հեղինակի զգալի վերամշակ-

մանը և ստացած քրիստոնեական-կրոնական մեկնություն, մեծ մասամբ պահպանել են իրենց նախնական աշխարհիկ բովանդակությունը, որից ավելի լայն ու հեռուն գնացող եղբակացություններ կարելի է հանել, քան այդ անում է ժողովածուի հեղինակը, ըստ իր աշխարհայացքի ու նպատակին, և թեև գրված են գրաբար լեզվով, հաճախ ունեն ժողովրդական (խոսակցական) ոճեր ու արտահայտություններ:

Վերածնության շրջանի գրականությունը տարբերվում է նախորդ գրականությունից իր թեմատիկայով, նրա բազմազանությամբ և արտահայտած գաղափարներով: Այս շրջանում գրական ստեղծագործությունների նյութ են հանդիսանում հասարակական հարցերը, տարբեր դասակարգերի փոխհարաբերության, նրանց պայքարի և այլ խնդիրներ. խնդիրներ, որոնք չէին կարող առաջ քաշվել նախավերածնության շրջանի գրականության մեջ՝ կրոնական գաղափարախոսության բռնակալության պայմաններում: Այս նոր թեմատիկայով ու նոր բովանդակությամբ գրված առաջին գրական երկերից մեկը Մխիթար Գոշլի Առակների ժողովածուն է:

Մխիթարի առակները մեր առաջ ըաց են անում մի ամբողջ էպոխայի պատկեր, այնտեղ մենք հանդիպում ենք հասարակության տարբեր խավերի, դասերի ու դասակարգերի ներկայացուցիչների, նրանց փոխհարաբերությանը, պատկերված այլաբանորեն: Առակները մեջ հեղինակը շոշափում է սոցիալական հարցեր, որով նրա ժողովածուն առանձին կարևորություն ու արժեք է ստանում:

Առակների մեջ արտահայտված սոցիալական խնդիրներին է վերաբերում Մ. Աբեղյանի 1935 թվին լույս տեսած «Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ» աշխատությունը, որտեղ հեղինակը նպատակ է դրել ցույց տալ, «թե ինչպես է դժադրվում հասարակական կյանքի պատկերն առակների մեջ»: «Նա առակների հիման վրա ցույց է տալիս «ազնվականության և աշխատավոր ուսմիկ դասի հարաբերությունը և երկրորդի պայքարն առաջինի դեմ», «աշխատավորության կռիվը հոգևորականության դեմ», «հոգևորականության հայացքը հայերի և այլազգիների իրար հետ հարաբերության վերաբերմամբ»\* և այլն: Այսպիսի հիմնական նը-

\* Մ. Աբեղյան, «Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ», Երևան, 1935, էջ 10—11:

պատակ հետապնդելով, Արեղյանն իր աշխատութեան մեջ չի բացահայտում Առակների հեղինակի գաղափարական դեմքը. Մխիթար Գոշի աշխարհայացքն ու գաղափարախոսութիւնը, նրա սուբեկտիվ վերաբերմունքը սոցիալական այդ խնդիրներին, ինչպես նաև՝ Առակների մեջ արտահայտված շատ գաղափարներ ու հայացքներ, որոնք կարևոր են Մխիթար Գոշին, որպես մտածողի բնորոշելու համար, և դրանով իսկ ժամանակի աշխարհայեցողութիւնը պարզարանելու տեսակետից:

Այս պատճառով ավելորդ չենք համարում այստեղ համառոտ կերպով անդրադառնալ Մխիթարի առակները սոցիալական բովանդակութեանը, ուշադրութեան կենտրոնում առնելով նրանց հեղինակի աշխարհայացքն ու գաղափարախոսութիւնը և վերաքննելու որոշ հարցեր, որոնք, մեր կարծիքով, այլ մեկնաբանութիւն պետք է ստանան:

Մխիթար Գոշի առակներում արտացոլված է ժամանակակից կյանքի իրական պատկերը, — սոցիալական անհավասարութիւնը, հասարակութեան ներքին խավերի սոցիալական ինքնագիտակցութեան արթնացումը:

50-րդ (Մ) առակից պարզ երևում է սոցիալական անհավասար դրութիւնը, սոցիալական շերտավորումը, այլև՝ սոցիալական պայքարի առկայութիւնը. Մարդիկ քննում, դատում ու դատապարտում են իշխաններին, իշխողներին, չարիքների պատճառ համարում նրանց, ստեղծում «անկարգութիւն» և այլն. նրանք սկսել են «տրտնջել» թագավորներից և նույնիսկ աստծուց: «Հանճարեղս զմեզ լինել կամի առակս, — գրում է հեղինակը ի առակի մեկնութեան մեջ, — և հնազանդս Աստուծոյ և թագաւորաց, և ոչ տրտնջել զանճառ խնամոցն Աստուծոյ և ոչ զծածուկ խորհրդոց թագաւորաց»: Տրտունջ, որ մի դար հետո Ֆրիկի մոտ արտահայտվեց առաջին դեմքով:

Մխիթարը, սակայն, քարոզում է հնազանդութիւնը — «Զի հնազանդել պարտիք և ոչ քննիչք լինել, զի մի անկարգութիւն լիցի»:

Մի այլ առակում Գոշը խրատում է «սպասավորներին» չտրտնջալ «տերերի» դեմ:

«Նրատէ առակս զքրթնջող սպասաւորս, որք շատ կարծեն զինքեանցն, քան զտերանցն զոր առնուն, այլ ուսեալք յիմաստնոց գիտեն՝ զի սակավ է ինքեանցն»: (Առ. 2):

Ինչպես նախորդ առակից, այնպես էլ այս առակից պարզորեն երևում է աշխատավորութեան, ժողովրդական մասսաների

կեղեքվող վիճակը և այդ վիճակի ինքնագիտակցումը: Իհարկե, հեղինակի նպատակը չի եղել ցուցադրել այդ. նա աշխատավոր դասակարգի գաղափարախոսը չէ, բայց չի կարելի ասել, թե նա համակրական վերաբերմունք չունի նրա նկատմամբ:

«Յայտնի է միտք առակիս. զի չարք յառաջնորդաց յաշխարհայնոց և եկեղեցականաց՝ տանջելով գնահազանդեալս, և ոչ յայլոց պահեն ի վտանգէ: Եւ ըստ արժանոյն անկեալք ի չարիս՝ Աստուծոյ գոհութիւն մատուցուք՝ զի ոչ ի մէնջ եղև»: (Առ. 26):

Իշխանները ոչ միայն օտար կեղեքիչներին չեն պահպանում իրենց «հնազանդեալներին», այլև իրենք նրանց չեն խնայում: Մխիթար Գոշի հայացքով ժողովուրդը պարտավոր է հնազանդվել իր իշխողներին, բայց վերջիններս էլ պարտավոր են նրանց ապահովել օտար կեղեքիչներին ու վտանգից:

Եթե այդ չի կատարվում, իշխողները չեն ապահովում իրենց «հնազանդեալներին» անվտանգությունը, հեղինակի տեսակետով այդ չի նշանակում, թե վերջիններս պետք է անհնազանդություն ցույց տան: Զար իշխանները, աշխարհական թե եկեղեցական, պետք է պատժվեն,՝ բայց ոչ թե նրանցից տառապող ժողովրդի ձեռքով, այլ աստվածային պատիժով:

Առակներին մեկուկ մի մի խրատում է «չարի ակն ունել» հենց բարի, «քաղցր» տերերին:

«Զբարս տերանց առակս յայտնէ, զի ոչ է պարտ յամենայն ժամու բարի ի նոցանէ գտանել, թէպէտ և քաղցր իցեն. այլ երբեմն և չարի ակն ունել արժան է»: (Առ. 27):

Մխիթարը ծաղրում է իշխաններին, որոնք հափշտակում են իրենց հնազանդյալների ունեցվածքը:

«Զագք անկեղաց ասեն ցծնողս իւրեանց. Ընդէ՞ր նման արծուոյ և բազէից՝ ի կենդանիս մեզ ոչ որսայք, այլ զմեռելոց ոսկերս մեզ բերէք կերակուր: Եւ նոքա ասեն. Որդեակք, վասն այն Աստուած արար զմեզ երկայնակեաց, զի ոչ զկենդանիսն սպանանեմք, այլ շատիմք մեռելօքդ, նման քահանայից, և ոչ ըստ օրինակի իշխանաց՝ զկենդանեաց յափշտակեմք»: (Առ. 28):

Վերջապես՝ Մխիթարը շատ մեծ կարծիք ունի բուն ժողովրդի, հասարակության ցածր խավերի ուժի մասին, որոնք կարող են «զօրանալ» և «յաղթեն հզօրաց»:

«Զբոյն մըջեան արջ փորէք, և լեզուաւ ժողովէք և ուտէր: Եւ հնարի մըջիւն սատակել զնա. երթեալ առ պիծակ և գոռելս և մօեխ և շանաճանճ և բրէտ, և առ նմանք սոցին, և աղաչէ օգնել իբրև աղգայինք: Յաւակցեն՝ հաբկանեն զաչս և զլսելիս արջուն. և հարկանէ գլուխ զքարի, և նեխի և որդունք ևս ծնանին. և ի սաստկութենէ ցաւոց՝ զբերան բացեալ գոչէք, և նոցա մտեալ յորովայնն՝ խոցստեն զաղիսն. և նեղեալ պիմէ ի հոսանս ջրոյ, և անչափ ի ներքս մտեալ՝ հեղձանի:

Զօրութիւն առակիս այսպիսի է. զի հզօրք զտկարս արհամարեն, և ոչ երկնչին, սակայն իմաստութեամբ զօրանան փոքունք և յազթեն հզօրաց. Եւ այս իմաստութիւն է՝ ի փոքունց իբրև ի մեծամեծաց երկնչելը:

Ըստ հեղինակի, «տկարներին» չպետք է արհամարհել, որովհետև նրանք ընդունակ են «իմաստութեամբ» զօրանալու և նույնիսկ հաղթելու «հզօրաց», այլև պետք է երկնչել նրանցից «իբրև ի մեծամեծաց»: Այլ կերպ ասած՝ Մխիթարը խրատում է իշխողներին իրենց «հնազանդեալներին» հետ չվարվել այնպես, ինչպես արջը մըջունի հետ՝ քանզի նրա բունը, հակառակ դեպքում նրանք ևս ենթակա են «հեղձանիլ ի ջուր»:

Ուրեմն, Մխիթարը չլինելով աշխատավորութեան գաղափարախոսը, միաժամանակ որոշ համակրական վերաբերմունք ունի նրա նկատմամբ: Նա իր առակների մեջ ունի ստորին պատկերել է իրականում գոյութուն ունեցող սոցիալական անհավասար դրութիւնը, աշխատավոր դասի վիճակը, վերջինիս պատկարզային գիտակցութեան արթնացումը, նրա փոխհարաբերութիւնը իշխող դասի հետ և այլն: Սակայն նրա նպատակը չի եղել սոցիալական իրականութեան ուսումնասիրական նկարագիրը ներկայացնել: Վայս ամենը խրատողի դերում հանդես եկող առակախոսի մոտ կատարվել է ինքնաբերաբար, օրեկտիվորեն:

Մխիթարը ուսումնասիրել է նաև աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների հարաբերութիւնն ու նրանց ներքին պայքարը: Այդ տեսակետից հետաքրքիր է նրա ժողովածուի Զ առակը:

«Երկիր հայեցեալ ի բարձրութիւն լերանց՝ համարձակեցաւ լինել և երկին. և ոչ կարաց զլուսաւորս ընդ ինքեամբ առնել նման երկնի և լուսաւորել:

Յանդիմանէ նշանակա զաշխարհական ոմանս, որ փքացեալ ի ճոխութիւն իւրեանց, զքահանայից կամին յափըշտակել զպատիւ. սակայն լուսաւորին՝ քան լուսաւորեն, նման երկրի, զի լուսաւորի՝ քան լուսաւորէ»:

Գոշի ժամանակ, ուրեմն, հոգևորականությունը իր նախկին դիրքն ու հեղինակությունը չունի: Աշխարհիկ ֆեոդալները համարձակվում են քահանաներից (==հոգևորականությունից) «յափշտակել զպատիւ», «փքացեալ ի ճոխութիւն իւրեանց»: Հասարակական կյանքում տեղի ունեցած տեղաշարժի արտահայտությունն է այդ երևույթը:

Որքան էլ հեղինակը, իր բառով ասած, հանդիմանում է այդ տիպի աշխարհականներին և բարձրացնում է հոգևորականութեան դերը, այնուամենայնիվ, նա արդեն զուսպ վերաբերմունք ունի աշխարհիկ իշխանութեան նկատմամբ՝ նրանց հարաբերութեան հարցում: Այդ երևում է ԺԳ առակի մեկնությունից:

«Նշանակ առակիս այսպիսի է. զի թագաւորական ազգ թէպէտ փառավոր է՝ երկրաւորօքս ճոխանայ, որք հասանուտք են, որում թթենիդ է նշանակ: Իսկ քահանայական տոհմ թէև ազքատ իցէ, մեծապատիւ է հոգևորօք, և արժան է զուգիլ ընդ թագաւորական տոհմի»:

Մխիթարը նույնիսկ ընդունում է եկեղեցու կախածությունը աշխարհիկ իշխանությունից. «Բարեկարգս կամի առնել առակս զթագաւորս, ըստ պատշաճի վիճակել զիշխանս, նմանապես և եկեղեցիս»: (Առ. ՀԶ):

Առակներից շատ պարզ երևում է, որ այլևս չկա նախկին կրոնական երկյուղածությունը, մարդկանց հետաքրքրում է աշխարհիկ կյանքը, նրանցից շատերը թեև դառնում են միայնակեաց կամ կրոնավոր, բայց շուտով թողնում են այդ՝ վերադառնալով աշխարհիկ կյանքի (առ. ԾԴ): Հաճախ նույնիսկ ծաղրում են կրոնավորներին ու երկյուղածներին, արհամարհում նրանց «իբրև զչափաւորս և անպիտանս ի վարս աշխարհի» (առ. ԽԸ), որի համար ԼԳ առակի մեկնութեան մեջ նրանց հանդիմանում է Մխիթարը:

«Յայտնապէս ցուցանէ առակս՝ թէ յոյժ՝ անմիտք են որ մոռանան, եթէ բնութեամբ մահկանացու է ազգ մարդկան, և պատրեալք յերևելի մեծութիւնս՝ ծաղր առնեն զարս երկիւղածս և զկրօնաւորս. ուստի յանդիմանին ի

նոցունց անմատուցիւն նոցա, և ինքեանք գիտելով զապականութիւն երկրաւորացս՝ ոչ պատրին, այլ ճնշեալ և երկիւղիւ միշտ ներգւնին»:

Աշխարհիկ կյանքի ձգտումը ուժեղացել է ոչ միայն աշխարհական մարդկանց մոտ, այլև հենց կրօնավորների, որի համար այդպիսիներին հանդիմանում ու ծաղրում է Մխիթարը:

«Դէմք առակիս առ այնտիկ է, որ ի մահուանէ զանգիտեալք ասեն, թէ զսնծինս տեառն նուիրեալ եմք՝ բնակիլ յանապատ. զոր ի դէպ իսկ ասէ՝ թէ այդպիսեացդ տեղի կրօնաւորք են և ոչ վայրապար շրջիլ յաշխարհի, որում ոչ խնայէ, այլ ըմբռնէ»: (Առ. ՃԺԶ):

Հոգևորականութիւնն անպրում է բարքերի անկում, կրօնավորները ժլատ են (առ-Ձէ), ամբարտաւան (առ. ԻԹ) ազան և նույնիսկ կաշառքով հաղորդում են «զպսոնիկս և զպիղծս», որոնց եկեղեցին մերժում է:

«Ձագան քահանայից առակս տայ տարացոյց, զի զպսոնիկս և զայլս ևս պիղծս մերժեն յեկեղեցոյ և դարձեալ կաշառք ընդունին և հաղորդեցուցանեն»: (Առ. ՃԻԱ):

Այսպիսով, Մխիթարի առակների մեջ շատ պարզ զգայվում է հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալների ներքին պայքարը, հոգեվորականութեան բարքերի անկումը, որոնց բացահայտումով, ցուցադրումով ու քննադատութեամբ հեղինակը նրանց նկատմամբ ժխտական վերաբերմունք չի ցուցաբերում, այլ հետապնդում է իրատեղու և ուսուցանելու միջոցով նրանց հետու պահել բարոյական, վերջին հաշիւով՝ քաղաքական կործանումից, ճիշտ այնպես, ինչպես Քոկաչիոն երկու զար հետո՝ եվրոպական գրականութեան մեջ:

Մեզ համար, ինչպիսի, ներկա դեպքում՝ ավելի կարևորը իրականութեան այն ռեալիստական պատկերն է, որ ներկայացնում է Մխիթար Գոշը առակների մեջ:

Մխիթար Գոշի ժողովածուի մեջ մեծ տեղ են բռնում այնպիսի առակներ, որոնք նվիրված են կենցաղային հարցերին, մարդկային առօրյա հարաբերութիւններին: Այս առակները արժեքավոր են ու առանձին նշանակութիւն ունեն, քանի որ մենք շատ սակավ տեղեկութիւններ ունենք հին ու միջնադարյան շրջանի կենցաղային խնդիրների վերաբերյալ:

Նկատենք, որ այդ առակները ևս ինքնանպատակ չեն և գրված են հասարակական անհրաժեշտութիւնից գրված: Հա-

սարակական կյանքում տեղի ունեցած փոփոխություններն անհրաժեշտ էին զարձեւել ընկերակցական նոր առաջ եկած հարաբերությունների կարգավորումը. Մխիթարը դրանց անդրադառնում և աշխատում է կարգավորել թե իր Դատաստանադրքում՝ օրենսդրական միջոցներով, և թե Առականերում՝ խրատական միջոցներով:

Այս տեսակետից ուշադրութեան արժանի են այն առակաները, որոնց մեջ ներկայացվում են արհեստավորները, և որոնք մեզ պարզ պատկերացում են տալիս ժամանակի համաբարությունների մասին:

Այդ առականերից նկատելի է, որ գոյություն ունի աշխատանքի խոր բաժանում, հանդես են գալիս տասնյակից ավելի մասնագիտութեամբ արհեստավորներ, տարբեր արհեստավորներ ծաղրում են միմյանց՝ իրենց արհեստը գերադաս համարելով մյուսներից և այլն:

**Բերենք երկու օրինակ:**

«Սաղախորդ ոմն էանց ընդ դուռն մորթեգործի, և սկսաւ այպանել և չարահոտ զնա կոչել: Եւ նորա ելեալ թշնամանէր ասելով. Եթէ յոսկեգործաց և կամ յայլոց ևս նախատ լինէի՝ ի դէպ էր. դու ժահահօտ քան զիս, զի՞մրդ համարձակիս»: (Առ. ՃԿԹ):

«Ի թագաւորէն Ադեքսանդրէ մեծարեալ լինէր երկաթագործ, քան զհիւսն, յորժամ ապարան նմա շինէին: Եւ նախանձ ընդ նմա կալան հիւսն և հողագործ. ոմն ասէր զբնակութիւն առնել, և ոմն՝ զկերակուր: Եւ նորա լուեալ, իմաստասէր գորով, կոչէ և այլ ևս իմաստունս ի մէջ նոցա առնել ընտրութիւն պատուոյ: Եւ ասեն նոքա, եթէ առաջին ասացաւ Ադամայ գործել զերկիր, բայց դարբնութիւն կանխաւ ցուցաւ, և զի զիւր առնէ զգործի և նովաւ զհիւսան և զմշակի, վասն որոյ առաջին է պատուով. իսկ հողագործն երկուցն պէտս ունի: Եւ այսպես համոզեն զնոսա չնախանձել»: (Առ. ՃԿԵ):

Վերջին առակը միաժամանակ միջնադարյան քաղաքի ու դասերի միջև առաջացած հակասութեան արտահայտությունն է, պատկերված քաղաքային ու գյուղական արհեստները ու արհեստավորների հակադրութեամբ: Գոչի ժամանակ, ուրեմն, արդյունառարժանական աշխատանքը առանձնացվում էր երկրագործականից: Այստեղից պարզ է Մխիթարի այդ առակաների ճանաչողա-



կան մեծ արժեքը Հայաստանի տնտեսական զարգացման պայմանների ուսուսմասիրութեան համար միջնադարում:

Հետաքրքիր և շատ կարևոր է, թե ինչ կարծիք ունի Մխիթարը տարբեր արհեստների կարևորութեան ու գերադաս լինելու մասին: Մխիթարի կարծիքով տարբեր ժամանակներում տարբեր արհեստներ ու արհեստավորներ կարող են մեծարելի լինել:

«Փոփոխելի առակս ցուցանէ զնիւթականքս զամենայն, զի ոչ միշտ պատուին՝ զի երբեմն մեծարի ոմն և երբեմն՝ անպատուի: Վասն բազում անգամ վտանգի սովոյն՝ նիւթք ամենայն խոնարհին ընդ ձեռամբ ցորենոյ: Նմանապես և յայլան է տեսանել. ըստ այսմ և յարուեստաւորս պատահի, որովք չէ պարտ ամբարհաւածել»: (Առ. ՃԿԼ-ի մեկնութիւնը):

Այս կամ այն արհեստի ու արհեստավորի գերադաս կամ մեծարելի լինելու չափանիշը, ըստ Մխիթար Գոշի, հասարակութեան օգտակարութեան մեջ է: Պղնձագործի և երկաթագործի վեճը ծերոց ատյանում լուծում են հօգուտ երկաթագործի, հետևելյալ փաստարկով.

«Հասարակաց օգտակարն պատուական է»:

Մրանից պետք է եզրակացնել, որ հեղինակի համակրանքը քաղաքային դասի կողմն է\*: Մխիթարի կարծիքով՝ «ոչ ինչ պատուական, քան զհասարակաց օգուտն» (առ. ԿԷ), մի բան, որ հատուկ է վերածնութեան շրջանի խոշոր գործիչներին ու գրողներին և որի վրա ուշադրութեան չի դարձվել Գոշի մասին եղած ուսուսմասիրութեանների մեջ:

Մխիթարի ժամանակ Հայաստանի զանազան մասերում կային, առակախոսի արտահայտութեամբ ասած, «այլազգի» մի քանի իշխանութիւններ (էմիրութիւններ), որոնք շփման մեջ էին հայերի հետ: Բնական է, որ Գոշը նրանց հարաբերութիւնների, որ մեծ մասամբ եղել են թշնամական, վերաբերյալ առակներ ստեղծեր՝ հանդես գալով խրատներ տվողի դերում: Ինչպես պետք է վարվել թշնամու ձեռքն ընկնելիս: Կարդանք հետևյալ առակը.

«Նոխազի առեալ յայծից եմուտ ի դժուարս քարանձաւաց, և տեսեալ գայլուն, և եկեալ հարցանէ, թէ զի՞նչ այդը

\* Դատաստանագրքում (էջ 318) նա գրում է. «Արք քաղաքացիք առաւել բան զգեղջուկս պատուիցին» և այլն:

վործէք: Եւ ասեն. Միայնակեաց աստ լինի՞ք զքառասուն  
օր: Եւ հավատացեալ՝ զնաց:

Յուցանէ առակս դիպող ստութեամբ ազատիլ ի վտանգէ,  
որ է անեպեր. (Առ. 27):

Ուրեմն, հեղինակի կարծիքով կարելի է և պարսավելի չէ  
(անեպեր) թշնամիներէց ազատվել «դիպող ստութեամբ»:

Բերենք մի ուրիշն էլ:

«Անասուն կենդանեաց եկեալ ասեն առիւծուն. Ամե-  
նայնիւ իբրև զիշխան վարիս, այլ միով իբրև զզոզ, զի  
զհետ քո անյայտ առնես: Եւ իբրև զվտանգեալ ի նմանէ՝  
հնարեցան խափանել: Ընդ այսմ տրտմեալ յայտնի շրջեր,  
և դիտելով նոցա՝ ազատեալք ի նմանէ լինէին:

Հնարս առակս ուսուցանէ, ի զովութեանց և ի պարսա-  
ւանաց յոմանց ազատեալ ի չարէ»: (Առ. 27):

Առակախոսի տեսակետով թշնամու ձեռքից նուշինսկ փախ-  
չելով ազատվողը «ոչ է երկչոտ, այլ արի»:

Մխիթարի համար բնորոշ է այնպիսի խաղաղասիրության  
գաղափարը, որ դուրս է գալիս խաղաղասիրության քրիստոնեա-  
կան ուսմունքի սահմաններից: Ըստ նրա՝ «թէ թագաւորութիւն  
յայլմէ ոչ մեղիցի ի թագաւորէ, և բաւական կեանս ունիցի, բարի  
է խաղաղասէր լինել», բայց «թէ հարկաւորի ի թշնամեաց, անար-  
գութիւն է ոչ տալ պատերազմ»: (Առ. 42):

Նույն խաղաղասիրությունը նկատելի է Դատաստանագրքի  
մեջ. «եթէ պատահի (թագաւորին, է. Պ.) պատերազմել ընդ այլ-  
ազգիսն հարկաւորաբար, յորժամ սուրն վերասցլ՝ մի տոցէ առ-  
նել սպանումն...»\*:

Մխիթարի համար, ինչպես նկատել է պրոֆ. Մ. Մկրչյանը,  
բնորոշ է ուժեղ պետականության ձգտումը:

Վերածննդի շրջանում հայ իրականության մեջ գլխավո-  
րապես արտաքին պատճառների հետեանքով (սելջուկյան, սպա-  
թաթարական արշավանքներ) չստեղծվեց միասնական պետու-  
թյուն, թեև դրա համար կային հասարակական-տնտեսական  
նպաստավոր պայմաններ: Սակայն ժամանակի նշանավոր մտա-  
ծողների (Լաստիվերոցի, Հովհ. Սարկավազ, Շնորհալի) հա-  
յացքներում զգացվում է այդպիսի միապետություն ստեղծելու  
ձգտումը: Ավելին. Առակների հեղինակը, արդեն, ունի որոշակի  
հայացք պետական կառուցվածքի վերաբերյալ:

\* Դատաստանագրք, էջ 307:

Ֆերենք նրա ժողովածուի առաջին առակը:

«Աստուած յառնելն երբեմն զարարածս՝ երկեաւ հակառակիլ և խառնեաց զժանրն ընդ թեթևին, զտկարն ընդ հօրին. զի թէ հակառակ դարձցին՝ առ միմեանս, և ոչ ընդ արարչին:

Սրատէ առակս զթագաւորս՝ կարգել զմեծամեծս և զնուաստս ընդդէմ միմեանց. զի մի ընդ թագաւորս, այլ ընդ միմեանս պատերազմեսցին»:

Սրանից երևում է, որ Մխիթարի ժամանակ կենտրոնական պետական իշխանության և առանձին ֆեոդալական տների միջև եղել է ուժեղ պայքար, որ թուլացրել է պետութեան հզորութունը: Ուժեղ պետականութեան կողմնակից հեղինակը նշում է այն ուղին, որով հնարավոր է վերացնել այդ պայքարը — կարգել թուլերին ուժեղների դեմ, նրանց հակամարտութիւնը բորբոք պահել և զբանով հասնել թագավորական իշխանութեան, կենտրոնացած պետականութեան անսասանութեանը:

Ուժեղ պետականութեան ձգտումը արտահայտված է նաև Մխիթարի ԿԸ առակում, որտեղ հեղինակը ավելի է պարզում իր հայացքը պետական կառուցվածքի մասին:

«Հարկաւոր ցուցանէ առակս զերկրորդն լինել թագաւորի և բնաւ կարգաց, զի ոմն զբարեկարգութիւն պահիցէ և միւսն զմարտսն վանիցէ»:

Թագավորը պետք է հավասարակիցը չունենա, այլ «երկրորդը», որին հաջորդելու են մյուս աստիճանները: Իշխաններից յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին պաշտոն կենտրոնացած պետական սխտեմում, ըստ որում նրանց այդ պաշտոններում նշանակույր թագավորն է.

«Բարեկարգս կամի առնել առակս զթագաւորս, ըստ պատշաճի վիճակել զիշխանս, նմանապես և յեկեղեցիս»:

Նույն միտքն է արծարծվում է առակում ևս, որտեղ ներկայացված է հեղինակի ցանկացած պետական սխտեմը — թագավոր, նրան ենթակա իշխաններ, պետական աստիճանավորներ, ապա հասարակութեան տարբեր խավերը՝ «իւրաքանչիւր յիւրաքանչիւր գործ»:

Մխիթարը Դատաստանագրքի երկրորդ մասի (Աշխարհական օրհնք) Ա հոդվածում գրում է.

«Բայց գիտելի է զի թագաւոր տիրապէս Աստուած է և անուանակիր միայն մարդիկ, ոչ ճշմարիտք. սակայն թագաւորք այնոքիք անուանին, որք ազգաց իւրեանց տիրեն

միանգամայն և յայլոց հարկ առնուն յազգաց, և եթէ ոչ՝ ոչ հարկիցին»։\*

Այսպիսով, Մխիթարը և՛ Դատաստանագրքում, և՛ Առակներում ուժեղ, կենտրոնացած պետականութեան գաղափարն է պաշտպանում, որի համար նրա ժամանակ ստեղծվել էին հասարակական-տնտեսական և քաղաքական նպաստավոր պայմաններ: Առաջինի մասին արդեն խոսք եղավ, քաղաքական պայմանների մասին պետք է ասել հետևյալը: Չաքարյանների ժամանակ Հայաստանը վայելելով վրաց արքունիքի հովանավորութիւնը՝ փաստական անկախութիւն ուներ: Չաքարյանները իրենց համարում էին Հայաստանի տերն ու տնօրենը, նպասակ ունեին տիրել ամբողջ Հայաստանին, իրենց կոչում էին «թագավոր», «շահինշահ», իրենց պետութիւնը՝ «ինքնակալ պետութիւն», իսկ ֆեոդալական կալվածատերերի կախումը նրանցից շատ ուժեղ էր:

Միանգամայն պարզ է, որ իշխող դասակարգի գաղափարախոսը լինելով հանգերձ, Մխիթարը որպէս մեծ մտածող, իրականութեան նկատմամբ լայն հայացք ունի և տեսնում է հեռուն:

Մենք տեսանք, որ Գոշի առակների թեմատիկան հիմնականում կազմում էին հասարակական ու կենցաղային խնդիրները, դասակարգերի, հասարակութեան տարբեր դասերի ու խավերի և անհատների փոխհարաբերութեան հարցերը, որոնք նորութիւն էին մեր գրականութեան մեջ:

Առակների հեղինակը ուշագրութեան կենտրոնում է առնում, նրան գրավում ու հետաքրքրում է անհատը, մարդը: Մխիթարի առակներն այնպիսի ստեղծագործութիւններ չեն, որոնց մեջ պատկերվում են անմարմին ու գերազույն աշխարհը, այստեղ արդեն աշխարհիկ կյանքն է ու ժամանակաշրջանը: ~~Նրանց մեջ իրական ու կոնկրետ մարդն է նկարագրվում՝ այլաբանական եղանակով, իբրև գյուղացի, քաղաքացի, ազնվական-իշխան, արհեստավոր, կրոնավոր, թագավոր և այլն, յուրաքանչյուրը իր կացութեան սուանձնահատկութիւններով: Սակայն Վերածնութեան շրջանի գրողները, որպէս անցման շրջանի գրողներ, այս կամ այն չափով կրում են նախկին աշխարհայացքի ազդեցութիւնը: Մխիթար Գոշի մոտ մի զգալի չափով դեռևս~~

\* Դատաստանագրք, էջ 299—300: Այդ մտքի համար տես ամբողջ Ա հոդվածը, էջ 299—310:

նկատելի է քրիստոնեական կրոնի սկզբունքների վերարտադրութ-  
յունն ու քարոզը: Նրա մի շարք առակներ այդ կրոնի սկզբ-  
բունքների քարոզման համար էլ ստեղծված են և ունեն կրոնա-  
կան թեմաներ ու բովանդակություն: Դրանց մեջ հեղինակը քա-  
րոզում է այսբանաբանական կյանքի ունայնությունն ու անցո-  
ղիկությունը և դրա հետ կապված՝ մարդկանց մահկանացու լի-  
նելն ու մարդկային փառքի սնոտի լինելը (առ. Գ, Լ, ԻԸ և այլն),  
զղջում, բարեգործություն ու վշտակցություն, մեղքից խուսա-  
փում, խրատ կրոնավորներին (առ. ԻԲ, ԻԹ) և այլն, և այլն:

\* \* \*

Մխիթար Գոշն իր ժողովածուն կազմել է ուսուցողական նպատակներով, որի համար առակների ժանրը ամենից հար-  
մարն էր: Նա առակներն օգտագործում է համողիչ դարձնելու համար իր բարոյախոսությունը, որ նրա հիմնական նպատակն է:

Առակների պատմողական մասի կամ պատմվածքի նյութը հեղինակը մեծ մասամբ վերցրել է կենդանիների կյանքից, որ-  
պես ամենահարմարը այլաբանության համար, և սակավ դեպ-  
քերում՝ բույսերի ու մարդկանց կյանքից:

Ժողովածուում առակները դասավորված են սրտը կարգով, ըստ գործող անձերի կամ նյութի: Բացի այս մասնավոր բաժա-  
նուններից, առակները բաժանված են երեք մեծ խմբերի՝ բարո-  
յական, առասպելական և ստեղծական:

† † Առաջին խմբի առակների մեջ պատմվածքի նյութը ոչ  
այնքան կենդանիների, բույսերի և այլ գործող անձերի կյանքն  
է, որքան նրանց հատկությունները, բարույթը, որոնք դրվել  
են որպես առակի պատմողական մաս և դրանից հանվել է խրա-  
տական եզրակացություն: Այս պատճառով Գոշի այս առակները  
մեծ մասամբ այլաբանական համեմատություններ են սակավ  
գործողությամբ (օր. ՂԵ, ԻԲ առակները և այլն):

Երկրորդ խմբի (Առասպելական կոչված) առակների նյութը  
վերցված է գլխավորապես կենդանիների կյանքից: Այստեղ ա-  
վելի ուժեղ է գործողությունը, քան Բարոյական առակների մեջ,  
սակայն Գոշը երբեք երկարաբան չէ. նա գործողությունը շարու-  
նակում է այնքան, մինչև որ հնարավոր լինի եզրակացություն  
հանել, ընդհանրացում կատարել:

Ս Երրորդ խմբի (Ստեղծական) առակների մեջ թեև գործո-  
ղությունը ուժեղ է, բայց ծավալուն չէ և չի ընդգրկում գործող

անձանց հիմնական ու էական գծերն ամբողջովին: Միայն մեկ կամ երկու բնորոշ գիծ է ցուցադրվում կարճ պատմվածքի մեջ (դա առակի ժանրային առանձնահատկությունից է բխում), որը և պայմանավորում է գործողություն միասնությունը առակի պատմվածքում: Գոշի առակների սյուժեները սովորաբար կազմված են երկու մոտիվից, իսկ մեծ մասամբ միայն մեկ մոտիվ ունեն: Առակներից յուրաքանչյուրի մեջ պատմվում է մեկ, հազվադեպ միայն երկու կամ ավելի միջադեպ: ¶

Եթե Բարոյական կոչված առակներում Մխիթարը վերցնում է գործող անձերի հատկություններից այնպիսիները, որոնք հանրաժանոթ են, ապա Առասպելական առակների մեջ (մասամբ նաև Ստեղծական առակներում) վերցնում է այնպիսի գործող անձեր, որոնց սոսկ անունները պատրաստի հատկացողություններ են, ընդհանրապես համբավներ (աղվես՝ խորամանկություն, նապաստակ՝ վախկոտություն, աղամյի՝ միամտություն և այլն):

Մխիթարի համար բնորոշ է գործող անձանց իրենց հատկություններին անհամապատասխան գործողություն կամ անբնական դրություն մեջ գնելը, որով ստեղծում է ծիծաղելի, հետաքրքրաշարժ դրություններ: Այսպես, ՃԳ առակում՝ «փիղ երթեալ առ քաղղեացիս յուսուռնն աստեղաբաշխութեան», ՃԱ առակում՝ «փիղ ետ գորգի իւր ցՊղատն ուստնել իմաստասիրութիւն: Եւ առաջին հրահանգէր զնա գծիլ ի լսարանին, և նա ոչ կարէր, ասաց նմա և պղլուխ խոնարհեցուցանել յերկիր, և սչ զայն ևս կարաց...»:

Մխիթարին, որպես առակագրի հատուկ են սեղմությունը, պարզությունն ու կոնկրետությունը: Սակայն նրա մոտ սեղմությունը հաճախ անցնում է սահմանից, հանգելով սխեմատիզմի և չորություն՝ ֆլապսելով առակի կենդանությունը և գործողություն զարգացմանը:

Սեղմ ու հակիրճ է ոչ միայն առակների պատմելաձևը, այլև Գոշի յեզունն ու ոճը, բայց միշտ կենդանի, հատու և զբավիչ:

Մխիթարի մոտ առակի գլխավոր նպատակն է բարոյախոսությունը, նա հետապնդել է կոնկրետ ու գործնական նպատակներ: Դրանով պետք է բացատրել նրա առակների հրապարակախոսական բնույթը: Էնդինակի համար առակը ծառայում է որպես հրապարակախոսության միջոց՝ զբևեռելու առաքինությունները, ծաղրելու մարդկանց թերությունները, մտրակելու չարիքը,

արհամարհելու վախկոտութիւնը և այլն: Որոշ առակներում էլ, որոնք ուսուցողի ներշնչումն են, հեղինակը հանդես է գալիս իբրև սոսկ բարոյախոս-հրապարակախոս:

Մխիթարի առակների կոնկրետ ու գործնական նպատակներ ունենալու հանգամանքով պետք է բացատրել այն, որ նրանց մեկնութիւնները չունեն լայն ու խոր բնդհանրացումներ, որ հատուկ է առակին:

Եթե Վարդան Այգեկցին առաջին անգամ իր ճառերի ու քարոզների մեջ բարոյակրթական նպատակներով օգտագործել է առակներ, դրանով ստեղծելով փաստորեն առանձին գրական տեսակ՝ առակավոր ճառեր, ապա Մխիթար Գռչը օգտագործել է առակի ժանրը, իբրև ինքնուրույն գրական տեսակ՝ ավելի լայն նպատակներով, դրանով իսկ վավերականութիւն տալով առակին, որպես գրական տեսակի հայ գրականութեան մեջ:

## ԱՌԱԿՆԵՐԻ ԲՆԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

**Ս.** տպագիրները.—Մխիթար Գոշի Առակներն ամբողջական ձևով ունեցել են երեք տպագրություն, երեքն էլ Վենետիկի Մխիթարյանների ձեռքով՝ Վենետիկում—1790, 1842 և 1854 թ. թ.:

Առաջին (1790 թ.) հրատարակությունը կատարված է Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի № 1091 ձեռագրի հիման վրա:

Գիրքն ունի այս վերնագիրը.

ԱՌԱԿՔ

ԵՒ

ՈՏԱՆԱԻՈՐՔ

ԽՐԱՏԱԿԱՆՔ

ԱՄՁԵՆԱԳ Ի ՆՈՒՆԵՆՑ ՄԵՐՈՑ

Ի ՀՐԱՇՆՔ ՈՒՍՈՒՄՆԵՍԷՔ

ՀԱՄԲՈՒՐՑ

Տպագրեալ յամի տն 1790

Գիրքը պարունակում է Գոշի Առակները, Շնորհալու 6 և Կարապետ վարդապետի մեկ ոտանաւորները: Ունի նախաբան,— «Բան առ վերծանողս»,—որի մեջ հրատարակիչը (Ձոհրաբյան) խոսելով Աղուեսագրքի մասին\*, Վարդանա առակները համարելով «Գեղջուկ՝ իմաստիւք՝ և անհարթ շարագրութեամբ բանից», գրում է.

«Յայս սակս լաւագունի ևս հախանձ բերեալ մեր. ոչ ունե-

---

\* Այստեղ Աղուեսագիրքը համարվում է Երեմիա Վարդապետի կազմածը.— «Կազմեալ ի յետին ժամանակս յԵրեմիայ վարդապետէ ումեմնէ»,— մի տեղեկություն, որ հետո անցավ եվրոպացի հայագետներին (Դյուլ-Մերիլ և այլք) և որը թյուրիմացութեան արդյունք է: Երեմիա վարդապետը Աղուեսագրքի 1698-ի «Կեղծ—էջմիածնեան» կոչված տպագրութեան հրատարակիչն է:



լով առ այժմս ի ձեռին դալ ևս առաւել հնագոյն ի բուն ի հայկականս մեր բարբառս յօրինեալ, ահա զսոյն զայս կարևոր վարկաք ի լոյս ընծայեալ տպագրութեամբ, զՄխիթարայ մեծի գաշխատասիրեալն. այն ո՞ր սնուանի ընդ երևելի մատենագիր վարդապետս ազգիս՝ առ երկոտասաներորդ դարու: Որ լայց յայլոց գործոց և վառաջիկայ առակս բարոյականս ձեռնամուխ եղև յօրինել համառօտ ոճով՝ բացահայտ և ընտիր շարադրութեամբ՝ ըստ կանոնաց արուեստին յերկրեալ, մինչև մարթ լինել համբալկաց լեզուիս փոյթ ունել և հետևութեան կամ աշակերտութեան սորին ի հայկաբանութեան. բայց յանյց սրբ ուրեք ուրեք ազաւաղեալ թուին ի գըչաց»:

Ձեռքի տակ չունենալով այն ձեռագիրը, որից կատարված է տպագրությունը, զժվարանում ենք ասել՝ ուղղել է հրատարակչը յուր նկատած գրչական աղավաղումները, թե ոչ: Բայց որոշ նշաններ ցույց են տալիս, որ տպագիրը ձեռագրի արտատպությունն է, առանց աղավաղումների սրբագրութեան: Այդ երևում է նրանից, որ տպագրի տարբերությունները, սրտնք մեր կագմած տեքստում մտել են այլընթերցումների մեջ, մեծ մասամբ կան մյուս ձեռագրերում:

Առականները սկսվում են 7-րդ էջից հետևյալ վերնագրով.

Առակք առասպելականք և բարոյականք. որ կերպարանէ զճմարտութիւն: Ասացեալ մեծ վարդապետին Մխիթարայ մականունն Գոշ

Հրատարակչը գրքի վերջում գրել է «Ցանկ անուանց, յորոց կազմեալ եղեն առակք», — առակաների գործող անձերի (բույսերի, կենդանիների, լեռների, գետերի և այլն) անունների այբուբենական ցանկը, նշելով, թե որ առակում է խոսվում ավյալ գործող անձի մասին:

Երկրորդ տպագրությունը (1842 թ.) կատարված է առաջինից, ըստ որում գրքի վերջին մասում եղած «ոտանաւորք»-ի փոխարեն տեղավորված են Ողոմպիանու առակաները («Առակք Ողոմպիանու»):

Երրորդ տպագրությունը (1854 թ.) երկրորդի արտատպությունն է Ողոմպիանու առակաների հետ միասին\*:

Վերջին երկու տպագրությունները ևս ունեն նույն «Ցանկը»:

\* Ցաշյանը հիշում է 1852 թ. տպագրություն. կարծում ենք տպագրական սխալ է, փխ. 1854 («Յուցակ», էջ 1118):

Այս երեք հրատարակութիւններէ համեմատութիւնը պարզեց, որ նրանց մեջ առանձին տարբերութիւններ չկան. վերջին երկու հրատարակութիւնները արտասպաւութիւն են առաջին հրատարակութեան (երկրորդը՝ առաջինի, երրորդը՝ երկրորդի):

Առակաների Վենետիկյան տպագրութիւններէ հիմքում ընկած է, ըստ Մառի, Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի № 1091 ձեռագիրը (Bibl. Arm. S. Zazari, Ը. Բ. № 1091): Ձեռագրի մասին Մառը հաղորդում է. «Даты не имеет, но судя по виду, она XVII века, если не более поздняя»\*.

Ուրեմն, Առակաների երեք տպագրութիւններն էլ փաստորէն կատարված են միայն մի, այն էլ նորագույն գրչագրից, ուստի ընական է, որ այն ձեռագիրը, որից կատարված է տպագրութիւնը, ունենար գրչական սխալներ, աղավաղումներ ու բացթողումներ, որոնք և մտնելին տպագրի մեջ: Այսպէս Ղառակում տպագրի մեջ բաց է թողնված մի ամբողջ նախադասութիւն, որով և անհասկանալի է դառնում առակի բովանդակութիւնը: Բացթողումը, սակայն, գալիս է տպագրի հիմք հանդիսացող ձեռագրից, քանի որ մեր համեմատած այս առակը ունեցող 5 ձեռագրից (ABCDm) երկուսը (BC) համաձայն են տպագրի հետ: Ի՞նչ առակի վերջին նախադասութիւնը տպագիրը բաց է թողել, այնինչ ունեն ըստ ձեռագրերը: Մեծ թիվ են կազմում ոճական ու լեզվական այլընթերցումները (գրեթէ ըստ առականերում), որոնք ընթերցողը կարող է տեսնել մեր կազմած ձեռագրի այլընթերցումների բաժնում, ըստ որում մեծ մասամբ տպագիրը պահպանել է ոչ ճիշտ ընթերցվածները:

Բացի վերոհիշյալ երեք տպագրութիւններից, որոնք ամբողջական են, Գոշի առականերից շատերը մտել են քրեատոմատիաների մեջ ու դասագրքերում:

1. 18 առակ «Ընտիր հատուածք քաղեալք ի գրոց նախնի և արդի մատենագրաց հայոց... ի պէտս աշակերտաց Լազարյանց ձեմարանի Արևելյան լեզուաց»-ի մեջ (Մոսկվա, 1849 թ., էջք 12—18)—ԻԴ, ԽԹ, ԿԹ, Հ, ՀԴ, Ձ, ՁԱ, ՁԶ, ՂԱ, ՃԶ, ՃԵ, ՃԹԴ, ՃԻ, ՃԼԶ, ՃՀԴ, ՃՁԲ, ՃԻԳ, ՃԿԱ առակաները:

2. Կ. Կաստանյանցի «Ծաղկաքաղ արձակ և չափածոյ բա-

\* Н. Марр, Сб. пр. Вардана, I, ст. 68.

նից. Շրջան առաջին»։ 1 հրատարակութեան մեջ (Տփլիս, 1881 թ.) մտել են հետեյալ առակները։

- ա) ՃԼԲ—«Անծեղ» վերնագրով։
- բ) ՃԾԴ—«Երկիր ի փոքունց» վերնագրով։
- գ) ՃԻԳ—«Բու և արծիւ» վերնագրով։
- դ) ՃԿԱ—«Հայրենիք» վերնագրով։

Նույնի երկրորդ տպագրութեան մեջ (1884 թ. Տփլիս)՝ առաջին երեքը նույն վերնագրով և Զ՝ «Տրտունջ» վերնագրով։

Զորրորդ տպագրութեան մեջ (1920 թ. էջմիածին) մտել են Զ, ՃԾԴ, ՃԻԳ առակները՝ նույն վերնագրերով։

Առակները դրված են առանց մեկնութունների, բացի ՃԾԴ-ից։

Թե «Ընտիր հատուածք»-ում և թե «Ծաղկաքաղ»-ում առակները բերված են վեներտիկյան տպագրութեանը։

Բ. Թարգմանութեանը. — Մխիթարի առակները թարգմանվել են ֆրանսերեն, ռուսերեն և աշխարհաբար լեզուներով։

Ա. ֆրանսերեն. — ընդամենը 16 առակ թարգմանել է Le Vaillant de Florival-ը և հրատարակել 1847 թվին լույս տեսած „Coup d’oeil sur l’Arménie“ աշխատութեան մեջ (12 առակ— Գոշի ժողովածուի ՃԿԲ, Գ, Դ, Ե, ՃԾԴ, Զ, ԶԱ, ԻԸ, ՃԻԸ, ԴԵ, ՃԶ և է առակների թարգմանութեանը—էջք 42—45-ում, և 4 առակ—Ժ, ՃԺ, ԶԲ և ԶԳ՝ տիտղոսաթերթի ներսի երեսում)։ Ընդհանուր առմամբ թարգմանութեանը հարադատ է բնագրին և հաջող, միայն տեղ—տեղ թարգմանիչը իրեն թույլ է տվել սրուշ ազատութուն (գործող անձերի փոփոխութեան, օր. Ժ. առակի թարգմ. մեջ նոնեհից փոխարինված է դժնիկով — le nerprun, և այլն), պահպանելով սակայն բնագրի ոգին։

Գոշի առակներից մի քանիսը ֆրանսերենի է թարգմանել նաև F. Macler-ը, բայց այս թարգմանութեան մասին ոչինչ ասել չենք կարող, քանի որ չկարողացանք գտնել „Journal Asiatique“-ի այն համարը (ser. IX, tom XIX, 1902) որտեղ տեղավորված է նրա աշխատանքը („Choix des fables arméniennes attribuées à Mechitar Goch“, վերնագրով)։

Բ. ռուսերեն. — ընդամենը 8 առակ (№№ 167—Медник и кузнец վերնագրով, 165—Александр и ремесленники, 168—Золото и пшеница, 154—Медведь и муравей, 93—Лев и гиена, 125—Курица и ее хозяин, 121—Ворона и нырок, 80—Коровы и их хозяйева վերնագրերով) թարգմանել է ակադ. Ն. Օրբելին և

կցել „Герои Руставели и их подданные“ հոդվածին (հրատարակված է „Памятники эпохи Руставели“ ժողովածուում), Թարգմանությունը շատ հաջող է և բնագրին հավասար արժեք ունի: Թարգմանության մեջ կատարված է տեքստի ճշտումներ:

Գ. Առակները աշխարհաբար մի շատ անհաջող Թարգմանություն կատարել է Խորեն Միրզաբեգյանցը և հրատարակել 1878 թ. Բաքվում: \* Ընդամենը Թարգմանված է 182 առակ. Թարգմանությունից դուրս են մնացել ձիթ, ձիւղ, ձիւթ—ձՄԳ և ձՂՁ առակները:

Թարգմանությունը կատարված է տեղ-տեղ բառացի, երբեմն միայն լոկ իմաստն է վերարտադրում աշխարհաբար բառերով, երբեմն էլ բնագրի իմաստը պարզելու համար ավելացնում է բառեր ու ածականներ: Այս բոլորի հետ միասին Թարգմանիչը անուշադիր է եղել բնագիրը Թարգմանելիս. այսպես՝ նա է առակի «Եւ զղջացեալ զպարտութիւն խոստովանեցան» նախադասությունը Թարգմանել է «Ձղջանալով խոստովանեցին նոքա իրանց զրպարտությունը», «զպարտութիւն» կարգալով «զրպարտութիւն»:

Գ. Ձեռագրերը.— բազմաթիվ ձեռագրեր են հասել մեզ, որոնք ամբողջութեամբ կամ հատվածաբար պարունակում են Մխիթար Գոշի առակները: Դրանք ցրված են զանազան մատենադարաններում՝ ՀՍՍՌ Մատենադարանում, Վենետիկում, Վիեննայում, Երուսաղեմում և այլուր: Մի քանի մատենադարանների Ձեռագրաց Ցուցակների բացակայությունը, դժբախտաբար, մեզ հնարավորություն չի տալիս ծանոթանալու՝ Առակների մի շարք ձեռագրերի, որոնք թերևս օգնեին Առակների ժողովածուի հետ կապված բանասիրական որոշ հարցերի պարզաբանմանը:

ՀՍՍՌ Մատենադարանը պահպանում է Առակների ութը ձեռագիր, որոնք ունեն Առակների ժողովածուն ամբողջութեամբ կամ մասամբ:

1. ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագիր № 4066 (նախկին Տաթևի վանքի № 17). Առակների մեզ հասած ձեռագրերից ամենահինն է: Այն գրված է 1283 թվին. «Գրեցաւ ի թվ. հայոց ՉԼԲ (732 + 551 = 1283), ի յԱնարգաբայ» (էջ 349 բ):

\* «Գոշ Մխիթարի, Ոգոմպլանու և Եղովպոսի ընտիր առակները. Թարգմանություն Խորեն Միրզաբեգյանց» Բաքու, 1878: Թարգմանության առթիվ զբախտությունը տես՝ «Փորձ», 1879 թ., № IV, էջ 143—150, «Մատենախոսություն» բաժնում:

Թեև հիշատակագրությունը գրված է առականերից առաջ, այնուամենայնիվ մենք հիմք չունենք կասկածելու, թե առակաները հետո են գրվել կամ միացվել ձեռագրին. ձեռագրի ըսկըզրի մասի և Առակաների գրչությունը, ինչպես նաև թուղթը նույնն է:

Ձեռագիրն ունի ամենուրեք «աւ» գրություն, փխ. օ: «աւ»-ի գործածությունը նշանակություն ունի հետեյալ տեսակետից. սույն ձեռագիրը, գրված 13-րդ դարի վերջերում, արտագրություն է մի այլ հին ձեռագրից, որ անպայման ունեցած պետք է լիներ «աւ» գրությունը, որովհետև «օ»-ն չէր փոխվի «աւ»-ի, մանավանդ այնպիսի գրչի կողմից, որ ժամանակի ուղղագրական կանոնները այնքան էլ լավ չիմանալով, բառավերջի ձայնավորներից հետո յ-ն չի դնում (արտասանական գրություն), չի դնում նաև յ ձայնակապը, որպես Վ գործածվող ու-ն երբեմն գրում է Վ (գպատվիրանի, առակ Խ.), ըստ երևույթին մայրենի բարբառի ազդեցության տակ շփոթում է կ-ն գ-ի, դ-ն ա-ի հետ, անծանոթ է օ-ի գործածությանը՝ գործածում է միայն մի երկու. դեպքում, այն էլ սխալ— թագաօրի. առ. Ի): Իսկ այդ մեզ տանում է 12-րդ դարը, կամ ամենաքիչը՝ 13-րդ դարի սկիզբը, որ է հենց Գոշի ապրած ժամանակը: Այլ կերպ ասած սույն ձեռագիրը արտագրություն է Առակաների հեղինակին ժամանակակից կամ քիչ հետո գրված մի ձեռագրից:

Առակաները տեղավորված են ձեռագրի վերջին մասում, բայց հենց այս մասից՝ առակաների սկզբից և վերջից՝ թերթեր են թափված. պահպանվել են ԺԸ—ՃՁ ատակաները (տեղավորված 392—412 թերթերի վրա), այդ պատճառով չունի հեղինակի անվան հիշատակություն, որ պետք է լիներ, ինչպես սովորաբար գրվում է՝ սկզբում կամ վերջում:

2. ՀՄՍԻ Մատենադարանի № 8076 ձեռագիրը (նախկին Ազգագրական Ընկերության ձեռագիրն է) ժողովածու է, ունի Ողոմպիանու առակաները, Վարդանա առակաները, Բանք իմաստասիրացը, Վարդանի Աշխարհացույցը և այլ նյութեր:

Ձեռագիրը 17-րդ դարի է:

Գոշի առակաները տեղավորված են 15բ — 43բ թերթերի վրա, հետեյալ վերնագրով.

«Առակ առասպելականք և բարոյականք, որ կերպարան է զճմարտութիւն. Ասացեալ սուրբ վարդապետին... (անընթեռնելի) խթարա Մականունն Գոշ»:

ՃԿ առակից հետո «Առակք ստեղծականք» բաժնի համար ձեռագիրը ունի բաժանման նշան զարդանկարներով (վերնագրի մոտ՝ կողքի լուսանցքում):

3. ՀՍՍՌ Մատենադարանի № 2531 ձեռագիրը պարունակում է միայն Գոշի առակները՝ 59 թերթերի վրա:

Առակների վերնագիրն է.

«Առակք առասպելականք և բարոյականք, որ կերպարանեն դճմարտութիւն: Ասացեալ մեծ վարդապետին Մխիթարայ մականուն Գոշ»:

Ձեռագիրը ունի հիշատակարան.

«Օրինակեցաւ գրքոյկս ի հին գրուածոյ իմեքէ ձեռամբ ուրումն .... (ընջված) կոչեցելոյ: Յամի տետն 1777: Յամսեանն մայիսի քսան. ի քաղաքն Կոստանդնուպոլիս, ի նոր դուռն որ է Եէնի խափուն»:

Ձեռագրի էջերի լուսանցքները երկու կողմից բաժանված են լուսանցադձերով: Առակների համարակալումը սկսվում է Ը-ից, երբեքն բաց են թողնված համարներ (Ժէ, ԼԱ, ԼԲ, ԼԳ և այլն), կամ նշանակված են սխալ: ԿԳ առակի մեկնությունը գրված է ԿԴ առակի սկզբում, որպես սրա սկիզբ: Այս պրշագիրը Մառի օգտագործած 4 ձեռագրերից մեկն է:

4. ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագիր № 9244, միայն վերջերս մասնաճիւղի Մատենադարանի ձեռագրերի հավաքածուի մեջ Մկզբից թերթեր են թափված, Սկսվում է Ողոմպիանոս առակներով (գրանից առաջ գրված գրության միայն վերջին երկու տողերը կան), որին հաջորդում են Գոշի առակները:

Ձեռագիրը չունի հիշատակարան, այդ պատճառով՝ ժամանակն անհայտ է, բայց գրչութունից կարելի է ենթադրել, որ ամենաուշը 16-րդ դ. ձեռագիր է: Ձեռագրի բովանդակությունը (պարունակությունը) գրեթե նույնն է, ինչ № 8076 ձեռագրին:

Այստեղ Մխիթարի առակների վերնագիրն է.

«Առակք առասպելականք և բարոյականք: Որ կերպարանէ գճմարտութիւն: Ասացեալ սուրբ վարդապետին Մխիթարայ .... (եզծած)»:

ԺԳ առակից հետո մի թերթ ընկած է և փոխարենը գրված է ուրիշ թերթ:

Այս չորս ձեռագրերն ունեն առակները լրիվ (չհաշված թափված մի երկու թերթերը) Ա.—ՃՂ համարակալմամբ:

5. ՀՍՍՌ Մատենադարանի № 2189 (հին №-ը՝ 2282) Ձեռագիրը նկարագրված է Մսոբի կողմից (տես «Сб. пригч Вардана», էջ 70): Մատենադարանում այն գրանցված է իբրև 15-րդ դ. ձեռագիր: Ունի առակների վերջին մասը՝ «Առակք ստեղծականք»-ը՝ տեղավորված 430—440 թերթերի վրա, այսպիսի վերնագրով:

«Առակք տեղծականք պիտանիք առնուլ ի զրուցատրու-թիւնս և յասացուածս: Արարեալ Յովհաննու Ծործորեցւոյ»: Սույն ձեռագիրը վերջում ունի հետևյալ հիշատակարանը.

«Եւ զվերջցլս ի բրց գործոց զտարտամ գրիչս զՅոնն՝ ծանօթ թանի և տեղեաւ Եզնկացի: Իսկ այժմ Ծործորեցի: Ազաչեմ չմոռանալ ի բարիս զիս, և զիման ամ: Ի թվկնիս փրկչին ՌՅԺԶ.

Եւ գպիտակ պէտս Գրիգոր վերջին գծօղ յիշեալ (!) ազաչեմ»:

Իսկ նույն էջի ներքևի լուսանցքում այլ ձեռագրով՝

«Իսկ ըստ հայոց էՍԳ աւարտ եղև գիրքս»:

Որից հետո կա մի այլ հիշատակարան, որ ձեռագիրը կազմողին է:

Առաջին հիշատակարանից Մսոբ եզրակացնում է, որ Ծործորեցին առակների հեղինակը չէ, այլ արտագրողը՝ գրիչը, ինչպես նա իրեն կոչում է: Բացի այդ Ծործորեցու հիշատակարանից անմիջապես հետո գրված «Եւ գպիտակ պէտս Գրիգոր վերջին գծօղ յիշեալ ազաչեմ» բառերը ցույց են տալիս, որ ձեռագիրը չի գրված Ծործորեցու սեփական ձեռքով, այլ նրա գրածի արտագրությունն է ոմն Գրիգորի ձեռքով: Բայց հենց այս հիշատակարանից, որևէ արտագրող կարող էր եզրակացնել, թե առակների հեղինակը Ծործորեցին է և հենց այդ իմաստով էլ կազմել է առակների վերնագիրը, այն դեպքում, եթե առակները չէին կրում հեղինակի անուն:

6. ՀՍՍՌ Մատենադարանի №2226 (2243) ձեռագիրը քարոզգիրք է: Յբ—10բ էջերում տեղավորված է Մխրթարի առակների վերջին մասը: 10բ էջից շարունակվում են Ողոմպիանու առակները (մինչև 15բ էջը) որի շարունակությունն են կազմում Վարդանա առակները (ընդամենը 24 առակ): Բոլոր առակներն էլ առանձին-առանձին համարակալված են, Մխրթարի առակները («Առակք ստեղծականք»-ը) ունեն ճԿ—ՃՂ համարակալում:

Ձեռագիրը գրված է 1450 թ.: Վերջում ունի հետևյալ հիշատակարանը.

«Այս քարոզներս ասացեալ է ի Ղուկաս կեղեցի սուրբ վարդապետէ, դիւրալուր հեշտիմաց ըստ աշխարհականց ճանապարհաւ: Եւ յառաջն եղաւ գեղեցիկ պատմութիւնք անծանօթք, վասն օրինակի ի հնոց սրբոց վարդապետաց ասացեալ և գաղափարաւ առ մեզ հասեալ: Գրեցաք ի վայելուքն մեծի բարունապետին տեառն Սարգսի վարդապետին Մեծօրհեցւոյ՝ աշակերտին Գրիգորի Տաթևացւոյն: Գրեցաւ ձեռամբ Բակամ (=Մակար, է. Պ.) գրչիս էլիկեցւոյ թուին ԸՃՂԹ (1459)»:

Առականերից հետո գրված են քարոզներ, որոնց մեջ գտնուած են օգտագործված Վարդանա առականերից մի քանիսը՝ տարբեր խմբագրությամբ, քան նրանք հայտնի են սպագրությամբ, աւելի ճիշտ՝ տպագրվածների բոլորովին նոր վարիանտներ են:

7. ՀՍՍԹ Մատենադարանի № 4618 ձեռագիրը հավաքածու է մի քանի ձեռագրի՝ առած մի կազմի մեջ: 101—126 թերթերը, դատելով այդ թերթերի և ձեռագրի մյուս մասերի գրչու թյուրանից, այս հավաքածուի մեջ է ընկել մի այլ ձեռագրից, սակայն այդ մասն էլ ամբողջական չէ, որովհետև նրանից էլ թերթեր են թափված կամ պոկված: Այն մասից, ուր տեղավորված են եղել Գոշի առակաները, պահպանվել է միայն վերջին թերթը (թերթ 116), որ սկսվում է ՀՆ առակից հետո եկող «Շատ լիցի և այս, եկ ի ցամաքայինս» տողով, ապա շարունակվում են առակաները հաջորդաբար մինչև ՁԵ առակը և վերջանում է ՁԶ համարի տակ գրված Ղ առակով: Առակաները վերջանում են 116ր էջի 2-րդ սյունակի կիսում, որ ցույց է տալիս, թե ձեռագիրը սկզբնապես ունեցել է Գոշի առակաների մի մասը միայն՝ ըստ երևույթին 86 առակ:

Առականերից հետո 116ր էջից սկսած գալիս է «Երանելոյն Աթանասի արքեպիսկոպոսի Աղեքսանդրոյ: Հարցմունք վայելուչք և պատասխանիք սրբոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի» գրությունը, որին հաջորդում է 120 էջում՝ «Բի հարցմանց գրոց սրբոյն Գրիգորի Տաթևացւոյն. արարեալ ծաղկաքաղ նուաստ ամեմն Իգնատիոս յերիցու, ի Մանածկեր(ա) քաղաքի, ՌՃԿԳ թուին, օգոստոսի Ժ օրն»:

Ինչպես ասացինք, ձեռագրի 101—126 թերթերը այս ձեռագրի մեջ են ընկել ուրիշ ձեռագրից, այսինքն՝ առակաները և



Տաթևացու Գիրք հարցմանցի Իգնատիոսի ծաղկաքաղը նույն գրչինն են, կամ հենց Իգնատիոսի գրչությունն են, ուրեքն և ձեռագրի մեղ հետաքրքրող մասը գրված է ՌՃԿԳ=1163+551= =1714 թվին:

8. ՀՄՍՌ Մատենադարանի № 607 ձեռագիրը նույնպես հավաքածու է զանազան ձեռագրերի մասերի ու ֆինացորդների՝ առած մի կազմի մեջ: Ձեռագրի տարբեր մասերի թանաքն ու թուղթը, ինչպես և գրչությունը տարբեր են: Առակները սկրսվում են 138ա էջից. նրանց գրչությունը տարբերվում է ձեռագրի ֆինացած մասերի գրչությունից, այդ պատճառով կարծում ենք, որ առակների թերթերը այս (№ 607) ձեռագիր-հավաքածուի մեջ են ընկել ուրիշ ձեռագրից: Ձեռագիրն ընդամենը ունի ԻԷ (27) առակ, որոնք և համարակալված են (քանակը ի սկզբանե այդքան էլ եղել է, որովհետև ԻԷ առակը վերջանում է էջի կեսում):

Առակների վերնագիրն է.

«Առակք առասպելական (!) և բարոյականք, որ կերպարանէ զճճարտութիւն. Ասացեալ սուրբ վարդապետին Մխիթարայ, որ մականունն Գոշիկ կոչի»:

№ 607 ձեռագիրը սխալաշատ մի ձեռագիր է. սխալների մեծ մասը ակնհայտնի և ամենեին անարժեք տառասխալներ են. Աղավաղումներ հատկապես շատ կան լեզվական-ոճական տեսակետից՝ կատարված խոսակցական լեզվի աղբեցության տակ (օրինակ պտուղս ուտելով, փխ. գպտուղ իմ ուտելով, գղջալ, փխ՝ գղջանալ, պտուղ բերես անուտելի, փխ. պտուղ քո բերես անուտելի, և այլն), որից երևում է, որ ուշ շրջանի, հավանաբար 18-րդ դարի վերջերի ձեռագիր է:

\* \* \*

Հ. Տաշյանի «Ցուցակ»-ից հայտնի է, որ Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանում կան Մխիթար Գոշի առակները պարունակող ձեռագրեր: Դրանցից՝

ա) Թիվ 29 ձեռագիրը, գրված ՌՃՂԵ=1746 թ., ունի Առակների ժողովածուն լրիվ: «Ցուցակում» բերված հատվածներից ներկում է, որ տարբերություններ ունի մեր օգտագործած ձեռագրերի (ՀՄՍՌ Մատենադարանի ձեռագրերի) և տպագրի հետ, որոնք վերաբերում են միայն քերականական ձևերին: Առակների կարգը նույնն է տպագրի հետ. «կարգը նույնն է

ձեռագրիս մեջ ալ, բայց առակաց թվարկությունը գրչեն չէ» (Տաշյան, «Ցուցակ», էջ 166):

բ) Թիվ 379 ձեռագիրը նույնպես ունի ժողովածուն լրիվ: Ձեռագիրը գրված է 1785 թվին Կ. Պոլսում: Ունի հետևյալ հիշատակարանը.

«Օրինակեցաւ գրքոյկս ի հին գրուածոյ իմեքէ ձեռամբ ուրումն... կոչեցելոյ (—այսպես, անվան տեղ կետեր տրված.—) յամի տեառն 1785, ի մեծն Պօլիս». (Ցուցակ», էջ 831):

Այս հիշատակարանը գրեթե բառացի համընկնում է մեր Մատենադարանի 2531 ձեռագրի հիշատակարանի հետ (տես Վերևում), միայն այնտեղ անունը ջնջված է (քերված), իսկ այստեղ փոխարենը կետեր դրված. ինչ-ինչ պատճառներով գրիչը ծածկում է իր անունը: Այս ձեռագիրն էլ ունի կողքի լուսանցադժեր, ինչպես № 2531-ը, տեղը նույնն է—Պոլիս. մեր Մատենադարանինը գրված է 1777 թ., Վիեննայինը՝ 1785 թվին. «Ցուցակում» բերված հատվածներն էլ տառացի նույնն են № 2531 ձեռագրի համապատասխան հատվածներին հետ: Ենթադրում ենք, որ երկուսի գրիչն էլ նույնն է և արտագրված են միևնույն ձեռագրից, ուրեմն և Վիեննայի այս ձեռագիրը որևէ արժևք, տեքստաբանական կամ բանասիրական, չի կարող ներկայացնել:

գ) № 79 ձեռագիրը, որը է «Հատընտիր հաւաքումն բանից հեղինակաց հայոց» և ԺԺ դարի ձեռագիր է, ի թիվս բազմաթիվ հատվածների, քաղված հին մատենագիրներից, ունի «Մխիթար Գոշ (առակ է, Ճ, ՃԺԴ, ՃԽԻ)»: («Ցուցակ», էջ 338):

դ) № 31 ձեռագրի մեջ, որ Աղուեսագիրք է, «Ցուցակի» հեղինակը գտնում է Մխիթարի առակներից. «Վերջինը Գօշի առակներն ալ կան, զոր օրինակ ՃԿԴ (թղ. 94) «գայլն և և սղուեսն և ջորին եղան եղբայրք», ՃԿԶ. «եզն և և ձին խօսեցան ընդ միմեանս» և այլն («Ցուցակ», էջ 178): Վարդանա անունով հայտնի այս առակները չգիտենք ինչ հիման վրա Տաշյանը համարում է Գոշինը:

«Ցուցակ»-ի ցանկում որպես Գոշի առակներ մատնացույց է արվում № 320 ձեռագրի 5 առակները—«Առակք զոր ասեն իմաստունքն» վերնագրի տակ. «(Ա) իշխան ոմն ազնական գնաց յեզր ծովուն, ուր ժողովեալ էին բազում ձկուռք» և այլն. (վերջինն՝ «էշք բազումք երթային ի գործ արքունի» և այլն»): («Ցուցակ», էջ 764): Նշված առակները նույնպես Գոշինը չեն:

Ուրիշ ձեռագրերի ցուցակներում Գոշի առակներին չենք հանդիպում: Առակների ձեռագրեր կան Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանում (որից կատարված է տպագրությունը) և Երուսաղեմի ձեռագրերի հավաքման մեջ, որոնց ցուցակները հրատարակված չեն:

Մխիթար Գոշի առանձին առակները համեմատաբար քիչ տարածում են գտել միջնադարյան առակագրքերում և այլ ձեռագրերում՝ անջատվելով ամբողջ ժողովածուից: Գոշի առակների տարածման մասին Վարդանյան հավաքածուներում կարելի է տեսնել Մառի ուսումնասիրության մեջ (Сборники приуч Вардана, I, էջ 75 և հտ.): Այստեղ միայն ավելացնենք, որ ձևա առակը, բացի Եր-ից և Աղուեսագրքից, գտնվում է նաև մեր Մատենադարանի № 8031 ձեռագրում, որ նորագույն մի ձեռագիր — առակագիրք է: Առակը տառացի նույնն է Մառի հրատարակածի հետ (տես 2-րդ մաս, ՄԻԶ առակը):

**Դ. Բնագիրը կազմելու հանգամանքները.**— Գոշի առակները մեզ են հասել ձեռագրերով համեմատաբար քիչ փոփոխությունների ենթարկված՝ առանց տարբերակների, մեծ հապավումների կամ ավելացումների: Չնայած դրան, քիչ չեն աղավաղումները, անճշտություններն ու տարբերությունները առակների ձեռագրերում և տպագրի մեջ: Այս տեսակետից արժեք տեքստարանական աշխատանք կատարել՝ նպատակ ունենալով հնարավորին չափ վերականգնել բնագիրը: Մեր զլխավոր նպատակն այդ էլ եղել է:

1. Բնագիրը կազմել ենք վերոթվյալ 8 ձեռագրերը համեմատելով Վենետիկի 1854 թ. տպագրի հետ:

2. Վենետիկյան հրատարակություններում առակները տպագրված են իրար հետևից Ա-ՃՂ համարակալմամբ: Մենք ձեռագրերի թելադրանքով առակները բաժանեցինք երկու մասի՝ առաջին մասի համար թողնելով «Առակք առասպելականք և բարոյականք որ կերպարանեն գեղմարտոթիւն» վերնագիրը, երկրորդ մասի համար դնելով «Առակք ստեղծականք» վերնագիրը՝ վերջում դրված հեղինակի հիշատակարանի թելադրանքով: Պահպանել ենք ընդհանուր համարակալում, ինչպես տալիս ենք ըրոր ձեռագրերը և տպագիրը:

3. Բնագրի հիմքում դրել ենք Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 4066 ձեռագիրը, Առակների մեզ հասած ձեռագրերից ամե-

նահի՞նը (13-րդ դ.), իսկ այն առակների համար, որոնք բացա-  
կայում են այս ձեռագրում, հիմք ենք ընդունել տպագիրը:

4. Բնագիրը կազմելիս դուրս չենք եկել ձեռագրական  
ավյալների սահմաններից: Երկու դեպք միայն բացառություն  
են կազմում.— Ն. Բյուզանդացին «Հայկական բառաքննու-  
թյունք»-ի մեջ մի քանի ուղղում է առաջարկում, որոնցից  
երկուսը չեն հաստատվում ձեռագրական ավյալներով. դրանք  
են Ե առակում՝ խորհեալ իխ.՝ ձեռագրերի և տպագրի խոնար-  
հեալ և ՃԿԵ առակում՝ երկաթագործ. իխ.՝ ձեռագրերի և տպա-  
գրի երկրագործ: Բյուզանդացու առաջարկած այս երկու ուղղու-  
մն էլ մտքրինք բնագրում, որպես միանգամայն ճիշտ առաջարկ-  
ներ, որոնք և թերևս հաստատվեին առակների այլ ձեռագրերի  
միջոցով:

5. Երկու հնարավոր ընթերցումներից գերադաս ենք հա-  
մարել գնել այն ընթերցվածը, որ տալիս են քանակով շատ և  
ժամանակով հին ձեռագրերը:

6. Ճիշտ և ճիշտ թվացող ընթերցումները, եթե այն սա-  
լիս է միայն մի ձեռագիր, դրել ենք բնագրում: Այդպիսի ուղ-  
ղումները մի քանի տասնյակների են հասնում:

7. Առակների լեզուն զրաբարն է, բայց և երբեմն սեղի է  
տալիս միջին հայերենին: Այդ նկատի ունենալով, երբ հին ձե-  
ռագրերը տվել են միջին հայերենին հատուկ, իսկ նորը կամ  
նորերը՝ զրաբարին հատուկ ձև՝ թողել ենք առաջինը:

8. Պահպանել ենք բառերի զրաբարյան ուղղագրական  
ձևերը, սակավ դեպքերում, եթե ձեռագրերի ճշող մեծամաս-  
նությունը և հին ձեռագրերը (A և D) տվել են միջին հայե-  
րենին հատուկ ուղղագրական ձև, դրել ենք վերջինը:

9. Պահել ենք օ գրությունը, թեև տեքստի հիմք հանդի-  
սացող ձեռագիրը ունի ալ գրություն:

10. Չենք զլացել մանրամասն նշանակել այլընթերցումները,  
նկատի ունենալով դրանց լեզվաբանական արժեքը: Դրանից  
դուրս ենք թողել այնպիսիները, որոնք որևէ արժեք չեն ներ-  
կայացնում և լուի գրչի անհմտության արդյունք են: Դա հատ-  
կապես վերաբերվում է Ո ձեռագրին:

Համեմատական բնագիրը կազմելու արդյունքը եղել է  
բազմաթիվ առակների բնագրերի ճշտումը, նրանց մեջ եղած  
ազավագումների ու սխալների և ավելացումների հեռացումը, հա-

պավու մների վերականգնումը: Ընդհանուր առմամբ բնագրի մեջ մտել են մի քանի հարյուր ուղղում:

Այլընթեքցումներից օգտվելիս պետք է նկատի ունենալ հաջորդ էջում տրված աղյուսակը, որ ցույց է տալիս, թե որ առակը որ ձեռագրերի հիման վրա է կազմված (չհաշված տպագիրը): Եթե աղյուսակում ցույց է տրված, որ, ասենք, ՃԶԱ առակի բնագիրը կազմված է ABCDEF ձեռագրերի (և տպագրի) հիման վրա, և որ ՏBCDEF չունեն «ձիթենի» բառը, ապա պարզ է, որ այդ բառը ունի A ձեռագիրը, որից և մտել է բնագրի մեջ:

**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ ԳՈՐԾԱԾՎԱԾ  
ԱՅԼԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ**

1. A—**ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագիր № 4066**
2. B— » » » **№ 8076**
3. C— » » » **№ 2531**
4. D— » » » **№ 9244**
5. E— » » » **№ 2189**
6. F— » » » **№ 2226**
7. m— » » » **№ 4618**
8. n— » » » **№ 607**
9. S— **1854 թվի Վենետիկի տպագրությունը**
10. **փխ—փոխարեն**
11. **չիք—չկա, պակասում է**
12. **ավլցն—ավելացնում է**

**Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ<sup>1</sup>**

<u>Ա—Ժէ</u>	<u>ԺԸ—Իէ</u>	<u>ԻԸ--ՀԵ</u>	<u>ՀԶ--ԶԶ</u>	<u>ՁԷ--ՁԹ</u>
BCDn	ABCDn	ABCD	ABCDm	ABCD
<u>Ղ</u>	<u>ՂԱ—ՃԻԱ</u>	<u>ՃԻԲ</u>	<u>ՃԻԳ—ՃԽէ</u>	<u>ՃԽԸ—ՃՕԴ</u>
ABCDm	ABCD	ABC	ABCD	AԾC
<u>ՃՕԵ—ՃԿ</u>	<u>ՃԿ—ՃՁԷ</u>	<u>ՃՁԷ—ՃՂ</u>		
ABCD	ABCDEF	BCDEF		

<sup>1</sup> Աղյուսակի բացատրությունը տես նախորդ էջում:

**ԱՌԵԿՔ  
ՄԽԻԹԱՐԱՅ ԳՈՇԻ**

**Ա Ռ Ա Կ Ք**

**ԱՌԱՍՊԹԵԼԱԿԱՆՔԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՔ.**



Ա

Աստուած յառնելն երբեմն զարարածս՝ երկեաւ հակառակիլ. և խառնեաց զծանրն ընդ թեթեւին, զտկարն ընդ հզօրին, զի թէ հակառակ դարձցին՝ առ միմեանս և ոչ ընդ արարչին:

Խրատէ առակս զթագաւորս՝ կարգել զմեծամեծս և ըզնուաստս ընդդէմ միմեանց, զի մի ընդ թագաւորս, այլ ընդ միմեանս պատերազմեցին:

Բ

10 Փափագեաց երկին խոնարհիլ, իբրու զի ամենեցուն ըզձալի է, սակայն երկեաւ անկանիլ ի փառաց. այլ լուսաւորք ճառագայթաձև զնա արարին:

15 Ուսուցանէ օրինակս՝ համարձակութեամբ խոնարհիլ փառաւորաց, զի բնաւորեալն ընդ նոսա՝ պատիւ ոչ թողու անարգիլ:

Գ

Կարծեաց երբեմն զանձնէ արեգակն թէ Աստուած իցէ ի բարձրանալն, իբրև խոնարհեալ եմուտ ընդ երկրաւ, ծանեաւ զբնութիւն իւր:

20 Յայտնէ զաղափարս, զի ոմանք ի թագաւորաց անմտաց ի բարձրանալն յաղթութեան փառօք՝ կարծեցան Աստուած լինել, ի մտանելն ի գերեզման՝ զիտացին զբնութիւն իւրեանց:

2 n երբեմն

4 B զի է, փիս զի թէ

4 CD հակադարձցին փիս հակառակ դարձցին

4 n ընդ փիս առ

7 n ընդ փիս ընդդէմ

11 n լուսաւորքն

12 ս արարին զնա

13—14 n փառաց փիս փառաւորաց

17 D արեգակ

20 SB ոմանց

Դ

Ի լրման լուսին կարծեաց զանձնէ թէ արեգակն իցէ և զտիւ լուսաւորէ, այլ ի պակասել լուսոյն՝ և ոչ զգիշեր լուսաւորէ:

5 Յանդիմանէ եղանակս զայնոսիկ՝ որ ի պատահել միոյ իրի պատուոյ՝ մեծամեծաց կարծէ ժամանիլ. այլ և ոչ զոր ունի վայելէ յանմտանալն:

Ե

10 Ժողովեալ երբեմն աստեղաց՝ ասեն ի նոցանէ ծերագոյնքն. Մեք բազումք եմք՝ զիմրդ զտիւ և զգիշեր ոչ լուսաւորեմք նման արեգական և լուսնի: Ասէ ոմն. Ձի ոչ միաբանութեամբ վարիմք: Եւ խորհեալ միաբանութեամբ նախ հերքել զարեգակն. և ի ծագել լուսնի՝ պարտեցան և ասեն. Այսպէս ի սմանէ աղօտացաք, զբնչ և յարեգական ծագելն 15 լիցուք: Եւ զղջացեալ զպարտութիւն խոստովանեցան:

Խրատէ առակս՝ թէպէտ և բազումք իցեն և տկարք, հզօր ի յաղթել ոչ կարեն. Իմաստութիւն է՝ այլ ևս տկարիւ զփորձ առնուլ և զղջանալ, որ և թողութեան է արժանաւոր:

Զ

20 Երկիր հայեցեալ ի բարձրութիւն լեռանց համարձակեցաւ լինել և երկին, և ոչ կարաց զլուսաւորս ընդ ինքեամբ առնել նման երկնի՝ և լուսաւորել:

Յանդիմանէ նշանակս զաշխարհական ոմանս, որ փքացեալ ի ճոխութիւն իւրեանց, զքահանայից կամին յափշտակել զպատիւ, սակայն լուսաւորին՝ քան լուսաւորեն, նման երկրի, զի լուսաւորի՝ քան լուսաւորէ:

2 n յանձնէ

2 B D արեգակ

3 n լուսաւորեցէ

3—4 B չիք այլ ի պակասել լուսոյն՝ և ոչ զգիշեր լուսաւորէ

3 n գիշեր (չիք գ)

5 B զեղանակս n այնոսիկ (չիք գ)

5—6 n իրի միոյ

6 n այլ ոչ և

9 n աստեղացն

10 n չիք եմք (բազումք)

10 D լուսաւորենք

11 n ոմն ի նոցանէ

12 n վարեմք

12 B խոնարհիլ փխ խորհեալ

13 D զարեգակ

13 n ասացին

14 D յարեգակ փխ յարեգական

15 n չիք լիցուք

16 C չիք առակս /n չիք և (2)

18 n զղջալ

21 n կարացաւ փխ կարաց

21—22 ինքեան ունել փխ ինքեամբ առնել

23 n չիք նշանակս

23 B ոմանք փխ ոմանս /n զաշխարհականաց ոմանց

24 n ճոխութիւնս

26 B երկրին

Ի մէջ անկոց խորհուրդ եղև, թէ ում արժան է թագա-  
 ւորել ի վերայ մեր. և ոմանց ասացեալ զարմաւենի. իսկ  
 որթոյ հակառակեալ՝ առաց. Ես եմ ուրախարարն, ինձ ար-  
 5 ժան է լինել. և թզենի՝ թէ ես զի քաղցրաճաշակ՝ ինձ է  
 պարտ, իսկ զժնիկ՝ թէ ես հարկանող՝ ինձ ի դէպ է: Եւ  
 առաւելու թեամբ իւրաքանչիւր զանձն յարդէր և անկարօտ  
 10 ասէր այլոց: Իսկ արմաւենի խոկացեալ գիտաց՝ եթէ ոչ հա-  
 ւանին նոցա թագաւորել, զի զայլս ընդ իւրեանց ոչ կա-  
 մէին ճոխանալ, և ասաց՝ յաւէտ ինձ վայել է լինել արքայ.  
 և: ամենեքին վիկայիցին և ասեն. Բարձր ես հասակաւ և  
 քաղցր պտղով, բայց երկու ինչ պակաս է քեզ, զի յաւուրս  
 մեր ոչ տաս պտուղ և ի շինուած ոչ պատշաճիս. մանա-  
 15 վատատխանեաց, թե զձեզ իշխանս կարգելով այնպէս թա-  
 գաւորեմ, և ի կատարել ժամանակացն իմոց՝ որդւոց ձե-  
 րոց թագաւորեցից: Եւ յօրինեաց զկարգ թագաւորութեանն  
 յանձն առնելով նոցա—զորթ՝ զինէպետ, և զթզենի՝ հիպա-  
 տոս, զդժնիկ՝ զահճապետ, զնոնենի՝ բժշկապետ, և զայլս ի

---

2—3	B թագաւոր լինել փխ թագա- ւորել	8	n արմաւենին
3	S զարմաւենի թէ լուրձր է հա- սակաւ և քաղցր է պտղովք փխ զարմաւենի /B զարմաւենի թէ բարձր է հասակաւ փխ զարմա- ւենի)	8	B թէ փխ եթէ
4	S ասէ	9	n լրեանս փխ լրեանց
5	BCDn չիք լինել	9—10	n կամին
5	B չիք և CD իսկ փխ և	10	SD ասէ թէ /B ասաց թէ
5	n թզենին	11	n ամենեքեան
5	D չիք զի	12	n քաղցր ես
5—6	S քաղցրաճաշակ եմ փխ քաղց- րաճաշակ՝ ինձ է պարտ /n քաղ- ցրիկ եմ փխ քաղցրաճաշակ /n ինձ պարտ փխ ինձ է պարտ	13	n շինուածս
6	SD) հարկանող եմ	14	n ի բարձրութեանց քոց փխ զի բարձրութեամբ քո
6	B դէպ է փխ ի դէպ է	14	S B անճաշակ բազմաց լինիս փխ բազմաց անճաշակ լինիս
7	n առաւելութեամբն	14	S և նա փխ Եւ
8	n յաւէր փխ ասէր	15—16	n թագաւորիմ
8	n բայց փխ իսկ	16	n ժամանակաց
		16	S և որդւոց
		18	n չիք և
		19	B և զդժնիկ
		19	SD և զնոնենի

պտղոց ի դարմանս, զմայրս՝ ի շինուածս, զանտառս՝ յայ-  
րուռնս, զմորենի՝ ի բանտ, և զիւրաքանչիւր յիւրաքանչիւր  
գործ:

Յանգիման կացուցանէ առակս, թէ ոչ ոք կարէ ճոխա-  
նալ առանց անփառից և ոչ բարձրանալ առանց անարգից: Եւ դարձեալ, առ ձեռն պարգևօք ակն ունին անազան յու-  
սոյ բազումք տէրանց իւրեանց:

Ը

Ի լինել որթոյն որդէկոտոր ի վարնանային ժամանակի,  
10 և յարտասուելէն՝ եկին տունկք ամենայն մխիթարել զնա,  
եկն ընդ նոսա և մորենի. և այս ինչ էր մխիթարութեան  
բան. Մի լար, ասեն, դարձեալ ծնանիս որդիս. Եւ նա ասէ-  
Մնանիմ և դարձեալ կոտորեն, և այդ զի՞նչ մխիթար է. այլ  
15 այս է մխիթար անձին, զի մնացեալն իմ որդիք պտղարեր  
լինին և պատճառ ուրախութեան մարդկան: Եւ այսու անձն  
մխիթարէր. Իսկ մորենի ասէր. Եկի մխիթարել զքեզ, զի  
ինեւ զաչսդ սրբիցես: Եւ նա ասէ. Շնորհ ունիմ տնկագոր-  
ծին, որ խլէ զքեզ յարմատոյ իմոյ:

Յայտնէ ապացոյցս, զի առ ժամանակ մի է մխիթարիլ  
20 մնացելովքս, զի մահկանացու է ազգ մարդկան, այլ այն  
իսկ է տիրապէս մխիթարութիւն, զի ըստ հաճոյից տեսուն  
իցեն մնացեալն ժառանգք: Բայց մորոսաց բան առաւել  
զայրացուցանէ, քան թէ մխիթարէ զսգաւորս՝ նման մո-  
րենուոյն, զոր շնորհ ունի բնաւին ոչ տեսանել զանմիտ  
մխիթարիչն:

1 D շինուած	16 n մորենին
1—2 n ի յայրուռնս	16 BC չիք իսկ մորենի ասէր. Եկի մխի-
2 n զմորենին	թարել
2—3 S և զայլս ամենայն յիւրա-	17 n զաչդ
քանչիւր գործ փիտ զիւրաքան-	18 S իմէ փիս իմոյ /n յարմատոց իմոց
չիւր յիւրաքանչիւր գործ	19 n Յայս է փիս Յայտնէ
7 n ի տերանց փիս տէրանց	19 S մխիթարել
9 B որթէկոտոր	21 C չիք տիրապէս
10 n ի մխիթարել զնայ	21 n չիք ըստ
11 n մորենին	22 D ժառանգքն
12 n զի դարձեալ	22 n բանք
12 չիք Եւ	23—24 BD մորենոյն /n մորենոյ
15 S այսիւ փիս այսու	25 S մխիթարիչն
15 n զանձն	

Թ

Պահելով ռիս ընդ սրթոյ՝ մորենի ասոց հակառակեալ,  
թէ նման քեզ բարձրանամ և զոյզ պտղաբերիմ, և առ-  
ւելում՝ զի ի ձմերայնի անթառամ լինիմ: Ապարանեաց  
5 որթ գնա, թէ պարծանք քո կատարեալ է յորժամ ի հնձան  
ժողովեցիս յաշնան յեղանակի: Եւ ի լինել աշնան՝ կոխան  
եզեալ մորինի:

Ուսանիմք յեղանակէ աստի, զի յանդիմանեալ անմտու-  
թեան, ի դէպ է լուել և ոչ երկրորդ ձեւանալ կատարելոյ: Եւ  
10 միողն բազմակատարին նմանիլ ոչ է կար:

Ժ

Նոնենի և թզենի առ միմեանս սէր ունել կամեցան և  
քաղցրութեամբն հաւատարմեցան, բայց ընդ թթուութեան  
նոնենոյ տաղտկացաւ թզենի, և լուծաւ դաշինքն:

15 Իմաստս տայ այս առակ, նախ փորձել սիրելեաց զմիմ-  
եանց բարս, զի ամենայնիւ. նման միմեանց իցեն, ապա  
թէ ոչ՝ դիւրաւ լուծանելի իցէ սէր:

ԺԱ

Նախանձ առ միմեանս կալան խնձորի և տանձի՝ եղ-  
20 բարք գտով. և այսպիսի էր յեղսնակն, թէ հարազատ մեք՝  
զիմորդ թագաւորք զօրինակդ քո արարեալ սսկի, ասէր առ  
խնձոր, ի ձեռին նկարեն: Եւ նա ասէ. Զի բոլորատեսակ եմ  
և անուշահոտ, և թէ ոչ նախանձիս՝ առնեմ լինել և քեզ

2 n չիք ռիս  
2 n մորենին  
4 B ի ձմերայն ըն ձմեռացն  
4 B որ անթառամ  
4 C լուսանցբաւմ՝ այսպարանեաց  
6 B ժողովեցիս n ժողովեա  
6 C եղանակի  
8 S յանդիմանել  
8—9 BC անմտութիւն n յանմտու-  
թեան  
9 C Զի փխ եւ  
10 S նմանել  
10 C ոչ կար է  
12 n նոնենին ու թզենին. չիք ունել

12—13 n չիք և քաղցրութեամբն հա-  
ւատարմեցան  
13 S CD հաւատարեցան փխ հաւատար-  
մեցան B հաւատարեցան C լու-  
սանցբաւմ հաւատարմեցան  
14 S նոնենուոյ n նոնենոյ  
14 n թզենին  
15 n առակս  
15—16 n զբարս միմեանց փխ զմիմ-  
եանց բարս  
16 n ամենեկին փխ ամենայնիւ  
17 n լուծանէ գտէր փխ լուծանելի իցէ  
սէր  
19 SD միմեանց

ընդ իս ի սեղանն ճոխից, թէև նշանակն ոչ լինի ոսկի: Եւ նա տակաւին խանդայր, մինչև արկաւ խոզից:

2 Զայս տայ իմանալ յեղանակս, թէ ոչ է պարտ անարդի եղբոր նախանձել ընդ փառս եղբոր՝ որ պատուի ի մեծամեծաց, զի ի շնորհս նորա և նա վայելէ. թէ յանդգնի՝ ևս առաւել անարգի:

ԺԲ

10 Հարցաւ ընդ թղենի, թէ զիսորդ է զի բազում ոստս առ երկրաւ տարածանես: Եւ նա ասէ. Քանզի բազում են թըշնամիք իմ. խոնարհիմ, զի մի ոստակատոր եղէց. զի նախ քան զելանելն յիս՝ յագեցուցանեմ, և մոռանան զչարութիւն:

15 Խրատէ զմեզ առակս, խոնարհութեամբ և սեղանօք և քաղցրութեամբ: Ընդ առաջ ելանել թշնամեաց, յորժամ սոնանել ոչ կարեմք, զի շիջանիցին ի դառնութենէ բարուց:

ԺԳ

20 Խնամութիւն առնել ընդ միմեանս կամեցան թթենի և ձիթենի. և պանծայր ի զօրութիւն իւր իւրաքանչիւր ոք. ձիթենի յարազուարճութիւն և ի պողաւետութիւն, մանաւանդ զի պտուղ նորա նիւթ է ձիթոյ, և ձէթ նիւթ է լուսոյ, և լոյս լուծիչ խաւարի. իսկ թթենի ի քաղցրութիւն պտղոյ, և զի սաղարթ իւր նիւթ մետաքսոյ է, զոր սրղունք ծնանին, յորմէ կերպասք լինին, զոր թազաւոր և իշխանք վայելեն: Որում և դիմադրէ ձիթենի զդիւրանցութիւն պտղոյ նորա, և զախտաւորն լինել յանդերձ, քան թէ հար-

1 C չիք բնդ իս	15 BC շիջցին փի շիջանիցին 'n շիջուցին
1 n ջոջից փի ճոխից	15 n բարւոյ փի բարուց
1 n նշանակն	15 S ալլցն՝ և մոռացին զչարիս
2 BD խնդայր փի խանդայր  C լուսացում՝ խնդայր	17—18 n խնամութիւն կամեցան առնել ձիթենին և թղենին և թթենին
4 n նախանձ փի նախանձել	18 n չիք իւր
4 n փառք	18 n չիք ոք
4 n չիք ոք	20 BD ձիթւոյ 'n նիւթ ձիթոյ է
10 SD և ես խոնարհիմ	21 n լուծիչ է
10 S և փի զի (1)	22 B պտղոց
11 n գլխանեցն	22 S C է մետաքսոյ
11 B գլխ փի յիս	24 n ձիթենին
11 BD չիք և	
11 BD մոռանամ  Cn մոռանալ	

կաւոր. և զի ի գիշերի մերկանայ, բայց լոյս ի գիշերի վա-  
ռի: Ասէ թթենի. Այլ ի տունջեան շիջանի: Ասէ ձիթենի՝  
ոչ շիջանի, այլ յազգակիցն իւր խառնի, իսկ փառք քո՝  
ծաղկընկեց և անցաւոր: Եւ այսու պարտեալ թթենի՝ հայցէ  
5 լինել իրին:

Նշանակ առակիս այսպիսի է. զի թագաւորական ազգ  
թէպէտ փառաւոր է՝ երկրաւորօքս ճոխանայ, որք հոսա-  
նուտք են, որում թթենիդ է նշանակ: Իսկ քահանայական  
տոհմ թէև աղքատ իցէ, մեծապատիւ է հոգևորօք և արժան  
10 է դուզիլ ընդ թագաւորական տոհմի:

### ԺԴ

Յանփորձից ոք ի տնկոց հարցանէ զնոնենի. Չի՞ է զի  
բազում առնուս ծաղիկ, սակայն հոսես և ծորես: Եւ նա ասէ.  
Ազան է ակն տնկողին, և ես նրբոստ և ծանրապտուղ, և  
15 եթէ ոչ էի կակղուղէջ՝ բառնալ ոչ կարէի. յաղազս այնորիկ  
հոսեմ, զի մի բեկայց:

Յանդիմանէ առակս զայնոսիկ՝ որ առաւել քան զկարն  
և զտոհման արարչին պահանջեն ի սպասաւորաց պաշտի.  
որոնց խնամ ածելի է՝ զի մի ի զօրութենէ հատեալք անկ-  
20 ցին. նմանապէս և ի հոգեւորան եղիցին, ըստ սրում և Աս-  
տուած խնամէ:

### ԺԵ

Ի միասին սալոր և դամոն և ծիրան ամբաստանեցան՝  
թէ ընդէ՛ր զատամուսն հարկանեն. Եւ պատասխանեալ ասեն.  
25 Չեզ ոչ է զիտելի, այլ հմուտք ի բժշկաց գիտեն՝ զի փաստիչ  
եմք սրովայնի. արդ եթէ զայն գործեմք և յաճախեն յու-

2 Տ Եւ ասէ (2)	13 Տո առնես
3 Տ Թէ ոչ	13 ՏԾ սակայն զի
2—3 ո չիք Ասէ ձիթենի՝ ոչ շիջանի	14 ԲԾ ծանր պտուղ
3 ո ազգակիցն	15 Տ և յաղազս
4 Տ ծաղկընկեց է	19 ո ածել փխ ածելի է
4 ՏԾ և հայցէ	19 ո չիք զի մի ի զօրութենէ հատեալք
6 ո չիք առակիս	23 ԲԾ դամոն
7 ՏԾ այլ երկրաւորօքս	23 ո և անգորի և նմանք նոցին անմը- տաց ամբաստանեցան փխ ամբաստ- տանեցան
8 Ըն թթենի է	24 Տ հարուն փխ հարկանեն
9 ՏԾ թէպէտ և փխ թէ և	24 Տ նոքա պատասխանեալ
10 ո չիք ընդ	25—26 Ըն փաստիչք եմք
12 Բ խնկոց փխ տնկոց Ծ խոնկոց	
12 Տ տնկոց փխ ի տնկոց	
12 ո Զի զի է զի փխ Զի է զի	

տել, զի՞նչ առնէին եթէ ոչ լորճէաք, որով շնորհ առնել, քան թէ ամբաստանել պարտիք:

Լուծում առակիս այս է. դառն և ապականիչ է շարութիւն ոգւոյ և դժնդակ ի գործել նախ, և ախտաւորք կամին զի 5 զիւրագործք լինին, զի թէ դժուարաւ գործին և այնքան ախորժեն, զի՞նչ առնէին, եթէ զիւրագործք էին. որ և յայտ իմաստնոց է՝ զի գոհանալի է, և ոչ ամբաստանելի զինամոզէն:

### ԺԶ

10 Յատենի երբեմն յանդիմանել սկսաւ դեղձի զսերկելիլն՝  
ասելով. Դեղին ես տեսլեամբ և դժուարութեամբ մարդկան.  
Իսկ ես՝ բարետեսիլս և զիւրաճաշակ: Եւ նա ասէ. Կեղծա-  
ւոր ես ամենեւին և պատրիչ մարդկան, քաղցր երևիս ի  
ճաշակել, և մտեալ ի յորովայն՝ բազում փնասն գործես: Իսկ  
15 ես դեղին եմ, զի ցաւակցիմ հիւանդաց՝ ի տեղ երթալով և  
զհիւանդութիւն բառնալով, ոչ որպէս դու հալածեսայ ի հիւ-  
ւանդաց:

Յայտնի է միտք առակիս, զի կեղծաւորք միշտ դճմա-  
րիտս յանդիմանեն իբրև զխոշորս վարուք և խիստս մարդ-  
20 կան՝ յորինադրել, և զինքեանս բարէբարոյս և մշտակից,  
սակայն բանք ճշմարտից դեղ են ոգւոց, թէ և զառաջինն  
ընդդէմ երևին. և ընդ նոսա ցաւակցելով զհիւանդութիւնս  
բառնան:

2 n պարտեմք	14 Տn յորովայն փխ ի յորովայն
3 Տ զի դառն լն դառնութիւն	14 n փնաս
4 n չիք նախ, և ախտաւորք կամին զի	15 n զեղեցիկ եմ փխ դեղին եմ
5 Տ զիւրագործ լինիցին	15 n չիք և
5 n գործեն	16 Տn և ոչ
6 B գոր լն զի փխ որ	16—17 n չիք հալածեսայ ի հիւանդաց
10 n Ի յայտնի փխ Յատենի	18 Տ Յայտնէ
10 n սակաւ փխ սկսաւ	18 n միտ
10 Տ զսերկելիլ լն սերկելելի (չիք դ)	18—19 n զճշմարիտն
11 n Դեղնիկ ես	20 ՏBD բարեբոյս լC լուսանցում՝ բա- բեբոյս փխ բարէբարոյս
12 n Իսկ բարետեսիլ և զիւրաճաշակ եմ ես փխ իսկ ես՝ բարետեսիլս և զիւրաճաշակ	21 n հոգւոց
13 n ի մարդկան	22 n չիք և
13—14 n ճաշակումն փխ ի ճաշակել	22 C ընդ նոսքն
	23 ՏD նոցա բառնան



ժէ

- Բամբասել սկսան միանգամայն տունկք ի միասին զընկուղի, և ասեն. Ռիշտ ես ամենևին և տմարդի, կծու և չար, զպտուղ քո բերես անուտելի: Որոց պատասխանեալ ասաց.
- 5 Ո՞չ ապաքէն նման ձեզ առնեմ, զի ո՞ ոք ի ձէնջ նախքան զժամանակն տայ զպտուղ իւր յուտել: Եւ նոքա ասեն. Ի մէնջ ուտեն յառաջ քան զհասանիլն, իսկ դու ճշդիւ պահես մինչ ի կատարած: Եւ նա ասէ. Սակայն և արդ ամենեցուն բնդարձակեմ մարդկան և թռչնոց, ոչ նման ձեզ անկար-
- 10 գարար տալով: Եւ այսու արդարացաւ ի վերայ նոցա. Մահաւանդ զի բազում ի ձէնջ զնոյն գործն, ասաց երկրորդէն իւր. և զի ամբողջ անուտելով ի ժամու մերկանամ զորշտութիւն:
- Ոչ ինչ է տարակուսելի և այս առակ, զի բարեկարգք միշտ
- 15 բամբասին յարբշոյց իբրև ուրիշտք, զբարի մատակարարութիւնն պնդութիւն կոչելով, և անդէպ կերողացն զսաստն՝ զառնութիւն. այլ նա ի դէպ ժամու տալով առատութեամբ՝ բարեմիտ երևի, և այսմ զբազումս ունի վկայս. իսկ վայրապարք անժամ ծախելով զինչս՝ ի ժամու ոչ ունին տալ
- 20 և այնմ արբշիտ երևին:

- |  |   |
|--|---|
| 2 n Բամբասանք փխ բամբասել                            | 12 B անբողջան եմ ուտելով փխ ամբողջ անուտելով /CD անբողջ փխ ամբողջ /n անբողջ անուտելուն շուտելին պահելով փխ ամբողջ անուտելով |
| 2 n տունկք ամենայն                                   | 12 n մերկան փխ մերկանամ   |
| 2—3 n բնկուղին                                       | 12—13 n զորշտութիւնս /CD զորշտութիւն  |
| 3 BD Ռիշտ ես /n ընդտ ես                              | 14 n առակք  |
| 4 n պտուղ բերես անուտելի փխ զպտուղ քո բերես անուտելի | 14 BD բարեկարգ  |
| 4 n որոյ   | 15 BD բամբասեն /n բանպասեն  |
| 5 n որք փխ ո՞ ոք                                     | 15 n զորիշտք  |
| 6 n զպտուղն  | 16 n զսասան փխ զսաստն   |
| 6 n չիք իւր  | 17 n ժամանելով փխ ժամու տալով   |
| 7 n զհասանելն  | 18 n վկայ   |
| 8 n մինչև  | 18—19 n վայրապարքն  |
| 8 n կատարածն   | 20 SC յայնմ   |
| 8 n անդ փխ արդ                                       | 20 n արբշիտք  |
| 9 CD բնդ յարձակեմ փխ բնգարձակեմ                      |   |
| 11 n մէնջ փխ ձէնջ                                    |   |

ԺԼ

Յանմտից ոք ենաս զյունապի՝ կարծելով զնա զժնիկ-  
որոյ զայրացեալ ասաց. Ո՛ր անագորոյն, գտունկ ի պտղոյ  
արժան է ճանաչել, և ոչ ի տեսակէ:

- 5 Նշանակ բերէ առակս զանընտրող դատողս՝ զթագաւորս  
և զիշխանս և զգատաւորս և զառաջնորդս եկեղեցւոյ՝ յան-  
դիմանելով, զի անփորձապէս զատապարտեն, զի ճշդիւ գի-  
տելի է ի գործոց նոցա, ըստ որում տէրն իսկ ասաց. Ի  
պտղոյ նոցա ծանխիք զնոսա և ոչ ի տեսլենէ կամ ի համ-  
բաւէ զատել. որով և բազում փնաս գործի՝ զբարիս իբրև  
10 զչարս խոշտանկելով:

ԺԹ

Մերձ առ սօսի առագանէին երկրագործք զբամբակենիսն,  
և միմեանց պատուիրէին զգուշանալ, զի մի զծառս կոխե-  
15 ցեն զբամբակենիս. և լուեալ սօսոյն զչարացս՝ կոչելով  
զնա ծառ, ասաց. Զիմարդ ինձ համանուն կոչի դա ծառ, զի  
ես այսքան ստուար և բարձր եմ, և զբազում տեղիս ըմբռ-  
նեալ ունիմ: Եւ լու ի լու ոչ զանգիտեալ՝ պատասխանեալ  
բամբակենի ասելով. Բարձր ես և ստուար, սակայն անօ-  
20 գուտ. ոչ ի շինուած և ոչ ի պտուղ և ոչ յայրուհն գովելի-  
այլ թանձր ունելով ստուեր, յորմէ բամբասիս մանաւանդ,  
քան գովիս. իսկ ես թէպէտ փանաքի և տկար, այլ բազ-  
մաշահ՝ ոչ միայն մեծատանց, այլ և աղքատաց, ի տաժել,  
ի քաղել և ի գործել, և լինիմ հանգերձ որպէս զասր յոչ-  
խարաց և զվուշ ի կտաւէ և զմետաքս յորդանց. յորոց և

2 Տ եհար փխ եհատ	17 n այնքան
2 B դժնդիկ	17 n ստուար եմ և բարձր
2 n յորոց	18 B գանգիտել /n գանգիտեաց
6—7 Տ զնոսա յանդիմանելով	18 n պատասխանեց
7 n ճշմարտիւ փխ ճշդիւ	19 n չիք և
8 Տ ասաց թէ	20 n այրուհն (չիք յ)
9 n չիք ոչ	21 A շուրք փխ ստուեր /B սուէր
10 C չիք բազում	22 ՏB քան թէ /C չիք քան
10 A փնասք	22 n չիք թէպէտ
13 B երկրագործք	23 n մեծամեծաց փխ մեծատանց
14—15 An կոխիցեն	24 ՏBCD չիք և (1)
15 C սօսւոյն /n սօսոյն	24 B լինէս
15 n չարացաւ	24 B ոչ փխ որպէս
16 ՏB ասաց թէ	25 A կտաւատէ
16 A որ փխ զի (2) /C և փխ զի	25 BCD զմետաքսէ
/D և փխ դի ես /n որ փխ զի ես	

գու. ոչ ինչ ունիս բնաւ, բայց միայն խոզակ: Եւ այսու  
յանդիմանեալ լռեաց:

Զպարծանս սնոտիս լոեցուցանէ զմարդկեղէնս առակս,  
զոմանց զոր ունին ի տեսակ և ի հասակ, և պատահին բա-  
5 զուս անզում անօգուտ կենցաղոյս, նմանապէս և չոգեորացն.  
Կայլս յականէ խոտեն զակարս և զկարճս հասակաւ, որք և  
պիտանիք իցեն ի բազում իրս մարդկան և փարթամացու-  
ցիչք, որք և յիրաց անտի գովին, և նոքա յանդիմանին ի  
սնոտի՝ գործոց:

10

Ի

Տրտունջ եղև տնկոց ամենեցուն զթագաւորէն իւրեանց,  
թէ առաջօք բաշխեաց զիւրաքանչիւր պատիւ՝ զոմանս ի  
տունս բնակեցոյց, որպէս զնարինջ և զայլս, և զոմանս ի  
բուրաստանս և յայգեստանս, և պատուին ի մարդկանէ, և  
15 զոմանս իբրև զանարգս՝ ի վայրի զպտղաբերս, և կերակուր  
լինին խոզից և կոխան զազանաց, և զայլս անտառս՝ որ-  
պէս զմայրս, զսարդի և զնոճի և որ նման սոցին, զոր հար-  
կանեն անխնայ, և անարգ քարշանօք ի շինուածս և յայ-  
բուսնս պատրաստեն. Եւ նորա լուեալ կոչեաց զնոսա. և սաս-  
20 տեալ ի վերայ նոցա և ասէ. Ո՞չ գիտէք եթէ զխորհուրդ  
Թագաւորին ոչ ամենեքեան զիտեն, որպէս և ոչ զԱստու-  
ծոյն. և թէ այլ ևս յանդգնիք, մեծագոյն ունիք պատուհա-  
սիլ: Եւ զարհուրեալք լռեցին:

1 A չիք ինչ

1 B ուսիս փխ ունիս

3 Տ Բանք առակիս զպարծանս սնո-  
տիս լոեցուցանէ զմարդկեղէնս  
փխ Զպարծանս սնոտիս լոեցու-  
ցանէ զմարդկեղէնս առակս

4 n տեսակս փխ ի տեսակ

4—5 n և բազում անգամ պատահին

6 n չիք զայլս

7—8 A փարթամեցուցիչք

8 n գովեն

12 A եթէ փխ թէ

12 n պատիւն

12 Տ զի զոմանս

13 n և հառինճս

13 Տ չիք և զայլս

14 Տ զոմանս յայգեստանս

14 n չիք և (3)

15 A իբր

15 Տ որ և փխ և

16 n խոզաց

16 B չիք և (1)

16 An կերակուր փխ կոխան

16 SC յանտառս

17 n զմայրի և զսարդի

18 A չիք ի /C լուսամբուս ի շինուածք

20 SC ասէ փխ և ասէ /n և ասէր՝

20 n թէ փխ եթէ

21—22 ACD զԱստուծոյ

23 n զարհուրեալ

Հանճարեղս զմեզ լինել կամի առակս, և հնազանդս Աստուծոյ և թագաւորաց, և ոչ արտնջել զանճառ խնամոցն Աստուծոյ, և ոչ զժածուկ խորհրդոց թագաւորաց, այլ իւրաքանչիւր գործոյ ուշ ունել: Զի ոչ եթէ վայրապար ինչ եղև կարգել ի թագաւորէն տնկոց զնոսա, որպէս և ոչ Աստուծ և ոչ թագաւորք տնօրինեն վայրապար. զի զոմանս յայդիս կարգեաց ի պտղաբերաց և զոմանս ի բուրաստանս, և զոմանս համացեղս յանտառս, այսպիսի պատճառաւ՝ զի գազանաց և անասնոց կերակուր լիցին և մի նեղիցեն զմարդիկ զտածեալս ի նոցանէ ուտելովս. և թէ ի տունս ոմանք տնկեցան, անուտելիք մանաւանդ են, ուստի համարին մարդիկ լինել ի զբօսանս տեսեան և ի բուրումնս, զի կերակուր է ըսընգաց բուրումնս, և տեսեան ի զուարճացումն՝ որպէս բուրաստանք, նա և ի բժշկութիւն: Եւ թէ այլք անտառք ի շինուածս և յայրումնս պատշաճեցան՝ և այս նախախնամաբար, զի մի լիցի սր զպտղաբերս հարկանիցեն ի շինուածս և յայրումնս: Այսպիսի և Աստուծոյն տնօրինի և թագաւորաց անքննելի դատաստանաւ, և թէ ոք յանդգնի անկարգաբար ասել՝ դատապարտի:

20

ԻԱ

Ներթեալ ոմն կարօտ ի ձմերայնի ի դրախտ՝ քաղել և ու-

- |  |   |
|--|---|
| 1 BD լինի ռ լինիլ  | 12 D չիք ի (!)  |
| 2 n չիք ոչ   | 13 A սընգաց լBCD բորնկաց                                |
| 3 BCn չիք ոչ   | 13 A տեսեանն  |
| 4 BCDn գործոց  | 13 A զուարճումն   |
| 5 n նոցա   | 14 BD և նա փխ նա և                                      |
| 6 n տնօրինին   | 14 S ի բժշկութիւն ևս                                    |
| 7 n չիք ի պտղաբերաց և զոմանս ի բուրաստանս  | 14 S Եւ այլ թէ փխ Եւ թէ այլք լA եւ եթէ այլք ռ եւ թէ այլ |
| 8 S գհամացեղս  | 14—15 C յանտառս փխ անտառք                               |
| 8 n զի այսպիսի   | 16 CDn չիք որ   |
| 9 S լինիցին  | 16 A հարկանել փխ հարկանիցեն լn հարկեալ                  |
| 9 S նեղեցեն ռ նեղեցեն  | 16—17 BD ի շինուած                                      |
| 9—10 n զմարդկանս տարածեալս ի նոցանէ ուտեն փխ զմարդիկ զտածեալս ի նոցանէ՝ ուտելովս | 18 S գանխուլ և անքննելի                                 |
| 10 AC ուտելով  | 18 A եթէ փխ թէ  |
| 12 n լինին   | 21 A ձմերայնի լD ձմայնի                                 |

տել պտուղ. և տեսեալ զպտղաբերս իբր զգոսացեալս, սկսաւ թշնամանել և տրտնջել և հարկանել և ասել. Ընդէ՞ր ոչ ունիք պտուղ զի կերայց և յագեցայց, զի և ոչ մի ունիք պտուղ մրգոյ. և առաւել ևս զչարէր: Եւ մի ոմն ի ծառոց քաղցրութեամբ և հաւանական բանիւ ասաց. Մի տրտմիրայր դու, և մի վայրապար բամբասեր՝ զի մեղանչես. թէպէտ և կարօտեալ ես՝ զիմորդ ոչ զիտես թէ ի ձմերայնի հանգչիմք և յարմատս մեր զօրանամք, զի կարասցուք ի զտրնայնի ծաղկիլ, և յամարայնի՝ սնուցանել պտուղ, և յաշնայնի՝ հասանիլ և կերակրել. Ընդ է՞ր ոչ եկիր յորժամ մարդ և անասուն և գազան վայելէր պտղօք մերովք. դու յամենայնի և յամենայն ժամ պատրաստ ես ի յուտել, այլ ոչ մեք. երթ և ի դէպ ժամու եկեալ կերիցես որչափ և կամ իցէ քեզ: Եւ գնաց յուտով ասացելոցն:

15 Դէմք առակիրս զհիւրս և զսղքատոս խրատէ, զի յանդէպ երթեալ ժամու զմեծարանս խնդրեն՝ հիւրք պատրաստ յուտել և ի հանգչել, և աղքատք զպէսս ընուլ կարօտութեան.

1 ՏԽն էրբև  
 2 n տրտնջալ  
 2 Տ ասէ փիս ասել  
 3 n չիք և յագեցայց, զի  
 4 n զպտուղ  
 4 ACD չիք և  
 3—4 B չիք զի կերայց և յագեցայց, զի և ոչ մի ունիք պտուղ մրգոյ և  
 4 n և շարէք փիս ևս շարէր  
 4 Տn ծառոցն  
 5 Տ բանիւք  
 7 BC չիք և  
 7 n եթէ փիս թէ  
 7 A ձմերանի  
 8 B զարգանամք փիս զօրանամք  
 D զարմանամք  
 8 C չիք է  
 9 A զարնանի /B զարնանային /D զարնային /n զարնան  
 9 A յամարանի /n յամառայնի  
 9 n զպտուղ  
 10 A յաշնանի /BD յաշնանայի /n աշնայնի

10 Տ հասուցանել փիս հառանիլ /C հասանիլ  
 11 n մարդ և գազան և անասուն վայելին  
 11 A վայելէր և գազան  
 11 Տ պտղովք  
 11 n մերօք  
 12 n ամենայնի  
 12 An ժամու  
 12 n է ուտել  
 13 Տ այլ մեր ոչ  
 13 n զիպօղ փիս դէպ  
 13 n եկ փիս եկեալ  
 13 n կերցես  
 13—14 n որչափ և պիտոյ է բեղ փիս որչափ և կամ իցէ քեզ  
 14 Տ գնաց այլն  
 14 A ասացելոցն /BC ասացելովքն  
 15 n գհւրքն  
 15 n հանդէպ  
 16 n հիւրքն  
 16 AB պատրաստք  
 16—17 n ուտել և հանգչել փիս յուտել և է հանգչել

այլ ոչ նմանապէս ասպնջականք պատրաստք հանգիւղին  
 յամենայն ժամ, և կամ բարեզործք՝ յողորմութիւն:  
 Իսկ յամբաստանելն նոցա և ի տրտնջել՝ չէ արժան՝ զչա-  
 րանալ, այլ քաղցրութեամբ պատասխանել և զպատճառս  
 5 անպատրաստութեանն ճառել, և զայլ ժամու՝ զառատածեո-  
 նութիւնն. զոր բազումք գտին զհանգիստ և զողորմութիւն.  
 և որքան հնար իցէ առձեռն պատրաստութեամբ ընդունել,  
 և խոնարհութեամբ զպէտս նոցա լցուցանել խոտտանայցէ,  
 և սիրով և յուսով զնոսա զարձուցանիցէ:

10

ԻԲ

Սոհեմ ոք Եհարց զձառս, եթէ զի՞նչ են պատճառք, զի  
 որքան բարձրանայք, այնքան արմատս ի խոր ձգէք: Եւ  
 նոքա ասեն. Սոհական գուլով զի՞նչ ոչ զիտեա՝ եթէ ոչ  
 կարէաք այսքան ոստս բառնալ և ընդդիմանալ հողմոց  
 15 բռնութեան, եթէ ոչ զարմատս ի խոր՝ և բազմոստս առնէաք.  
 ասանես զեղբարսն մեր զհաճարի և զփիճի, զի ոչ են  
 բազմոստք և ոչ ընդդիմանալ հողմոց կարեն, ի խոր ար-  
 մատս ոչ ունելով:

20

Սրատէ առակս՝ որք կամին ուսանել հաստատութիւն իրի  
 զհոգեւորաց և զմարմնաւորաց. զի արժան է հաստատուն  
 հիմամբք սկզբնաւորել, զի մի ի փորձութեանց անկանիցին

1 An պատահին փխ հանգիւղին  
 2 CDn չիք յամենայն ժամ  
 3 Cn Եւ փխ Իսկ  
 3 n չիք է  
 3 D տրտնջելն  
 3—4 A չէ արժանս չարանալ  
 4 B պատասխանել  
 5 A անպատրաստութեան  
 5 B ժամս  
 5—6 A զառատածեոնութիւն  
 6 BCD հանգիստ և ողորմութիւն  
 5—6—7 n չիք զառատածեոնութիւնն,  
 զոր բազումք գտին զհանգիստ և  
 զողորմութիւն և որքան հնար իցէ:  
 7 n առատածեոն փխ առձեռն  
 7 A պատրաստութեամբքն  
 9 n ավլցն՝ առ Աստուած  
 11 n գծառ

11 An զի՞նչ իցէ պատճառ փխ զի՞նչ են  
 պատճառք  
 12 BD ի փրձել խոր ձգէք փխ ի խոր  
 ձգէք  
 13 BD հական փխ Սոհական  
 14 A այնքան  
 15 C չիք ոչ  
 15 An չիք է  
 15 Bi) բառնէաք փխ առնէաք  
 16 A սեցես  
 16 n զեղբարս  
 16 A զփէճի  
 19 A զհաստատութիւն  
 19 A չիք իրի  
 20 An հաստատուն և անշարժ  
 21 n հիմամբ  
 21 BD չիք է (1)  
 21 C փորձութիւնս, որի դիմաց՝ լու-  
 սանցում՝ փորձութեանց

բունաւորաց՝ ի դիւաց կամ ի մարդկանէ, և բազմամեղուն գիրքն առնիցեն. ապա եթէ ծանծաղ և ի վեր ի վերոյ սկսանիցին՝ դիւրակործան լինիցին, որպէս տեսանն ուսուցանէ առական:

5

ԻԳ

Նշենիք քաղցր և դառն՝ եղբարք գոլով համամարք և ոչ համահարք, և նեղեալ ի դառնութենէ եղբօրն՝ արար իւր բարեկամ և եղբայր վկասկենի, բարոյակից զնա գտեալ ըստ երկուց սրակաց. և ի բաղմաց մեղադրեայ, ասաց. Որ ըստ կամաց իմօց է, նա է իմ եղբայր: Եւ ոչ ոք կարաց ասել ինչ նմա:

10

Քաջայայտ իսկ է առակս. զի թէպէտ հարազատք իցին եղբարք, և ընդդէմ միմեանց պատահին բարուք՝ հարկաւորաբար քակտին ի միմեանց և զօտարս բարոյակիցս լաւ համարին. և թէպէտ մեղադրին՝ ոչ ոք կարէ արդարանալ ի վերայ նոցա. զոր պարտ է ոչ այնպէս յոռի գտանիլ որպէս զի այսպիսի կարգի իցէ լուծումն:

15

ԻԴ

Մեծաբանեալ սնափառէր կաղնի՝ ասել զինքն թագաւորազն յաղագս հասակին՝ հօր զօրութեամբ, իբր ի Լիբանանս բնակեալ հսկայազօր. և խորհէր առ աթուր զամենեսեան հարկանել. իսկ արքայկաղնի ոչ ժուժեալ, յանդիմանական վարեցաւ առ նա բանիւ, ասելով. Բազումք համաման քեզ ոչ պարծին, սակայն և ոչ զանխլանան փառք

20

1 SBCDn բազմաբեղուն

2 n թէ փխ եթէ

2 n ծանծաղս

2 n չիք և

2 C վեր փխ ի վեր

3 BC սկսանիցեն

3 A լիցին

3 SD տեսան / Cn տէրն

4 n առակաւ

6 n եղբայր

6 BD համամարգ

6 n չիք ոչ

8 n գիտել փխ գտեալ

10—11 SC նմա ինչ / n ինչ սսել նմա

13 n բարուք փխ բարուք

14 S բարոյակից

15 n համարեն

16 n գտանել

16—17 S չիք զոր պարտ է ոչ այնպէս յոռի գտանիլ որպէս զի այսպիսի կարգի իցէ լուծումն

20—21 A զբնակեալս ի Լիբանան փխ ի Լիբանանս բնակեալ / n զբնակեալս ի Լիբանան / C Լիբանան փխ Լիբանանս

21 A հսկայազօրս / n հսկազօրս

21 n առն աթուր

22 CD արքայակաղնի

22—23 D յանդիսական փխ յանդիմանական

23—24 A համամանք

24 AD զանխլանայ / B զանխնայան / n անխլան

նոցա՝ ի պտոյ առաւել քան ի հասակէ գովեալք. զի՞ այդպէս յանդգնիս. ես և ոչ մի ինչ եմ, բայց մարդիկ զպտուղ իմ ուտելով՝ և զիս ևս յարգեն. այլ պտուղ քո ի դարմանս կայ խոզից: Եւ զայս ասացեալ լռեցուցանէր, ծիծաղելի զնա ցուցեալ:

5 Միտք առակիս յայտնի է, խրատելով զանապարծս՝ որք յաղգս և ի տեսակս և ի զօրութիւնս պարծին՝ ոչ ուսեալք յիմաստնոյն, եթէ գովեսցէ զքեզ ընկերն և մի դու. այլ նոքա՛ զխոտելին առ ինքեանս թաքուցանեն, սակայն ի գիտողաց յանդիմանին, ոչ ունելով պիտանի ինչ կենցաղոյս, նա և ոչ հոգևոր ինչ. և որք ի նմանէ այպանին՝ բազում անգամ քան զնա լաւագոյն գտանին, և ընդունելիք մարդկան լինին. և նոքա անարդ և ծիծաղելիք ի բաց խոտին:

ԻԵ

15 Բողոք առ միմեանս կալան ցարասի և հաւամբզի, քանզի և նոքա տունկք գոլով, սակայն պակասամիտք. և տըրտնջէին ասելով. Զիմրդ նման մեզ լինելով մրտի տեսլեամբ, և փահաքութեամբ վարդ, և այնքան պատուին՝ զի ի տունս բնակեն ճոխագունից և յեկեղեցիս, և մեք անարգ յինիմք գործիք՝ զաւելորդս տանց և գռեհից մաքրելով. 20 Զայս ասելով՝ զանուշահոտութիւն նոցա և զբժշկութիւնն և զպիտանութիւնն թագուցանելով, և զհամեմատութիւնն ինքեանց առաջի դնելով՝ զամբաստանութիւնն աճեցուցանէին:

- |                             |   |
|-----------------------------|---|
| 2—3 n իմ պտուղս ուտելով փխ  | 12 An պատահին փխ գտանին                 |
| զպտուղ իմ ուտելով           | 13 A անարգք                             |
| 4 n ասէր փխ ասացեալ         | 13 D խոտեն                              |
| 4 B խեցուցանել              | 15 n ցաղասի                             |
| 7 SAD յաղգք ին ազգ          | 17 C յիք լինելով                        |
| 7 An տեսակ                  | 17—18 n տեսլեամբք                       |
| 7 An զօրութիւն              | 19 n և փխ ի                             |
| 7 A պանձան ՚B պարծանս       | 19 n եկեղեցիս                           |
| /Dn պարծան                  | 20 n գռեհիս                             |
| 8 BD իմաստնոյն ՚n իմաստնոցն | 21 An զբժշկութիւն                       |
| 8 n յիք բնկերն              | 22 A զպիտանութիւն                       |
| 8 n ոչ փխ մի                | 22 An զհամեմատութիւն                    |
| 9 n ատելին փխ խոտելին       | 22 B յիք թագուցանելով և զհամեմատութիւնն |
| 11 SBD հոգևոր               | 23 A զամբաստանութիւն                    |
| 12 SC դնոս                  |   |



5 Այսպիսի է առակիս տեսութիւն. բազումք նորամուտք ի կրօնաւորաց յորժամ ըստ պատշաճի նոցա ի խոնարհագոյն գործ ինչ որոշեն, քրթննջին՝ թէ մեզ նման ձեռով և այլք են կրօնաւորքն, զիւրդ պատուին և ի գործ պարկեշտ կան, և

10 յայտքան անարգութեան մեք, և զնոյց արժանի պատուոյ զվարս թաղուցանեն. զի ոմանք քահանայք իցին և զնմանութիւն տեսան վարուց ունին՝ նման վարդի, և այլք՝ ի մանկութենէ կուտութեամբ անուշահոտեալք՝ նման մբտի. իսկ նոքա անգիտանալով զինքեանս վայրապար ամբաստանեն,

15 Զբազումս ի գիտելեաց և յանգիտելեաց տնկոց թողաք իբր համագօրս յօրինակս և յառակս, և զառեալ նշանակս շափաւորապէս համեմատեցաք՝ պատնասու տալով տեսողաց բանին նմանապէս գրեթիւ լցուցանել: Եւ արդ փոխանցելի է մեզ և յայսն, այսինքն ի բոյս ծաղկանց և սերմանց և բանջարոց, և ի նոցանէ շափաւորապէս զգաղափարսն առնլի է՝ բարոյապէս և առասպելօրէն, և զի թեպէտ անբմբհն ասացեալքդ կարծի, սակայն թանճրամտաց առաել ախորժելի երևին, որոյ աղագաւ զսակաւոյ յօժարեցաք գրել:

20

ԻԶ

Տեսեալ ապա այնուհետև բուսոց թէ բարևք կարգաւորութեամբ վարին հաստատելով ինքեանց թագաւորութիւն

1—2	n ի նորամուտք ի կրօնաւորացն	2	B տո. համագօրս
2	n ի փխ ըստ	13	n շիֆ տալով
2	n խոնարհագոյնս	15	n այլսն
3	n թէ փխ և	15	n ի բոյս
4	CD կրօնաւորք	15—16	C բանջարաց n բանջարոցն
4	A պարկեշտական փխ պարկեշտական B պարկշտական	16	n զգաղափարս
5—6	n արժանի վարս պատուոյ	16	B առնելի է
6—7	C զնմանութիւնն	16—17	B բարևոտալէս D բարևոյալէս
7	A այլ	17	n ասացեալք
9	B նոցա	18	C կարծին
9	n վայրաբար	19	D յաւժեցաք փխ յօժարեցար
11	n անգիտելեաց	21	B բուսոյց
11	SBCD շիֆ տնկոց	21	A բարևոք
		22	A թագաւորութեան n զթագաւորութիւն

առնակք, նախանձ բերեալ ընդ նոսա՝ կամեցան և ինքեանց կարգել թագաւորութիւն: Եւ եղև ոչ սակաւ հակառակութիւն, զի ոմանք ասէին զուշան լինել, և այլք զախրի-  
 5 զան, և բազումք զհամասպրան, և ամենեցուն հաճոյ  
 թուեցաւ լինել համասպրանն, այսպիսի յեղանակաւ. երկոտասան մասն է երկրի և երկոտասան ոտա է համասպրանին, և պարտ է նմա թագաւորել, զի ամենայն տիրիցէ աշխարհի. և մանաւանդ զի մեծամեծ ունելով զօրութիւն բժշկութեան՝ զհիւանդս բժշկիցէ և քաջատես առնիցէ, և ի  
 10 վերայ ծովու զնալ տայէ, և իմաստութեամբ զտգէտս լցցէ: Եւ ապա ամենեցուն հաւանութեամբ թագաւորեաց համասպրանն: Եւ կարգեաց զընաբոյսս ծաղկանց ի զօրսանս և ի բժշկութիւնս, և զբանջարս դալարիս՝ ի կերակուրս և ի բժշկութիւնս, սոյնպէս և՛ զսերմանս, և ամենայնիւ զարդարեաց զտուն թագաւորութեան իւրոյ: Եւ խնդութիւն եղև բնաւից:

Իմաստք առակիս ծանուցանի այսպէս. տեսեալ ազգի մարգկան զերկրաւորս թագաւորութիւն, ըստ կարգի և զերկնաւորս խնդրէին թագաւորութիւն. և ոմանք կարծեցին զարեգակն և այլք՝ զլուսին: Եւ յերեւել Բանին Աստուծոյ և ի

- |   |  |
|---|--|
| 1 n շիֆ և ինքեանց                                     | 13—14 n շիֆ և զբանջարս դալարիս՝ ի կերակուրս և ի բժշկութիւնս և          |
| 4 BC զհամասպրանն և զհամասփիւռն                        | 14 S զարմանս փխ բժշկութիւնս  |
| 4—5 BC շիֆ և ամենեցուն հաճոյ թուեցաւ համասպրանն       | 14 ABCDn շիֆ սոյնպէս   |
| 5 n համասպրանն  | 14 S զսերմանս ամենայն  |
| 5 n եղանակաւ  | 14—15 SA դարդարեաց ամենայնիւ և ամենեցուն զարդարեաց                     |
| 6—7 n համասփիւռն                                      | 15 A իբրփխ իւրոյ n իւրոցն  |
| 7 BCn շիֆ և   | 16 S բնաւիցն   |
| 7 SC աիբեցէ   | 17 n ծանուցանի առակիս •  |
| 7—8 D աշխարհ  | 18 A զերկրաւոր   |
| 8 SA շիֆ և  | 18 A ըստ կարգի եղեալ   |
25 A զազվես |BD զազուես

ուս). Այր բարեպաշտ է այս անուն գեղ, երթիցես անդ և  
 սացէ մեղը որ յոյժ օգուտ է քեզ: Եւ իբրև մերձ եղև ի  
 դեօղն, և շունք անդէն փախուցին: Եւ սկսաւ մեղադրել  
 աղուեսուն. և ասէ աղուէս. Առանց դպրութեան է այրն, որ  
 5 զքեզ ի շանցն ոչ ազատեաց և ոչ ետ դեղ. և արդ եկ տա-  
 բայց զքեզ առ կրօնաւոր ոմն հմուտ աստուածեղէն բա-  
 նից: Իբրև հտես կրօնաւորն՝ սկսաւ թշնամանել զնոսա. և  
 աղուէսն եցոյց զմուտ մեղուոցին, և արջուն մտեալ՝ զմի  
 հկեր փեթակ, և զմի առեալ գնայր. և կրօնաւորն անխձա-  
 10 նէր զաղուէսն, իբրև զպատճառ փաստեն. որում ասաց, եթէ  
 տմարդութիւն արար քեզ զայդ, զի ոչ ետուր դեղոյ, ետուր  
 փորոյ:  
 Չմիտս յայտնի ունի առակս. զի աշխարհականն իբրև  
 զտղէտ անփաստ մնաց, և ի կրօնաւորէն վրէժ առաւ իրա-  
 15 տացի. զի յորշտութենէ բազում այսպիսի պատահի փաստ ի  
 նենգաւորաց յառաջնորդութենէ, ի գազանաբարոյ արանց:

ՁԸ

Եգիտ աղուէս զգայլ կուրացեալ, և եմուտ նմա առաջ-  
 նորդ վարձուց աղապաւ. և ի միում աւուր գայթակղեցոյց  
 20 ի ջուր ակամայ. և նա ոչ հաւատայր, այլ սպասէր վրէժ  
 առնուլ. և երկուցեալ աղուեսուն կամէր փախչել, և ոչ կա-  
 բէր, զի ըմբռնեալ ունէր. և ասէ. Վաղիւ գատիկ է, տա-  
 բայց զքեզ յեկեղեցին զի կերիցես մատաղ. Եւ ուրախ եղ-  
 ևալ, և զնացին ի վաղիւն. և տարեալ զնա՝ արկ շանց. և

- |                                |                                |
|--------------------------------|--------------------------------|
| 1 SAC Յայր փխ Այր              | 13 SBCD շիք Չմիտս յայտնի ունի  |
| 1 S ABCD զեղ փխ գեղ A զեղ      | առակս                          |
| 2 D իբր փխ իբրև                | 13 A աշխարհական                |
| 3 S գիւղն                      | 15 A այդպիսի                   |
| 3 B մեղադրէր                   | 16 SAC առաջնորդութենէ          |
| 4 AB աղուես                    | 16 D գազանաբարոյ               |
| 8 BD աղուեսն A աղուես          | 18 AB աղուես                   |
| 9—10 A անխձէր զաղվէսն իբր      | 20 S յակամայ                   |
| 11 C տմարդութիւնդ              | 20 BD սպասել փխ սպասէր         |
| 11 12 S ետ անպարտ հմ. զի ոչ ե- | 21 A աղուեսն կամեցեալ փաղչել   |
| տուր դեղոյ՝ ետուր փորոյ. և ոչ  | 22—23 A կամիտ տարայց յեկեղեցին |
| ետուր զեղ փխ զի ոչ ետուր զե-   | զքեզ                           |
| ղոյ՝ ետուր փորոյ BD և ոչ ե-    | 23 A և փխ զի                   |
| տուր զեղոյ ետուր. C շիք ամ-    | 23—24 S ուրախ եղեալ զայլուն    |
| բողոց նախ.~ը                   |                                |

ասէ. Ա՞յս է մատաղն, ո՞չար սպասաւոր: Եւ նա ասէ. այդ է, զի այդպիսի չար կուրի՛ այդ, և ոչ այլ ինչ վայելէ:

Զառակս գայս պարտիմք իմանալ. զի զղջացեալ նենգագործք և առաջնորդեն կուրաց, և թէ յայլ ինչ բարիս դարձեալք չարաբարոյք հրապուրեն զնոսա՝ յառաջիկան դատնան նենգութիւն, որպէս պատահեաց զայլուն և աղուեսուն:

ԶԹ՝

Գայլու ծերացեալ, զնաց առ հօտն, և ասէ. Ապաշխարող այժմ եմ, և շատ գձեզ արտմեցուցի, և վասն այն կամիմ գալ և աւել տան ձեր ածել, զի թողութիւն լիցի, և զմանկունս ձեր պահել յայլ ևս դայոց: Եւ ուրախացեալ շանցն ասեն. Մի ևս մեղանչել նմա: Եւ կայր և սպասէր՝ մինչև եղեն զառինքն մեծ, և սկսաւ յուսել և ի պատառել, մինչև տեսաւ ի բազմաց՝ և ստատկեցաւ:

15 Խրատ այսպիսի տայ առակս՝ ոչ հաւատալ փութով սովորից չարաց, զի հնացեալ՝ բնութիւն լինի, և առ նոյն քարշէ՛ լինելով որդի սատակման:

Գ

20 Շանց առաջի եկեալ՝ ասեն թագաւորին իւրեանց. Ամենեցուն ետուր պատճառ կենաց, մեք զիմորդ ապրեսցուք: Եւ ասէ. Ի դուռն մարդկան սպասաւորեսջիք և ապրեսջիք: Եւ ասեն. Այդ մեզ բաւական է, ապա եթէ հիւր ոք մեզ եկեսցէ, զի՞նչ արասցուք: Ասէ ցնոսա. Այնքան զգեղջիք, զի դարձեալ մի եկեսցէ:

25 Զհիւրամերժս և զօտարատեացս առակս յանդիմանէ, զի իբր օրինօք ունին զինքեանց հոգալ կեանս, և ատել զհիւրս:

3 Տ իմանալի է գառակս փխ Զառակս 13 B ուռել  
գայս պարտիմք իմանալ՝ A Առակ 13 ABD պատճառել փխ պատառել  
3 BC զղջացեալք 17 BD գարշէ փխ քարշէ  
4—5 Տ յի՛ք յայլ ինչ բարիս դարձեալք 19 m յի՛ք առաջի  
5 A յի՛ք հրապուրեն զնոսա 19 m ցթագաւորն փխ թագաւորին  
5 BCD դառնալ փխ դառնան 21 SBC յի՛ք Եւ ասէ. Ի դուռն մարդկան  
6 Տ յի՛ք՝ որպէս պատահեաց զայլուն և աղուեսուն 21 սպասաւորեսջիք  
7 A հաւատս 22 SC Թէ փխ եթէ  
11—12 A ասին շանց 23 Am գայցէ փխ եկեսցէ  
23 SBCD Եւ ասէ  
26 m իբրի գորինտկ փխ իբր օրինօք

ՂԱ

Մկունք համանգամայն հրեշտակս առաքեն առ կատունս  
 և ասեն. Զթնչ քեզ մեղանչեմք, որ այդքան զմեզ հալածես,  
 զթնչ քո ուտեմք: Ասէ ցնոսա. Ո՞չ գիտէք եթէ յայն սակս  
 5 զմեզ մարդիկ զարմանեն, զի զամբարս նոցա մեք պահու-  
 ցուք. արդ եթէ դուք այնմ ոչ մեղիցէք, համարձակ շըր-  
 ջեսցիք, ոչինչ ձեզ ֆրատեցից, և զայս երդամբ հաստա-  
 տեցից: Եւ ձեռն եղեալ ի գլուխ երզուաւ: Եւ մկանցն հա-  
 մարձակեալ զանկեալ հատսն առնուլ, և յարուցեալ կատուն  
 10 զբազումս սատակեաց: Եւ ասեն. Ո՞չ ապաքէն երզուար ան-  
 կեալ հատի ոչ առնուլ վրէժ: Եւ նա ասէ. Ոչ երզուայ, այլ  
 ըստ սովորութեան զգլխով զձեռս արկի:

Նման իսկ է առակս կեղծաւոր երզուեցողաց, զի և ոչ  
 պայմանի մնան, այլ ստեն՝ զիպող միայն ժամն գտեսոյ.  
 15 որպէս և մահմետականք:

ՂԲ

Ընձու զհետ վազեալ որսու՝ միջակտուր կղեալ՝ զչար-  
 եալ հարկանէր և անիծանէր զկորիւնն իւր, և զարձեալ զըզ-  
 ջացեալ ողբայր:

20 Զխստասիրտս առակս պարսաւէ, զի ի դիպուածս չարս  
 անհամբեր եղեալ՝ զընտանիս տրտմեցուցանեն, և դարձ-  
 եալ զղջանան:

ՂԳ

Գող զբորէ ըմբռնեաց առիւծ. և նա ասէ. Զմեռեալս ու-

- 2 B համայնգամայն
- 2 CD զհրեշտակս
- 3 A ուտեմք, որ այդքան մեզ հա-  
լածես
- 4 S Եւ նա ասէ փիս Ասէ ցնոսա
- 5 S զարմանեն մարդիկ
- 7 S և ոչ ինչ
- 7—8 S Եւ ձեռն ի գլուխ եղեալ երզ-  
մամբ հաստատեաց զայս փիս և  
զայս երդամբ հաստատեցից: Եւ  
ձեռն եղեալ ի գլուխ երզուաւ:
- 8—9 S համարձակեալ կամեցան
- 9—10 S և յարձակեալ ի վերայ կա-  
լաւ զբազումս ի նոցանէ փիս և  
յարուցեալ կատուն զբազումս  
սատակեաց:

- 11 S վրէժս
- 11 A ոչ լինել վրէժխնդիր փիս ոչ առ-  
նուլ վրէժ:
- 13—14 S ոչ պայմանի մնան և ոչ ուխտի
- 15 S յի՛ք որպէս և մահմետականք
- 17 A կղ փիս եղեալ
- 17—18 C զչարէր
- 18 A անիծէր
- 18 A զկորիւնս
- 20 S դիպուածս չարի փիս զիպուածս  
չարս /ABD դիպուած չարս
- 21 BCD անհամբերք
- 24 C գորբոնի
- 24 D առիւծ

տեմ, զի կենդանեաց ոչ յաղթեմ, իսկ դու զի յաղթող ես՝  
անդանդազ զայդ գործես:

Զբռնակալ իշխանս առակս բամբասէ. զի զգողս պատժեն,  
և ինքեանք բռնակալութեամբ դնուլնս գործեն, ըստ յանդի-  
մանութեանս առաքելոյ:

ՂԴ

Զճագար հնարց աղուէս և ասէ, եթէ զլ՞ է զի ես նուազ  
միշտ, և դու այդքան ստուար: Եւ ասէ. Զի ոչ բազում ինչ  
նոգամ և գտնալ զամենայն ինչ ուտեմ:

10 Զանհոգութիւնս առակս ցուցանէ՝ պատճառ առողջութեան,  
և զգլխւրաճաշական առողջութեամբ:

ՂԵ

Հարցաւ նապաստակ, թէ ընդէ՞ր այդքան զանգիտող ես:  
Եւ ասէ. Զի շունք և արծիւք և մարդիկ ևս որսան զմեզ,  
15 որով իրաւացի է երկնչիլ:

Յառակէս խրատել ի դէպ է. զի բազում են թշնամիք  
կենաց մեր, և միշտ երկիւղիւ զգուշանալի է:

ՂԶ

Մեղադիր եղեն սմանք կղբու, եթէ զիմօրդ ի ջուր յա-  
ճախ զեզերիս: Եւ ասաց. Զի ոչ շատանան զերկուորիս առ  
կենօք առնուլ, այլ և մահուամբ մերկ ի մորթոյ առնեն:

20

Զչարաց տերանց առակս ազդէ, զի կենօք տանջեն և  
մահուամբ:

ՂԷ

Զվազր նախատէր որսորդ, զի ձգելով զնստած իւր եկեղ  
դնա: Եւ նա ասէ. Զիմօրդ և դու չիցես բազում ամբաստա-  
նութեան արժանի, զի նետիւ և սրով խոցես զիս:

25

Այնոցիկ առակս նմանի, զի զիմեն զոմանս սպանանել  
և ընդզիմակցացն նախատինս դնեն, թէ ընդ էր ոչ տան  
զինքեանս սպանանել, որ ոչ է զիւրին առնել:

4 A դնոյնս

7 A աղուես /B աղուեսն

8 ՏB Եւ նա ասէ

11 Տ անհոգութեան փխ առողջու-  
թեամբ

14 A արծուիք

14 A մարդիկք

15 BC և որով /A որովք

15 ՏBC երկնչիլ

16 A Զառակէս /B յառակէք

17 Տ մերոց փխ մեր

20՝ B զերկրաւորիս փխ զերկուորիս

22 ՏBCD տանջի փխ տանջեն

25 B վազիւր (Զ-ի տեղը բաց)

25 BD նստաց

27 Տ խոցոտես

28 Տ որ փխ զի

29 Տ տան թոյլ



ՂԸ

Եգիտ աղուէս գիրս ինչ. և գնաց առ տգէտս ոմանս, թէ քահանայ եմ, ասաց. եւ կարգեցաւ քահանայել. և յաւուրստօնից բարձրաձայն աղօթէր, և յօժարագոյն զաղ օրհնէր, և ի յայլ աւուրսն հեղգայր. և ի լինել զենմանն մատաղոյ՝ դարիւնն ևս լիգոյր. և ի մեղադիր լինելն ասէր. Նուիրեաբէ, այդպէս արժան է առնել: Եւ ի լինելն յայտնի կեղծաւորութեան՝ գնաց գաղտ:

Մեկնապէս ունի առակս զմիտան. զի կեղծաւորք՝ որ բնաւ չլիցեն քահանայք՝ պատրեն զտգէտս. և թէ միտ դնեն, ի գործոց իւրեանց յայտնին. և երևելի լեալ՝ գնան հալածեալք:

ՂԹ

Ետես կապիկ գմալում զի լուանայր, և լուացաւ. ետես զի ի բարձրաւանդակ ելեալ աղաղակեաց, արար և զայն կապիկ. իջեալ ետես զի գէշ ուտէր շուն, և սկսաւ կապիկ. և ի մեղադիր լինելն ասաց՝ մահմետական եմ, լուանամ. և սրբիմ. զի գտեսեալն գործէ:

Պարզ է առակս. զի զբազում չարիս տեսանելով գործեն, և լուացեալ՝ ասին սրբիլ, զպատճառն ի մոլար առաջնսրգն կուտելով:

Ճ

Թագաւոր ոմն ետես տեսիլ, զի իբրև զանձրև իջանէր աղուէս. և քարոզ հրամայեաց կարդալ. Եթէ ոք զիմս մեկնենացէ տեսիլ, հազար տաց դահեկան: Եւ լուեալ այր ոմն աղքատ, և երթեալ ասաց. Եթէ երիս աւուրս տացես ինձ ներումն, և յայտնեցից: Եւ երթեալ շրջէր յանապատ խոկալով: Եւ վիշապի տեսեալ զայրն ոտարկուսեալ, ասաց.

- |   |   |
|---|---|
| 2 D աղուես  | 19 A Պարզ իսկ է առակս                             |
| 3 S չիք ասաց  | 25 SA չիք այր                                     |
| 6 S լեզոյր փխ լիզոյր  | 26 S ասէ  |
| 6 SA ասէ  | 26 AB աւուր                                       |
| 7 S և այդպէս  | 27 S յայտնեցից քեզ                                |
| 7—8 A կեղծաւորութիւն  | 27 S ելեալ փխ երթեալ                              |
| 7—8 S կեղծաւորութեան նորա                                       | 27 SA յանապատ շրջէր                               |
| 14 A կապիկ, որ է (որ է՝ վերևում ավելացված): Լուսանցում՝ մամուռն | 28 S Եւ էր անդ վիշապ, և ետես փխ. Եւ վիշապի տեսեալ |
| 17 S այլազգի եմ (թգ. եղլստառով) փխ մահմետական եմ                | 28 S ասէ  |

2 Ինչ ինձ տացես, եթէ զտեսիլն յայտնեցից քեզ զթա-  
 զաւորին: Եւ նա ասէ. Չոր ինչ խոստացաւ թագաւորն, քեզ  
 կէսն եզիցի: Եւ ասէ. Երթ և ասա՝ թէ ժամանակ է այսու-  
 նեան, զի մարդիկ նենպաւորք եղիցին և խարերայք իրրև  
 5 զաղուէս: Եւ երթեալ ասաց. և հաճոյ ասացեալն թուե-  
 ցաւ, զի նման այնմ իսկ էին և մարդիկն: Եւ ետ զհաղար  
 խոստացեալ դահեկանսն: Եւ այրն ստեաց վիշապին, և ոչ  
 դարձաւ անդրէն: Եւ զկնի դարձեալ այլ ետես տեսիլ, զի  
 իբրև դանձրև իջանէր ոչխար. և հրամայեաց կոչել զայրն,  
 10 զի նման առաջնոյն մեկնեսցէ. և նորա գնոյն խնդրեալ  
 ներուսն. և ամաչէր իրրև զապերախտ երթալ առ վիշապն:  
 Եւ երթեալ զանձն պարտաւորելով, ասաց. Մեղայ քեզ.  
 յայտնեա զերկորդս, և տաց քեզ զառաջինն և զերկրորդս:  
 Եւ մեկնեաց նմա ոչ յիշելով զյանցուսն. և ասաց. Երթ և  
 15 ասա, թէ ժամանակ գայ, և եկեալ է, զի մարդիկ իբրև  
 դոչխար պարզամիտ իցեն: Եւ երթեալ մեկնեաց: Եւ այնմ  
 հաւանեալ ետ նմա հազար ևս դահեկան: Եւ առեալ առն  
 տարաւ վիշապին՝ ընդ առաջինն և ընդ վերջինն՝ հազար  
 դահեկան. Չկնի այնորիկ դարձեալ այլ ևս ետես տեսիլ. և  
 20 ահա իրրև զանձրև իջանէր սուսեր. և հրամայեաց դարձ-  
 եալ զայրն կոչել, զի և զայն ևս մեկնեսցէ: Եւ առն գնոյն  
 խնդրեալ ժամանակ՝ և երթեալ առ վիշապն, և նա առժա-  
 մայն մեկնեալ իրրև բարեկամի՝ ասէ. Երթ և ասա, թէ  
 ժամանակ է, զի մարդիկ յարիցեն բռնաւորք և սուսերա-  
 25 ւորք: Եւ զայս ուսեալ առնն ասաց. Ընդէր այժմ թողից  
 վիշապիս զհազար դահեկանս, և կամ զհինգ հարիւր այլ ևս

1 B թէ փխ եթէ	S ասէ
1 B յայտնեցոց	16 S զոչխարս պարզամիտք
2-3 S կէսն քեզ	18 S առաջին
3 S Առէ վիշապն փխ եւ ասէ	21 A չիք և(1)
5-C S թուեցաւ ասացեալն	21 S այրն փխ առն
A ասացեալքն թուաց	23 BC չիք ասէ
8 S դարձաւ անդրէն առ նա	23 A չիք և
10 A մեկնիցէ	25 S Եւ եկեալ պատմեաց թագաւորին,
12 SA գնաց փիւ երթեալ	և էառ զհազար դահեկանն. և ել
12 S ասէ	զնաց առ վիշապն և ի մտի թէ փխ
13 S գառաջին	Եւ զայս ուսեալ առնն ասաց
13 BC չիք և տաց քեզ զառաջինն և	26 BC հինգ
զերկորդս	

- բերից. հարից զվիշապս և սատակեցից. և ջանաց հարկանել զվիշապն, և ոչ աջողեցաւ. նմա՝ զի խոյս ետ նմա վիշապն: Եւ առն զղջացեալ, և խորհէր թէ չարիս գործեցի. զի թէ այլ ևս հարկ հասանիցէ, ճրպէս եկից առ սա: Եւ տեսեալ
- 5 վիշապին զայրն ստրջացեալ, սոսաց նմա. Այր դու, մի տրամիր, զի ոչ յանձնէ ինչ արարեր, այլ ի բերման ժամանակէ. զի ստելն քո՝ ի կեղծաւորաց ժամանակն էր, և զղջանալն և տալն զհազար գահեկանն՝ ի միամտաց ժամանակն, և հարկանելն զիս՝ ի ընտաւորաց ժամանակն:
- 10 Ոչ այլ ինչ առակս ցուցանէ՝ բայց զժամանակին գիտել զմարդիկ, և զգուշանալ անձանց, զի զանազան բերէ ժամանակս մարդ, երբեմն նենգաւորս, և երբեմն պարզամիտս, երբեմն բռնակալս. և նման այսոցիկ այլս բազումս:

ՃԱ

- 15 Փիղ ետ զորդի իւր ցՊղատոն ուսանել իմաստասիրութիւն: Եւ առաջին հրահանգէր զնա զճիւլ ի յարանին, և նա ոչ կարէր. ասաց նմա և զգլուին խոնարհեցուցանել յերկիր, և ոչ զայն ևս կարաց: Դարձոյց զնա առ հայր իւր և ասաց. եթէ ի տունս թագաւորի վայել է որդի քո՝ միշտ յոտն կալով, և ոչ յիմս յարան, զի ոչ կարէ նստել և ոչ գլուի խոնարհեցուցանել:
- 20 Յայսմ առակէ խրատովք զիւրաքանչիւր կարդի ընտրել զանկաւորն՝ կազմածիւ և բարուք և այլովք այսպիսեօք:

ՃԲ

- 25 Զուղտ եհար զարմանիչ իւր. և յոյժ ցասուցեալ ասաց. Տես, մի հարկանիցես զիս յորժամ տրտում իցեմ, ապա թէ

1 ՏD այլ հարից	17 Տ ապա սոսաց
1 B սատակեցոյց	18 Տ շիֆ և
3 Տ այրն փխ առն	18 Տ և զայն ևս ոչ կարաց
3 BC շիֆ և	19 Տ շիֆ եթէ
6—7 C ի բերմանէ ժամանակի	19 BCD ի տուն
7 SBCD ժամանակն փխ ժամանակն էր	19 BC թագաւորին
11—12 Տ ժամանակն մարդս	20 Տ նստել կարէ
13 A այլ ևս	20 Տ զգլուին՝ A գլուին
15 BCD շիֆ իւր	22 Տ Յասակէ աստի փխ Յայսմ առակէ
16 Տ եւ նա	23 A այսպիսիւք
16 Տ դատաջինն՝ A առաջինն	25 Տ ասէ
	26 BC հարցիս փխ հարկանիցես
	26 AC եթէ փխ թէ

ոչ՝ մեռանիս ի ձեռաց իմոց: Եհարց, թէ զի՞նչ նշան իցէ տրտմութեան քո՝ զի գիտացեալ ոչ հարից: Եւ ասէ. Յորժամ տեսանես զներքին շրթունս իմ կախեալ և գոսս իմ զի ձայն ոչ ածէ, նշան տրտմութեան է: Պատասխանեաց, **5** թէ յամենայն ժամ այդպէս ես, քրպէս գիտացից:

Ջշարարարոյից նշանակ տայ առակս, զի ցասուցեալ միշտ էն. և երբեմն պատճառեն եթէ տրտում լինելով՝ խրատու յայն սակս ոչ տարաք:

ՃԳ

**10** Խոզ երթեալ առ քաղղեացիսն յուսուեմն աստեղաբաշխութեան. և հրամայեցաւ նմա յարուեստաւորէն ընդ երկինս նայել և պշնուլ. և ոչ կարաց, զի բնաւորեալ է անշրջելի ունել զպարանոց. և ասացաւ նմա լուել: Իսկ նա երկրաւոր ասաց ունել իմաստութիւն, ըստ որում զերկիր բրէ: Եւ **15** լուաւ թէ վասն այնորիկ ոչ պատշաճիս երկնաւորին, զի տարփող երկրաւորի եղեր:

Ի դէպ գոյ այս առակ այնոցիկ, որ նման խոզից միշտ ընդ երկիր բեւեռեալ են, իբր զի յերկինս նայել և զգործ տեսանել ձեռաց Աստուծոյ ոչ կամին:

ՃԴ

**20** Երթեալ էշ կրօնաւորիլ ի լեռոն. և զարհուրեալ ի դառնութենէ տեղոյն, և զի խրատէին անհեղգ լինել, ազազակեալ փախեաւ ասելով՝ ի Սառան ի Սառան, իբրև. զի ջերմին է Սառան, և յայնմանէ եկն կրօնաւորիլ:

**25** Ի դէպ է գոյ այս առակ այնոցիկ, որ յաշխարհէ, և յասանական վարուց վան յանապատ, և դանգիտեալ ի կրօ-

1 Տ յինեն փխ ի ձեռաց իմոց	ըուց նոցա
1 ՏԵ Եւ եհարց	10 Ա քաղղեացիս
1 Ա եթէփխ թէ	11 Ա յարվեստաւորէն
2 ՏԸ հարից զքեզ	11 Ե յերկինս
3 ՏԸ տեսանիցես	12 Ա բոնաւորեալ փխ բնաւորեալ
4 Տ և նա պատասխանեաց	17 Տ յիք այս
5 Տ այդպէս է՝ BC այդպէս (չիք ես)	18 Ը բեւեռեալ փխ բեւեռեալ են
5 ՏԸ և ես որպէս	19 Ա զձեռաց
8 Տ ավլցն զի ստութեամբ ծածկեացեն զշարիս իւրեանց, բայց ոչ է հաւատալի նենգաւոր բա-	22 Ա տեղոյն
	22 ԸԸ անհեղգք
	23 Ա վախաւ
	23 ԸԸԸ ի Սառան՝ չի կրկնված

նից և ի խրատու միանձանց, դարձեալ դիմեն յաշխարհ՝  
յիշելով դառաջին վարսն:

### ՃԵ

5 Եւ յախտէին զՉորի իշորդի լինել. և նա պարծէր մարբն.  
ստկայն պարտեցաւ, զի հոօր է ի հօրէ ազդ, քան ի մօրէ:  
Բան յայտնի է առակիս, զի անկաւոր թագաւորութիւն  
և այլն ամենայն ի հարց, քան ի մարց պատշաճի:

### ՃԶ

10 Խրոխտացեալ ձի հնազանդ լինել հեծելոյ ոչ կամեցաւ, և  
ի շրջիլ անդ՝ պատահեաց նմա առիւծ, և ի նմանէ փախու-  
ցեալ՝ պատահեաց արջ, և ի նմանէ զերծեալ՝ դայլ, և այլք  
այսպիսիք: Եւ խոնարհեալ դառնայ հնազանդելով, ոչ վասն  
դարմանի, այլ զի ի չար մահուանէն ազատիցի:

15 Ըստ առակիս պարտ է մեզ առնել. զի ոչ միայն ի դէպ  
է հնազանդել Աստուծոյ վասն դարման աստէն առնլոյ, այլ  
զի ի դիւաց և ի յաւիտենից մահուանէն ազատիցիմք:

### ՉԷ

20 Դոմէշ կամեցաւ ուսանել երկրաչափութիւն, և ի չափել  
անդ տաղտկացաւ, և երթեալ տնկաւ ի շամբ ինչ, և ի վար-  
դապետէն իբրև զանյոյժ մեղադրեցաւ. որում ասաց. Միթէ  
զերկի՞ր միայն չափել ի դէպ իցէ, եղիցիմ ես ջրաչափ:

Դոյ ի դէպ այս առակ այնպիկ, որ զտղմուտ վարս թո-  
ղեալ՝ յառաջինն դառնան սովորութիւն. և մեղադրեալք՝  
ասեն. Միթէ պարկէշտ միայն են, այլև մեղսասէրք, և մեք  
նմանապէս լիցուք:

4 AD էշորդի

4 CD պարծիւր /A պարծիր

4 D մամբն փխ մարբն B իւր մարբն

9 S և հնազանդ

10 S շրջիլ

10 SA անգր

10 BC յիւ նմա

10 S հանդիպեցաւ փխ պատահեաց

10 D առեւծ

10 A յայնմանէ փխ ի նմանէ

11 S դիպեցաւ. դայլ

11—12 S և այլ սոյնպիսիս

12 A դառնալ

13 A դարմանին

13 SC ազատեցի /BD ազատեցի

14 S և մեզ

16 SD չար մահուանէն

18 S լինել փխ ուսանել

18 SAB երկրաչափ փխ երկրաչափու-  
թիւն

19—20 S չափելն փխ չափել անդ

20 A իբր

22 A զտղմակ փխ զտղմուտ

23 S և դարձեալ յառաջինն /AC և յա-  
ռաջինն

24—25 S նոյնպէս և մեք իս և մեք  
նմանապէս լիցուք

ՃԸ

Կամեցաւ գումէշ զգարմանիչ իւր հարկանել, և ոչ կարաց, և տրտնջէր զԱստուծոյ՝ թէ գեղջիւր իմ ուղիղ ոչ արար, այլ սղենալ: Եւ դարմանչին պատասխանեալ ասաց. Գիտէր  
5 Աստուած զչար կամս քո, և վասն այն հնարեցաւ այդպիսի բուսանել քեզ եղջիւր:

Յարմարի առակս յխակալաց, զի ըստ կամաց նոցա և ոչ երբէք տայ Աստուած ի ձեռս նոցա առնուլ վրէժ:

ՃԹ

10 Պատերազմել վիշապ ընդ եղջերու կամեցաւ, և խորհէր ի դաշտի, որպէս թէ եղջերու ի հարթոջ ոչ կարէ հարկանել: Եւ ի լինել մարտին, ոտիւք ևս պարտէր, և ի յորջ մտեալ՝ անտի ևս մերժէր շնչով, և մտեալ ի ջուր՝ ուստի ըմպէր եղջերու, զի անդ հարցէ, կոխէր և անդ: Եւ յամենայնի  
15 յաղթող երևէր:

Յարմար իմն է նշանակս միայնակեցաց և բանսարկուին մարտի. զի թէ երկրաւոր փարուք մարտնչի՝ առ սոս գերկրաւորս հարկանեն, և եթէ նեղութեամբ՝ խորհրդօք յաղթանարեն, և եթէ ի գիտութիւն միւր՝ անտի ևս հայածեն.  
20 և ամենեքումք յաղթող լինին նման տեառն:

ՃԺ

Գայլ սպասէր այծեման՝ զի ննջիցէ, որպէս զի այնու ըմոնիցէ: Եւ գիտացեալ նորա՝ ոչ ննջէր զբարդում աւուրս. և ընդարմացեալ գայլն նիրհեաց, և եկեալ առիւծ՝ սատակեաց զգայլն:  
25 կեաց զգայլն:

Եւ այս իսկ առակ միանձանց պատշաճեալ է. զի սպասէ սատանայ ախտիւք ննջել, զի ըմբոնիցէ, իսկ զուարթունք եղեալ՝ տաղտկանայ, և եկեալ առիւծն Քրիստոս սատակէ զնա:

2 BD դարմանիչ	11 AB արկանել փխ հարկանել
3 S գեղջիւրս /D գեղջիւր	/CD անկանել
6 D եղջեւր	16 A բանսարկվին
7 S նորա փխ նոցա	17 A ոտն
8 S վրէժս փխ վրէժ	18 S խորհրդօք
10 BC պատերազմել	19 A թէ փխ եթէ
11 BD եղջեւր փխ եղջերու /A եղջիւր	19 B և հայածեն փխ անտի ևս հայածեն
11 BCD խարթոջ փխ հարթոջ	25 S զնա փխ զգայլն
	27 SD տաղտկանայ սատանայ

ՃԺԱ.

Թորէկ թախանձէր զոգնի՝ թէ զորդիդ քս սան առից, և բարեկամք լիցուք. և իբրու յանձն էառ զկնի բազում հարկի, ասաց՝ եթէ վասն զի դժուարահամբոյր է, մերկացս զնա, 5 զի դիւրին իցէ ի գգուելի. Եւ պատրեալ՝ արար: Եւ իբրեւ ետ զնա, սկսաւ ուտել, և ձեռնհաս ոչ ինչ էր առնել. Եւ զնաց բազում կոծով:

20 Զխորամանկութիւն այլասեռից առակս նշանակէ, որ զքրիստոնեայս պարզամիտս պատրեն՝ իշխանաց տալ զորդիս նոցա, զի պատուեալ մեծացուցանիցեն, և ոչ կամին թէ խրատիչ ոք ընդ նոսա իցէ, զի թափուր արարեալ գսպիս նոցա՝ սպանանիցեն. որ և յայտ եղեալ խաբէութեան, սչ ինչ կարող են առնել, բայց միայն ողբան. նմանապէս ի դստերսն է տեսանել:

15 ՃԺԲ

Յովազ զհեա երթեալ որսու և ոչ յաջողեալ՝ զբուծանողն նսխատէր. ոչ ուտէր, և ոչ բմպէր և ոչ հեծանէր: Որում ասաց. Անձին է մեղ, զի ոչ ժուժկալութեամբ որսաս, այլ հեղզութեամբ:

20 Զդէմս ծուլից ունի առակս, զի սակաւ աշխատեալք եթէ հոգևոր և եթէ մարմնաւոր, և ոչ յաջողեալ, ոչ յանձանց զփնասն վարկանին, այլ տրտնջեն զԱստուծոյ և զխրատչաց, զոր և ի դէպ յանդիմանի զինքեանս ունել պատճառ:

ՃԺԳ

25 Հրաման ել ի թագաւորէն կենդանեաց ցամաքայնոց գալ առ նա ամենեցուն: Եւ անյապաղ ամենեցուն ժողովեալ եկին. իսկ քարաթաւշ և մողէզ և խլուրդ՝ եկին և նոքա առնուլ պարգևս, զի այնորիկ աղագաւ կոչէր, զի ըստ իւրաքանչիւրոցն պատուիցէ: Եւ ծաղր ամենեքեան առնէին: 30 Եւ մեծարեաց զամենեսեան ըստ կարգի իւրեանց. եհարց և գնոսա, եթէ զի՞նչ սպաս ինձ ունիցիք, զի պատիւ յինէն

2 A զորդի բո  
5 A իբր  
9 AB յիշխանաց  
12 B զոր և յայտ  
12 CD խաբէութեանն  
17 A հեծանէ  
21 SA յիւ և (1)  
21 S յաջողեալք  
23 SC որ  
26 A ամենեքեան փխ ամենեցուն  
31 A յիւ և

առջիք: Քարաթաւշ և մոզէզ ասեն. Քարամուտ եմք, ի բերդս թշնամեաց տեառնդ մերոյ մտանեմք. թէ յազթել ոչ կարեմք, զօրս անդ հանեմք: Իսկ խլուրդ ասաց, թէ ի քաղաքս մտանեմք՝ ական հատանելով, Եւ այսմ հաւանեալ

5 պատուեաց և զնոսս՝ զքամահեալսն ի բազմաց:

Բնաւից կարօտ լինել մեծամեծաց և փոքունց առակր ցուցանէ, ոչ միայն թագաւորաց, այլ ամենեցուն՝ իշխանաց և այլոց աշխարհականաց, նմանապես և յեկեղեցիսդ զի պէտս ունին փոքունց և անարգաց:

10

ՃԺԴ

Թուչունք հասարակ զաղաղակ բարձին, եթէ չարէ իշխանս մեր արծիւ, զի միշտ ի մէնջ կերակրի և յայլոց որսողաց ոչ պահէ. Եւ լուեալ ասաց՝ եթէ զի՞նչ քան զայն ձեզ բարի, զի երկու ծնանիմ որդի՝ և զմինն սպականեմ, զի մի ծանր

15

ձեզ եղեց. և մերձ լինելով իմ՝ ոչ ոք կարէ որսալ զձեզ, և այլ ուրեք յանպատրաստի զձեզ գտեալ՝ որսան. զուր զինէն ամբաստանէք:

Ըստ առակիս սովորեն առնել թագաւորք ամենայն, առ իւրեանս ունել որդի՝ ժառանգ թագաւորութեան, զի մի

20

ՃԺԵ

Ձագք անկեղաց ասեն ցծնօղսն իւրեանց. Ընդէր նման արծուոյ և լաղէից ի կենդանիս մեզ ոչ որսայք, այլ զմեռելոց սակերս մեզ բերէք կերակուր: Եւ նոքա ասին. Որդեակք, վասն այն արար զմեզ Աստուած երկայնակեաց, զի ոչ զկենդանիս սպանանեմք, այլ շատիմք մեռելօքդ, նման

25

- |                           |                           |
|---------------------------|---------------------------|
| 2 B տեառդ                 | 20 A կայն փխ կեալն        |
| 2 C չիք մերոյ             | 23 S չիք անկեղաց          |
| 5 BD զքամահեալն           | 23 S ցծնողս Ա զծնալզս     |
| 5 A չիք ի                 | 23 SD թէ ընդէ՞ր           |
| 9 B թե փխ զի              | 24 BD արծուոյ             |
| 11 S առ հասարակ           | 24 D որսաք                |
| 13 A զայն առնիցեմ ձեզ     | 25 S բերէք մեզ ի կերակուր |
| 14 A սպանանիմ փխ սպականեմ | 26 BCD Աստուած արար զմեզ  |
| 16 B գլինէն               | 27 BC զկենդանիսն          |
| 17 A ամբաստանեցէք         | 27 A սպանեմք              |
| 20 D կենդանեաց կործանման  | 27 A մեռելաւք             |
| 20 C աշխարհի              |                           |



քահանայից, և ոչ ըստ օրինակի իշխանաց՝ զկենդանեաց յափշտակեմք:

Արդարապէս վարիլ մեզ առակս կամի, ճշմարիտ և անկաւոր ընչիւք մեռելոց և ոչ զկենդանեաց անիրաւութեամբ  
5 յափշտակել, որով երկայնակեաց իցեմք յերկրի:

ՃԺԶ

Բազէ գհետ մտեալ աղաւնոյ, և նորա աղաղակեալ ասէ. Պատարագ եմ տերունի, մի ինձ մեղանչեր: Եւ նա ասէ. Պատարագն տերունի ի տերունի սեղանն իցէ, և ոչ սատ  
10 յօդս շրջիցի: Եւ հարեալ եկեր զնա:

Դէմք առակիս առ այնոսիկ է, որ ի մահուանէ զանդիտեալք՝ ասեն թէ զանձինս տեառն նուիրեալ եմք բնակիլ յանապատ. զոր ի դէպ իսկ ասէ՝ թէ այդպիսեացդ տեղի կրօնաւորք են, և ոչ վայրապար շրջիլ յաշխարհի. որում ոչ  
15 խնայէ, այլ ըմբռնէ:

ՃԺԷ

Վարուժանին տեսեալ բազմորդի զլսր՝ գոհանայր զԱստուծոյ, և խնդակից նմա լինէր: Եւ ասէ լոր. Եթե ճշմարտութեամբ գոհանաս, երանի է քեզ: Եւ անդէն եհար և զմի  
20 ի ձագուց նորա ըմբռնեաց: Եւ նա ևս ասէ. Ահա յայտ եղև, զի ոչ վասն Աստուծոյ գոհանայիր, այլ վասն ազանութեան.

Զբարս իշխանաց յայտնէ առակս, զի ուրախ լինին ընդ ձեռամբ անկելոց ընդ աջողուածս, ինքեանց վարկանկով  
25 զնոցայն, քան թէ ստացողացն:

ՃԺԸ

Ի ձեռաց շահենի յորսալն զերծաւ ձագ հաւբալի և ասաց. Եղիցի պատարագ տեառն: Ծաղր արար զնա հաւբալն, եթէ զոր ձեռօք մատուցանես, այն է պատարագ տեառն:

- |    |   |       |  |
|----|---|-------|--|
| 5  | S երկայնակեաց լիցուք ի կայնակեաց եմք            | 21—22 | A զի ոչ վասն Աստուծոյ, այլ վասն ազանութեան գոհանայիր |
| 10 | B շրջիցի  | 23    | S Յայտնէ առակս գրարս իշխանաց                         |
| 11 | A այնոսիկ հալն                                  | 24    | A անկելոցն   |
| 12 | S նուիրեալք եմք բնակել ի CD նուիրեալ եմք բնակել | 24    | S յաջողուածսն ՝ A աջողվածս                           |
| 13 | C որ փխ գոր                                     | 25    | BCD ստացողաց   |
| 17 | S Վարուժանի                                     | 27    | B շահենէ   |
| 19 | SA յիք և  | 27    | A հորալի փխ հաւբալի                                  |
| 20 | S և ըմբռնեաց                                    | 28    | A հորալն   |
| 20 | S Ասէ լորն փխ Եւ նա ևս ասէ                      | 29    | SBD այն փխ այն է                                     |
|    |   | 29    | A յիք տեառն  |

Ջնովուիւն ձեացուցանէ զբարս առակս, զի զկերևայս գա-  
զանաց և զրեկեայս զայլոց՝ նուէրս տեառն ասէր լինել:

ՃԺԹ

Յինա զձագս տեսեալ զհաւու՝ խոստանայր ընծայ սրբոյն  
5 մատուցանել Սարգսի, եթէ յաջողիցէ նմա որսալ գնոսա:  
Եւ իջեալ յորս՝ խոջ հարեալ զաչսն կուրացոյց: Եւ ամբաս-  
տանէր եթէ ոչ օգնեաց նմա: Որում ծանոյց, եթէ քնասու  
սուրբք ոչ օգնեն, այլ բարևոյ:

Սաստէ առակս այնոցիկ, որ ի շար գործս գտուրբս աղա-  
10 շեն առիթ լինել, և ոչ օգտին. որոց անմտութեան ոչ անսան:

ՃԻ

Ձջայլամն տեսեալ չիտ, զի մեծամեծս արկանէր ձուս, և  
այսմ տարփող եղեալ՝ հարցանէր ուսանել: Որում ասաց՝  
15 թէ հուր ճաշակեմ, և վասն այն այդքան հզօր արկանեմ  
ձու: Եւ զայս արդար կարծեալ ճաշակեց հուր՝ և մեռաւ. ոչ  
խորհեցաւ թէ ոչ միայն այն է պատճառ, այլ և մեծութիւն  
հասակի:

Ձվայրապար տուփանս առակս յանդիմանէ. զի զգործս  
տեսեալ հզօրաց՝ ցանկան, ոչ ընդ միտ ածեալ զինքեանց  
20 տկարութիւն. զոր թէև ուսանել իբրև զարուեստ կամին,  
ծաղր զնոսա առնեն, ոչ տիրապէս պատճառն յայտնելով,  
զոր ի դէպ է ինքեանց իմանալ:

ՃԻԱ

Ի տօնի սրբոյ զատկին եկին թոշուևք ամենայն, և խոս-  
25 տովանութեամբ հաղորդէին օրինացն. եկին ընդ նոսա  
սակա և հողամաղ, և խոստովան եղեն քահանային, եթէ ոչ  
այլ ինչ գիտեմք խիղճ, բայց զի որսացաք մկուսնս և գոր-

1 ՏԾ զկերակրեալս փխ զկերեալս	9 Տ զործսն
4 ՏԸ ցին փխ ցինա	10 Տ քանզի անմտութեան արմարացն
4 A հաւու փխ զհաւու /BD զհաւոյ	ոչ անսան սուրբքն և ոչ լսեն ան-
4 Տ ընծայս	դէպ բանից նոցա փխ որոց ան-
5 Տ յաջողեացէ	մտութեան ոչ անսան
6 Տ յիջանել առնուլ զորսն փխ իջ-	12 BD Ձջայլամն
եալ յորս	16 A չիք ոչ
6 Տ հարեալ ի նա կուրացոյց զաչս	21 C չիք՝ գնոսա
նորա փխ հարեալ զաչսն կուրա-	24 D սրբւոյ
ցոյց /A հարեալ յաչս կուրացոյց	27 A խեղճ փխ խեղճ
6—7 Տ և ամբաստանէր սրբոյն	27 ՏB այլ փխ բայց
7 A թէ փխ եթէ	

տունս՝ և կերաք: Եւ նա մերժեաց զնոսա պիղծ կոչելով՝  
 Եւ նոցա երթեալ և որսացեալ ձագս սուրբս, և մատուցին  
 քահանային: Եւ այսու պատրեալ արդարացոյց զնոսա ասե-  
 լով. Ոչ գիտացիք խոստովանել, զի ծերացեալ և ի թեոց  
 5 թափեալ թռչունք էին. և հաղորդեցոյց զնոսա:

Չագահ քահանայից առակս տայ տարացոյց, զի զպոռ-  
 նիկս և զայլս ևս պիղծս մերժեն յեկեղեցոյ, և դարձեալ կա-  
 շառօք ընդունին և հաղորդեցուցանեն:

**ՃԻԲ**

- 10 Երամ ճնձղկու երթեալ առ արագիլ և աղաչեալ զնա ասեն.  
 Ի բոյն քո տեղի մեզ տացես հանել ձագս, և յօձից զձագ  
 մեր պահեսցես: Եւ նա ասէ. Ձի՞նչ ինձ առնիցէք, զի զայդ  
 ձեզ առնիցեմ: Եւ ասեն. Աղօթս առնեմք, զի ձագք ձեր  
 առողջութեամբ սնտնիցին ի ֆրասակարութենէ օդոյ, և ի  
 15 հանդերձեալսն կենաց արժանի լինիք յաղագս արդարու-  
 թեան ձեր: Եւ յաղագս այսորիկ տեղի ետ նոցա: Եւ եղև ի  
 հանել նոցա ձագ, սողաց օձ առնուլ ի նոցանէ. և տեսեալ  
 տառեղան՝ եհար սատակեաց զօձն. և շրջէր ևս շուրջ ի  
 սահմանոն, միանգամայն սատակել զօձոն յաղագս փրկու-  
 20 թեան նոցա:

Չվշտակցութիւն առակս ուսուցանէ տկարաց՝ երկաքան-  
 չիւրսն վայելիլ փրկութիւն, սակս բարեգործութեան նոցա:

**ՃԻԳ**

- Բու հրեշտակ առաքեաց առ արծիւ և խնդրեաց զդուստր  
 25 նորա հարսն, ասելով. Դու տուրնջեան քաջամարտիկ ես, և  
 ես գիշերոյ, պատշաճիմք ի խնամութիւն: Եւ յետ բազում  
 թախանձանաց յանձն առ տուլ: Եւ ի լինել հարսանեացն ի

---

2. S և երթեալ որսացին փխ եւ նոցա  
 երթեալ և որսացեալ  
 2 B չիք նոցա  
 7 A գայլ  
 7 A պեղծս  
 7 SC յեկեղեցւոյ  
 7—8 S մերժեն յեկեղեցւոյ՝ երկե-  
 ցուցանելով. իսկ յետոյ դարձեալ  
 կաշառօք ընդունին պատճառելով  
 բանս ինչ, և հաղորդեցուցանեն  
 զնոսա փխ մերժեն յեկեղեցոյ, և  
 դարձեալ կաշառօք ընդունին և  
 հաղորդեցուցանեն  
 10 A երագիլ /B արեգիլ  
 11 S քոյ  
 11 B ձագ փխ ձագս  
 11 C զձագս փխ զձագ  
 13 B ձագ  
 21—22 C յերկաքանչիւրսն  
 25 AB չիք դու.  
 27 B հարսանացն

տուէ լոյս ոչ կարէր տեսանել փեսայն. և ծաղր տունէին  
բազմեալքն. Եւ իբրև եղև զիշեր՝ և ոչ հարսն ետես լոյս.  
յաճախեաց և անդ այգանումն. Եւ վասն այսորիկ փութով  
լուծաւ հարսանիքն:

5 Ձմիտս իւր առակս նմանեցուցանէ այնոցիկ հաւատա-  
ցեալ թագաւորաց և իշխանաց, որ զգտտերս իւրեանց ըստ  
իրիք պատճառի յամուսնութիւն տան այլասեռից՝ խաւա-  
րելոց ի լուսոյ հաւատոց. ուստի և ոչ է միտարանութիւն,  
այլ հարկաւոր բաժինս:

10

### ՃԻԴ

Ձարծիւ աղաչել սկսան թռչունք միանգամայն որ ընդ  
ձեռամբ նորա, և ասեն. Անյապազ զհարկ քո տացուք, մի  
տարածամ զմեզ զարհուրեցուցես: Եւ նա զաշինս եզ, և  
կայր ընդ նոսա խաղաղութեամբ բազում ժամանակս. Եւ  
15 սկսան ապստամբել, այլ և այգանել. և ժողովեալ խորհէին  
և յիշխանութենէ ևս ընկենուլ. պարծիւր և ճնճղուկ, եթէ  
յաչս նորա ծրտեալ կուրացուցանեմ. և իւրաքանչիւր զօ-  
րութեամբ իւրով պարծէր: Եւ սկսան մարտ ևս զնել: Եւ նո-  
րա ոչ տարեալ յարձակեցաւ և զբազումս ի նոցանէ սա-  
տակեաց:

20

Տպաւորէ այս առակ զգէմս հաւատացեալ թագաւորի և  
զանհաւատից, որ բարեպաշտութեամբ խաղաղութիւն առ-  
նեն, և նոքա ապախտացեալ ապստամբեն, զպատճառ խա-  
ղաղութեան ոչ գիտելով, և այգանեն, և պատերազմ ևս  
25 շարժեն, և ակամայ լինին մահ տրկանել նոցա անխնայ:

### ՃԻԵ

Հաւ ընտանի յմբռնել ստացողին, յոյժ աղաղակէր. և  
ոմանք մեղադիր լինէին, եթէ զմէ՞ վայրապար կուիչս ամ-  
բառնաս: Որոց ասաց, թէ վարհուրիմ, զի ոչ յամենայն  
ժամու վասն բարւոյ ըմբռնէ. զի երբեմն զլի ի վայր կախէ

9 C առ փխ այլ (լուսնեցեալ՝ այլ)

13 S յարածամ փխ տարածամ

16 S պարծէր փխ պարծիւր / A պար-  
ծիւր

16 A թէ փխ եթէ

19 S յարձակեցաւ ի վերայ

23 S զպատճառս

27 S յընտանի

27 S ստացողին իւրոյ

29 A եթէ փխ թէ

30 BCD ժամ

և բազում ճանապարհ տանի, և երբեմն ի վերայ կայծա-  
կանց խորովէ և ուտէ:

2 Զբարս տերանց առաչս յայտնէ, զի ոչ է պարտ յամե-  
նայն ժամու բարի ի նոցանե զտանել, թէպէտ և քաղցր  
5 իցեն. այլ երբեմն և չարի ակն ունել արժան է:

### ՃԻԶ

2 Զձագս աղանոյ բազում անգամ առեալ ոմն, և զովէր  
զմիտմտութիւն նորա. որում խկ ասաց. Ո՛ր խտասիրտ  
այր զու, եթէ ինձ ասացաւ միամիտ, միթէ քեզ հրամա-  
10 յեցաւ արիւնարբու լինել. արդ յայտ է թէ չարամտու-  
թեամբ գործես:

2 Զրկողաց առակս բերէ նշանակս բարուց, զի գիտեն՝ եթէ  
անտիակալ առաքինիք լինին, առաւել չարանան և զովեն  
զվարս նոցա, որով և յանդիմանին. զի թէ ասացաւ առա-  
15 քինեաց համբերել, այլ ոչ եթէ նոցա հրամայեցաւ զրկել.  
արդ յայտ է եթէ յանդգնութեամբ գործեն:

### ՃԻԷ

2 Երթեալք ի թռչնոց ոմանք հիւր տատրակի, և տեսեալ  
զնա աղքատ և գձուձ կրօնաւոր, և ցուցանէին նմա տեղի  
20 անձուկ և ի դէպ կրօնաւորութեան. և միանգամայն դանա-  
զան պահանջէին խորտիկս, զոր նա ոչ ունէր: Որոց ասաց.  
Զերկաքանչիւրսդ հսկառակ տեսանեմ միմեանց խորհուրդ:

2 Զսովորութիւն աշխարհականաց առակս յայտնէ, զի կրօ-  
նաւորս տեսեալ և զտեղի քարանձաւաց նոցա ցուցանեն,  
25 և դարձեալ զպարարտ կերակուր պահանջեն: Որոց խոր-  
հուրդն՝ ընդդէմ միմեանց. զի թէ յանձաւս բնակիցեմք  
որպէս նոքա, զիսորդ զանազան կերակրօք զնոսա դարմա-  
նիցեմք ըստ կամաց նոցա:

1 A բազում տանի ճանապարհ  
Ե՛ Տ բազում աւուր ճանապարհ  
տանի

1 BC զի փխ և (2)

1 A չիք ի վերայ

3 ՅB չիք պարտ

5 Տ ավիցն՝ և զգատտ կեալ, և պատ-  
րաստութեամբ վարել ընդ նոսա

9 A միամիտ լինել

12 AC նշանակ

14 B թէ զի

20 CD չիք և (2)

22 A միմեանց տեսանեմ

25 A պահանջեն կերակուր

26 A միմեանց է

26 BCD բնակիցիմք

27 A նոքա կամին

27 B կամ զիսորդ

27 B զնա փխ զնոսա

ՃԻՐ .

Աքաղաղ բազում անգամ աղաղակեաց և ասաց. Աստուած  
խակ դիտէ, զի մի և կամ երկու բարբառն զուարթնոցն  
բաւական է, իսկ բազումն՝ ծուլից է. նաև ոչ այնու ծուլքն  
5 զարթնուն, բայց զի զպատճառն հատից զպղերգից:

Զմիտս առակիս այսպէս պարտիմք իմանալ. զի գրոց  
վարդապետութիւն մի անգամ և երկիցս բաւական է զգաս-  
տից, իսկ բազումն՝ նեղգից վասն է. և թէպէտ յայանի է  
քարսզաց, զի խտասիրաք և ոչ յայնմանէ օղտին, այլ զի  
10 մի պատճառիցեն, և թէ ոչ լուաք՝ յաճախ խօսին:

ՃԻԹ

Պատարագ զենման մատուցանել ազուաւ կամեցաւ, և զբա-  
զումս հրաւիրեաց. և եկին յօժարեալք: Եւ զենումն նորա  
էր մուկն հնացեալ. և սկսաւ ինքն հարկանել, և ապա այլքն:  
15 Եւ եղև պատերազմ. և բազմաց զաշան փորեցին, և մերկ  
զմիմեանս արարին: Եւ սկսան նզովել զպատարագ նորա և  
զմատուցողն ևս: Եւ ասաց նոցա, թէ յաշակերտացն ուսայ  
ի Մահմետի զպիղծն մատուցանել, և դարձեալ պատերազմել:

Գիտելի է ամենեցուն առակս, զի զդէմս պատարագին  
20 ունի պղծոյն Մահմետին:

ՃԼ

Ազգ ճնճղկաց հրապարակ եղին խորհել զորսոգաց, իսկ  
ծեր ոմն ասաց. Մի ժողովիք, զուցէ լուեալ զձայն թևոց  
թշնամեաց և թռուցեալ՝ զվատասարտութիւն ձեր յայտ առ-  
25 նիցէք. այլ յեկեղեցիս դիմեալ աղօթեցէք առ Աստուած: Եւ  
ոչ լուան. և յանկարծ ձայն առին թևոց որսոգաց, և լուծաւ  
երախանն:

Զմեզ խրատէ առակս, զի յորժամ շիցեմք բաւական ընդ-  
դէմ կալ թշնամեաց, բարի է ոչ ժողովելոյ վասն նոցա

- |                               |                        |
|-------------------------------|------------------------|
| 2 S ասէ                       | 16 SBC նոցափխ նորա     |
| 3 S զիտակ է փխ զլտէ           | 18 S Ի... փխ ի Մահմետի |
| 4 S ծուլից վասն է             | 18 A պատերազմել        |
| 8 BD զբազումն                 | 20 S BCD ունին         |
| 10 S վասն այնորիկ յաճախ խօսին | 20 S .... փխ Մահմետին  |
| փխ յաճախ խօսին յBCD յաճախ     | 23 S ծերունի           |
| խօսին                         | 23 S ասէ               |
| 12 A մատուցանել զենման        | 26 S յանկարծակի        |
| 15 A գաշս                     |                        |

տալ կարծիս, և դիւրաւ լուծանել յահէ նոցա, և զվատա-  
սրտութիւն մեր յայտ առնել. այլ խրատու իմաստնոց յե-  
կեղեցիս յաղօթս ապաւինել:

ՃԼԱ

- 5 Մեռաւ որդի ապուռու՝ և սղաց յոյժ. եկին և բազումք  
յողբ նորա. և նա ճաշ մեծ յօրինեաց սղաւորացն ասելով.  
Ջայս ի քրիստոնէլոցն ուսայ, և ոչ ի մահմետականաց, զի  
ժլատեալք ի լաց և ոչ ի հաց կոչին: Եւ զայս ազուաւ արար,  
զի զբան պատարագին բժշկիցէ:  
10 Ամենայնիւ առակս զսովորութիւն կարգաց նոցա թիւրս  
ցուցանէ՝ զսպոյ և զպատարազի և զայլոց ևս:

ՃԼԲ

- Սովորաբար անծեզ յանտառս միշտ աղաղակէ, մանա-  
ւանդ ի տեսանել զոք ի կենդանեաց. և ի հարցանել ձու-  
15 վոյն՝ ուսոյց. զի թշնամիք միշտ արթուն զիս տեսցեն և  
մի յորս ինչ մտաբերիցեն:  
Արթունս զմեզ կամի առակս առնել, զի յամենայնի գա-  
ղօթս և զօրհներգութիւնս ի բերան կայցուք. զի թշնամին  
սգուց մի վստահացի տալ պատերազմ ընդ մեզ. մանա-  
20 վանք յորժամ տեսցուք զնա դիմեալ առ մեզ՝ յաղօթսն յա-  
ւելցուք:

ՃԼԳ

- Սարեկ ետ զորդի իւր յուսումն քահանայութեան. և նա  
ի սոխն և ի մրմունջս թեակոխէր. և խրատէր քահանայն  
25 օրհներգութեան և սաղմոսաց փոյթ առնել, յորմէ սուգ և  
զղջումն յոգի զործի. իսկ նա ի պար յաւելոյր, թէ հօր իմոյ  
արուեստ ուրախութեան է պատճառ, իսկ քոյդ՝ տրտմու-  
թեան: Եւ թէպէտ ուսաւ յետոյ, թէ տրտմութիւն այժմունս

1 C լուծանել	15 BCD թէփիս զի
3 C յիւ յաղօթս	16 BC մտաբերցեն
7 S յայլազգեաց փիս մահմետակա- նաց (տպ. շիստառով)	19 AB ոգոց
7 B յիւ զի	19 B վստահեցի
8 A արար ազուա	19 B կալփիս տալ
11 SA ցուցուցանէ փիս ցուցանէ	20 A յիւ գնա
13 ABD անձեզ	25 SD օրհներգութեանց
14—15 BC ձագուն	25 A ունելփիս առնել
15 S ասէ փիս ուսոյց	27—28 A տրտմութեան է

րերէ ուրախութիւն, որպէս տրամուծիւն ի կատարածի ուրախութիւն, սակայն անլուր եղեալ դարձաւ ի տուն իւր:

2 Զերկրաւոր ուրախութեանց զպատրանս առակս նշանակէ, որով զկատարածն իմանան, եթէ ի յողբ վախճանի, որպէս  
5 և տէր իսկ ասաց. նմանապէս և հոգեւորն սուգ յուրախութիւն յանգի:

ՃԼԳ

Հրաւիրի ի հարսանիս արջնագոաւ ի յանգեղէ. և նա  
հրաժարէր՝ թէ կրօնաւոր եմ և սգաւոր, և վասն այն ոչ կարեմ  
10 վար. հարկաւորէր հանել զսուգ նորա, և յանձն ոչ առնոյր ասելով. Եթէ յայսմ աւուր հանեմ, սակայն հարկաւորարար  
զգենում յայլում. աւուր բարի է բնաւ չհանել:

Զկերպարանս կրօնաւորաց ունի առակս, զի միշտ սեւագ-  
զեստք են, և բնաւ սգաւորք, ի բնութիւն հայելով մարդ-  
15 կան. զի թէ կամեսցի ոք առօրեայ զուարճանալ, ոչ կարէ յերկար լինել. և զայս գիտելով նոքա բարի վարկանին միշտ նոյնօրինակ կալ:

ՃԼԵ

Ճայլի եկեալ առ սագ աղերսէր, եթէ գիշերադէմ գոլով ես  
20 ի բնաւից պարսաւիմ, և դու այդքան սպիտակ և պայծառ լինելով՝  
աղաչեմ զի ուսուցես ինձ նման քեզ սպիտականալ: Եւ նա  
կամակից եղեալ՝ ասաց, թէ միշտ նման ինձ լուսոցիս  
ջրով: Եւ ի լուսնալն ելանէր սև նորա փետուր, և դարձեալ  
նոյն գայր օրինակաւ: Եւ զայս դարձեալ աղաչէր  
25 ուսանել. որում ասաց. Թէ ընդ լուսցմանդ զիմս ուսցիս  
լեզու, ապա կարիցես նման ինձ լինել: Եւ նա յանձն  
ոչ առնոյր զազգի մոռանալ զձայն. և մնաց նոյնօրինակ  
գիշերադէմ:

Մեկնի այսպէս առակս. զի գիշերադէմ են ոգւով ազգ

1 Տ ուրախութիւն յետոյ 19 SCD չիբ եկեալ D եկ  
1--2 Տ չիբ որպէս տրամուծիւն ի 21 Տ չիբ ինձ  
կատարածի ուրախութիւն 22 BD նա քեզ կամակից  
8 AD արջագոաւ 25 B լուսնալն փխ ի լուսնալն  
9 A եթէ փխ թէ 24 A գոյն փխ գայր  
9 D սգուոր 26 C չիբ նա  
11 Տ հանեմք 29 B Մեկնիլ փխ Մեկնիլ  
13--14 B սեւագզեստքն են 29 BCD գիշերադէտն փխ գիշերադէմ են  
15 A թէի կամեսցի /C եթէ կամեսցի /Տ գիշերադէտն են  
19 SCD ձայնի 29 ABD ոգով



Պարսից. և եկեալ առ քահանայս՝ զպայծառութիւն կամին-  
 ուսանել ոգևով, զոր ասաց զխորհուրդ մկրտութեանն ամ-  
 բող պահել. և նա լուացեալ ի մեղաց փոխեալ լինէր, և  
 դարձեալ զճշմարտն խոստովանութիւն յանձն ոչ առնոյր.  
 5 Նոյն օրինակաւ մնայր սեաւ ոգևով. զոր չէ արժան և ոչ  
 ջրով մկրտել, եթէ գնատատս ոչ ընկալցին:

**ՃԼԶ**

Սիրամարգ զգեղեցկութիւն իւր ամենեցուն յայտնեալ՝  
 և գովեալ լինէր, և խորհի թագաւորել. և սմանք իմաս-  
 10 տունք խրատէին, եթէ չէ պարտ ի բանս հայել պատրանոց  
 զի ազգաւ է թագաւորել: Եւ ոչ այսմ ունկղիւր եղև. Եւ  
 լուեալ արքային թռչնոց, և եկեալ եհար և զմանկունս նորա  
 և զազգատոհմն նորա և բազումք զթևս նորա և զփետուրս  
 քարշեալ մերկացուցին: Թագաւորութեան ոչ եհաս, և յիւ-  
 15 րոց գեղեցկութեանց ևս թափեցաւ:

Բազմաց ըստ առակիս պատահեաց պատրիլ, միով յա-  
 ջողմամբն թագաւորել. հրապուրեալք ի բանս, որդորչացն,  
 յինքեանցն անկեալք, այնմ ոչ հասին:

**ՃԼԷ**

Չերամս տեսեալ որսորդի զկաքաւի, սկրա. խոստանալ  
 նոցա պատիւ ի թագաւորաց տուն, և կերակուր ըստ կա-  
 մաց պատրաստել. և անդէն իսկ արկանէր կերակուր: Եւ  
 ոմանք խոկացեալ ասէին. Չար է խոստումնդ, և զազատու-  
 թիւն մեր խափանէք, և ի կատարածի՝ ի կենաց ևս թափէք,  
 25 և զայլս ևս մեօք որսայք, այդմ ոչ հաւանիմք. և զոսս  
 արձակեալ փախեան: Իսկ ոմանք պատրեալք ի բանս նորա,  
 գիմեալք ի կերակուրն և յընկերն՝ զոր աղաղակաւ կոչէր,  
 և տնդէն ըմբռնեալ՝ էանց ընդ ոսոս ամենայն ասացեալքն  
 յիմաստնոցն:

- |                                 |                                 |
|---------------------------------|---------------------------------|
| 2 BD ոգով /A՝ ոգոց              | 20 A չիք որսորդի /BD որսորդաց   |
| 4 A զճշմարիտ                    | /C լուսանցում՝ որսորդաց         |
| 5 A սև ոգով                     | 20 B զկաքաւ /C լուսանցում՝ զկա- |
| 10 BD և թէ փխ եթէ               | քաւ.                            |
| 13 AB զփետուր                   | 25 SBC զայլ ևս                  |
| 15 BCD բժշկութեանց փխ գեղեցկու- | 25 A մեք փխ մեօք                |
| թեանց                           | 26 A ոմանց փխ ոմանք /B ոմանս    |
| 17 A յորդորչաց                  | 26 SBCD զէմս փխ բանս            |
| 18 C ինքեանց                    | 27 A գիմեցին փխ գիմեալք         |
|                                 | 27 SC որ փխ զոր                 |

25 Ինչ անյայտ առակս. զի որսորդն սատանայ պատրէ զազգ մարդկան փափկութեամբ և պատուով թագաւորաց, և յայլոց ևս օրինակաց՝ որ ի նոցանէ պատուի. իսկ իմաստունք ի կատարածն հայելով փասուն, զի աստէն զազատութիւնն խափանեն և ի հանդերձեալն բնաւին կորուսանեն, փախստեամբ ի չարէն ազատին:

ՃԼԸ

10 Կլուրի նեղեալ յափրոզիտականէն՝ երթեալ խոստովանեղև տատրակի՝ եթէ այնքան տանջիմ, զի և ոչ զձագ իմ հանեմ, յայլոյ բոյն ածեմ ձու: Եւ նա խրատէր նմա, եթէ ազօթս արասցես և տեղի մի տայես ախտի, և կնդրուկ մատուցես Աստուծոյ: Եւ նա ի ջեռնլոյ ոչ զազարէր, թէ և զրգատարազն մատուցանէր. ուստի ոչ ինչ օգտէր, ևս աստի յանդիմանէր:

15 Զվաւաշոտս ւռակս յանդիմանէ. թէ և խոստովան լինին ողջախոսից և ընծայեն Աստուծոյ, յորժամ ընդդիմանալ ոչ կամին խորհրդոց, անօգուտ մնան:

ՃԼԹ

20 Ծիծառն արարեալ իւր բնակութիւն ի հեծանս տան յազապ երկիւղի սրսողաց, և յընտանի թշնամեացն նեղեալ ի մկանց, առեալ մազ ի կատուէ՝ եղ ի բոյն իւր, և ձագք նսրա անփնաս եղեն:

Ըստ իմաստախոհութեան թռչնոյն առակս խրատէ, յորժամ յօտար թշնամեաց զգուշանամք ամբացեալք և յըն-

1 B յորսորդն

2 B յազգ

4—5 A զազատութիւն

8 BD կրկի է

8 A յափրոզիտական

8 SCD և երթեալ

9 A չիք և

10 A յայլո ածեմ բուն ձու

10 SBC խրատ տայր

10 BCD չիք նմա

10 SA թէ փխ եթէ

11 BC տայցիս

11—12 A Աստուծոյ մատուցես

12 S իսկ նա

12 AB գեռալոյ փխ ջեռնլոյ C ջեռալոյ

13 C օգտակար փխ ազատէր, լուսանցբում՝ օգտէր

13—14 A վանս այնր սաստիւ յանդիմանի փխ ևս աստի յանդիմանէր

13 S այլ ևս աստի

15 B յառակս

16 S և յորժամ

19 SD Ծիծառն

20 BCD չիք է

21 B չիք է

21 CD է սկզբ փխ ի կատուէ C լուսանցբում՝ է կատուէ

22 S մնային անփնաս փխ անփնաս եղեն /BCD անփնաս մնան

23 S թռչնոյս

23—24 S զի յորժամ

տանհաց նեղիմք թշնամեաց, ի նոցունց յընտանեաց գըտ-  
ցուք ընդդէմ նոցա օգնական մեզ:

ՃԽ

5 Հաւրալ զբոյն տատրակի քակտեալ, և իւր շինեալ, և եղև  
նոցա երթեալ առ արդարն արագիլ ի դատաստան, և անդ  
զմիմեանս նախատէին և պարծէին՝ տատրակ ողջախոհո-  
թեամբ, կրօնաւորութեամբ, և հաւրալ պահօք քառաս-  
նօրէիւք, և նախատի ոմն կեղծավորութեամբ, և ոմն՝ զայլոյ  
10 ուտելոյ զվաստակն: Իսկ դատաւորն երկուցն սաստէ, և  
հարցանէ զհաւրալն, թէ ընդէր քակտեցէր: Եւ նա ասէ.  
Շինուածոյ նշան ինչ ոչ տեսի, և վասն այն առի ինձ: Հար-  
ցանէ դարձեալ. Դ՞ո՞ւ էիր եղեաք զոր առէր: Եւ նա ասէ՝  
Ոչ: Եւ կամ ոչ էր երկու հեծան եգեալ ի վերայ միմեանց,  
15 և ասէ. Եղեալ էր: Հրամայէ անդրէն դարձուցանել, նա և  
տուգանս ևս տալ:

Չդատաստան սեղիդ հրամայէ առակս դատել, և ոչ յատե-  
նի մեծաբանել և կամ թշնամանել զմիմեանս զատախազաց,  
և դարձեալ զի զոր չիցեմք եղեալ՝ ուսուցանէ չառնուլ, և  
զշինուածս յայլոյ, թէ և յոռի իցէ՝ չքակել:

20

ՃԽԱ

Սորդք աողին ի գնալն իւրեանց, և զմիմեանս յառաջա-  
տեն, և միմեանց տեղի տան ի կռիչսն. ոչ նման սմանց  
ատանձնաբար շրջին. և պահ միմեանց ունին:

Յօրինակէ աստի խրատիմք պատիւ միմեանց ամե-  
նայն ուրեք զնել և միմեանց զգուշանալ:

1 A յընտանեացն նեղումք	17 SBD զմիմեանց փխ զմիմեանս
2 SB օգնականս	(C լուսանցում՝ զմիմեանց)
4 A Հուրալ	21 A Գորթք փխ Պորդք
4 A շինեաց	22 S և ոչ
5 A հրագիլ	23 S այլ և պահ
6-7 A և հուրալ կրօնաւորությամբ	24-25 S Սոյնպէս և մեզ պարտ է մի- բանութեամբ և զոյճ կեալ, և պա- տիւ միմեանց զնել, և պահել ի շարէ զանձն ընկերին փխ Յօրինակէ աս- տի խրատիմք պատիւ միմեանց ամենայն ուրեք զնել և միմեանց զգուշանալ
9 A զվաստակ	
10 A զհուրալն	
10 A քակեցէր	
12 A չի՞ նա	
14 A և նա փխ նաև	
16 B դարձեալ փխ դատել	
16-17 SBC յայտնի փխ յատենի	25 BCD ումեք փխ ուրեք

ՃԽԲ

Բուհճակ աղաղակէ՝ Կաս, և միւսն ասէ՝ Կամ. ոակայն ոչ կայ, այլ թողցեալ այլուր երթայ:

5 Զստոց յայտ առնէ առակս. զի բազում անգամ յանձն առնուն գճումարտութիւն, և ոչ առնին:

ՃԽԳ

Արար և կւիւր ի կղզիս հանեն զձագս, աներկեղ սնուցանելով: Ասեն ի թռչիւն. Ահա այսուհետև անպարտեմք, բաւականէք ձեզէն զգուշանալ:

10 Հարկաւոր ցուցանէ առակս՝ յեկեղեցիս սնուցանել զմանկունս քրիստոնէից և ի չափ հասուցանել ընտրութեամբ բարոյ և շարի. և այնուհետև անպարտ լինել ի նոցունց:

ՃԽԴ

15 Զկնաքաղ ի մեծի պատեքի ուտէր ձուկն, և կատար իբր խոտածարակ՝ բամբասէր զնա: Եւ նորա ասացեալ, թէ ի Յունաց և ի Վրաց ուսայ քահանայից, և այսու լաւագոյն ևս եմ, զի և գինի ոչ ըմպեմ:

Զբարս որովայնապարար քահանայից առակս յանդիման կացուցանէ, զի պատճառս ետուն բազմաց գայթաղութեան:

ՃԽԵ

20 Մարտարակ թուշուն ի տուէ պարարի, և ի հոգալ զվաղիւ՝ ի պիշերի մաշի:

25 Զհոգածս առակս յանդիմանէ, զի ոչ է պարս պտեառն մուսանալ զիրատ, եթէ զվաղիւն մի՞ հոգալ, զի ախտ է հոգոյ և մարմնոյ:

ՃԽԶ

Սոխակ և ցախսարեկ, և այլք նմանք սոցին երկարանիչք՝ ոչ միայն երգեն, այլ և սիրեն աննախանձարար զայլոյ երգել:

30 Աննախանձս առակս կամի զմեզ լինել, զի և յերգելն մերում զօրհնութիւնս, և զայլոց և սիրենոց զերգելն:

2 ՅԲ բըւհճակ	A Աւհճակ	18—19 ԵԴ յանդիմանէ կացուցանէ
5 C գճումարտութիւնն		19 Տ զպատճառս
7 A Աւարար		24 Տ մի՛ հոգալ զվաղիւն
7 B կղզիւ փխ կղզիս		24—25 ՏC հոգւոյ
8 Տ և ասեն փխ Ասեն ի թռչիւն		27 A ցախսարեկ ՅԲ ցախ սարեկ
12 ՏC բարւոյ		30 Տ զմեզ կամի
14 ՏC պասի		30 ԵԴ լինի փխ լինիլ C լինիլ
		31 A գերգել

ՃԽԷ

Ճպուռ այնքան երգէ, մինչ զի յօղոյ յղանայ և ծնանի՝  
մերկանալով զմարմին:

5 Զօրհնեղութիւնս սրբոյ առակս կերպարանէ, զի յղանան  
հօգուով զխորհուրդս բարիս, և ծնանին գառաքինութիւնս  
զկիրս մերկանալով զմարմնս:

ՃԽԸ

10 Երկու են րանք թռչնոց, սմն յասել, և ոմն՝ յերգել, որ-  
պէս այն, որ աղաղակէ՝ լծեոս և միւսն՝ կեր ճաշ, և այլք  
նժանն այսմ:

. Զօրինակս այսպէս իմացիս, թէպէտ ասելն և երգելն ին-  
քեանց գիտելի է, ի մեզ այսպէս լսի. զոգի և զմարմին լծել  
ըստ զարնան անձին պարտիմք, և մարմին տեսան ուտել  
ճաշ:

15

ՃԽԹ

Զիսկան թռչուն զժառս փորէ. և ջուր անձրևու փտէ, և  
որգունս ծնանի, և այնու կերակրի:

20 Զբանասրկուն առակս ձևացուցանէ. զի նախ գտիրս հար-  
կանէ, և մեղկութեամբ փակալ զչար խորհուրդս ծնանի, և  
այնու կերակրի. զի մեղք կերակուր նորա է:

ՃԾ

Քաղաղը զհիւանդութիւն բառնայ տեսլեամբ:

Պատշաճի առակս տեսան, որ բանիւ և տեսլեամբ բժշկէր.  
սակայն և հիւանդք զիւրանան ի տեսլենէ սիրելեաց:

25

ՃԾԱ

Արմաւ նոյն է ի ծախել և ի ծնանիլ:

Նշանակ է տեսան, զի նոյն է նախքան զչարչարանս և  
զկնի չարչարանաց. նմանապես և յարութեան մեր, զի նո-  
ւին մարմնով յառնեմք՝ որով և մեռանիմք. նա և ճշմար-  
տութիւն մի է սկզբանն և ի կատարածին:

2 BCD յի՛ մինչ

17 B այնիւ

5 AB հոգով

20 A այսու

5 ABC գառաքինութիւն

24 SBC յի՛ և

6 C զկարիս փխ զկիրս

24 B տեսլանէ

9 B լծես փխ լծեա

26 A Արմաւն

11 A իմացուք

26 AC ծախել

13 SB գրան փխ գարնան C գրոյն,

26 SB ծնանել

լուսամբնով՝ գարնան

26 A յի՛ և (1)

16 A Թիսկն փխ Զիսկան

ՃԾԲ

Մեզու գործասիրութեամբ դժադիկ և դժոժ և զմեզր ժողովէ:

5 Ուսիր յառակէս ըստ կարի բան գրոց ժողովել, և զլոյս օրինաց և զքաղցր վարդապետութիւն փրկչին՝ ի բժշկութիւն ոգւոյ:

ՃԾԳ

Մըջիւն ժիր է յերկասիրութիւն՝ և բազմիմաստ. սակայն երկայնամտութեամբ և համբերութեամբ յանգէ զգործ:

10 Ծանիր և յօրինակէս, զի զոր սկսանիցիս զգործ բարի՝ հոգւոյ և մարմնոյ, մի ձանձրութեամբ թողուցուս:

ՃԾԴ

Զբոյն մըջեան արջ փորէր, և լեզուաւ ժողովէր և ուտէր:

15 Եւ հնարի մըջիւն սատակել զնա. երթեալ առ պիծակ և զոռելիս և փժելիս և շանաճանճ և բրէտ, և առ նմանք սոցիւն, և աղաչէ օգնել իբր աղգայինք: Յաւակցեն՝ հարկանեն զաչս և զլսելիս արջուն, և հարկանէ զլուխ զքարի, և նեխի և սրգունք և ս ծնանին. և ի սաստկութենէ պաւոյ՝ զրեբան բացեալ զոչէր. և նոցա մտեալ յսրովայնն՝ խոցստեն զաղիսն.

20 և նեղեալ զիմէ ի հոսանս ջրոյ, և անշափ ի ներքս մտեալ՝ հեղձանի:

Զօրութիւն առակիս այսպիսի է. զի հզօրք զտկարս՝ արհամարհեն, և ոչ երկնչին. սակայն իմաստութեամբ զօրանան փոքունք, և յաղթեն հզօրաց: Եւ այս իմաստութիւն է՝

25 ի փոքունց իբրև ի մեծամեծաց երկնչեր:

ՃԾԵ

